

ՀԱՅ ԱՕԳԱԳՐՈՒԴՅՈՒՆ



ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԴՅՈՒՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРМЯНСКАЯ ЭТНОГРАФИЯ
и
ФОЛЬКЛОР

МАТЕРИАЛЫ И ИССЛЕДОВАНИЯ

4

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН • 1973

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՊԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՐՈՒԹՅՈՒՆ
Ի ԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4

902 · 7(C43) + 8Apφ
2 82

Խ Մ Բ Գ Դ Ե Կ Ը Կ Ե Լ Ի Կ Ի Կ

Ր. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Է. Տ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Ս. Ր. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. Վ. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ, Ա. Մ. ՆԱԶԻՆՅԱՆ, Դ. Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ


2 $\frac{0162-023}{703,02}-73$ 37-69

Վ. Գ. ՍՎԱԶԼՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՀԱՅԿՈՒՆԻ

(ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ)

Պատասխանատու խմբագիր
Ա. Մ. ՆԱԶԻՅԱՆ





ՄԱՐԳԻՍ ՀԱՅԿՈՒՆԻ
(1838—1908)



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ բանագիտության պատմությունը նշանավորվում է մի շարք երախտավորներով, որոնք անձանձիր ու տքնաշան աշխատանքով գրի են առել ժողովրդական բանահյուսության և ազգագրության վերաբերյալ հարուստ ու բազմազան նյութեր: Այդ անխոնջ վաստակավորները, երբեմն մնացել են մոռացության մատնված: Նրանցից մեկի կամ մյուսի անունը դիպվածաբար է հիշատակվել, երբ այս կամ այն գիտնական բանագետը տպագրության է հանձնել բանահավաքի վաստակներից որևէ հոշարձան:

Բանահավաքների կատարած աշխատանքի, նրանց գործունեության լուսաբանումն ու արժեքավորումը մեր բանագիտության, ինչպես նաև հասարակական մտքի զարգացման պատմության կարևորագույն խնդիրներից է:

Այդ առումով ներկա աշխատության մեջ փորձ է արվում հնարավոր չափով ուսումնասիրելու հայ բանագիտության ականավոր դեմքերից մեկի՝ հասարակական գործիչ, մանկավարժ, ազգագրագետ ու բանահավաք Սարգիս Հայկունու կյանքն ու գործը:

Սույն ուսումնասիրության համար հիմք են ծառայել առաձևին գրքերով լույս ընծայված կամ պարբերական մամուլում ցրված Ս. Հայկունու հրապարակախոսական, բանահյուսական ու ազգագրական դրվածքները, ինչպես նաև նրա մասին եղած հատ ու կենտ հիշատակությունները: Աշխատանքի ընթացքում մեծապես օգտվել ենք նաև բանահավաքի արխիվից, որը պահպանվում է գրականության և արվեստի, ինչպես նաև պատմության թանգարաններում: Լրա-

ցուցիչ նյութեր ենք քաղել նաև նրա ժամանակակիցներ՝ Գր. Խալաթյանցի, Խրիմյան Հայրիկի, Գր. Արծրունու (Մշակա-ի), ինչպես նաև Մկրտիչ Փորթուզալյանի արխիվային ֆոնդերից:

* * *

Սարգիս Հայկունին ապրել է հայ իրականության մի այնպիսի ժամանակաշրջան, երբ հայ ժողովուրդն իր ազգային զարթոնքն էր ապրում (19-րդ դարի 60-ական թվականներ): Հասարակության տարբեր խավերը յուրատեսակ մոտեցմամբ մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում ժողովրդի անցյալի, նրա պատմության ու հոգևոր մշակույթի՝ այդ թվում նաև ժողովրդական բանահյուսության նկատմամբ:

Ժողովրդական բանահյուսության հասարակական-քաղաքական դերն ու նշանակությունը նկատի ունենալով ուս առաջավոր մտածող հեղափոխականները բարձր են գնահատել այդ ստեղծագործությունները: Իր փիլիսոփայական խոհերում Ն. Ա. Դորոյուրովը նշում է. «Կենդանի իրականության մեջ ժողովուրդը ոչ մի միջոց չէր տեսնում հաղթահարելու իր հարստահարիչներին և ստիպված էր անմոռուն խոնարհվել նրանց ուժի առջև: Բայց նրա համար դժվար էր այս հնազանդությունը և նա չէր դադարում երագել ազատագրության միջոցների մասին: Որքան հեռու էին այդ երազանքներն իրականությունից, այնքան ավելի էին նրանք մանկական բնույթ ընդունում. նրանց մեջ

պարտիզանական ջոկատներում գործող հայ բանականներին են հանձնել, որպեսզի նրանք հայրենիք հասցնեն: Լեյտենանտ Ա. Կարապետյանի ջանքերով Ս. Հայկունու թողած դրական ժառանգության այդ մասն անվթար հանձնվել է ՀՍՍՀ ԳԱ գրականության և արվեստի, ինչպես նաև պատմության թանգարանների պահպանությանը, իսկ մնացած մասը՝ կորել է:

¹ Արխիվային նյութերի այդ բաժինը, Ս. Հայկունու Մարտի քաղաքում բնակվող հարազատները, Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո, Ֆրանսիայի

հրապարակ էին գալիս և՛ կախարդներ, և՛ դարձվորներ, և՛ անբնական մեծության դյուցազուններ, և՛ իմաստուն ձիեր, և՛ հերետիկոսական աղոթանքներ²։

Արտաքուստ կրավորական թվացող, բայց ներքին զսպված ուժ պարունակող ժողովրդական ստեղծագործության իմաստը ճիշտ ըմբռնելով՝ Ն. Ա. Դոբրոլյուբովը կոչ էր անում. «Ապրել ժողովրդի կյանքով, հավասարվել նրան, դեն շարտել դասերի, գրքային ուսման և այլ բոլոր նախապաշարմունքները, զգալ բոլորը այն հասարակ զգացմունքներով, որ ունի ժողովուրդը»³։

Վ. Գ. Բելինսկին անհուն երախտագիտության մեջ էր խոսում հոգևոր այդ գանձերը հավաքողների մասին. «Ինչպիսի շնորհակալության են արժանի այն համեստ անշահախնդիր մշակները, որոնք շթուլացող հետևողականությամբ, մեծագույն դժվարություններով և զոհողություններով հավաքում են ժողովրդական պոեզիայի գանձերը և փրկում դրանք մոռացության կործանումից»⁴։

Հայ մեծ հեղափոխական Մ. Նալբանդյանը ևս իր ժամանակի հատարական-քաղաքական բարձունքներից դիտելով ժողովրդական բանահյուսության, Պերճ Պոռչյանի «Սոս և Վարդիթերի» մասին գրած իր նշանավոր «Կրիտիկա»-յում ասում է. «Արգո հեղինակը, հետևելով Պ. Աբովյանի ուղղության, իր բովանդակ գործի մեջ միշտ աչքի առնել ունեցել է գործ դնել ազգային առածներ, ասացվածքներ։ Մենք լիասիրտ շնորհակալությամբ ենք հայտնում մեր հեղինակին»⁵։

Սկսած դեռևս 5-րդ դարից մեր մատենագիրները՝ մասնավորապես Մովսես Խորենացին օգտագործել են ժողովրդական բանահյուսությունը։ Հետագայում այդ ավանդույթը ժառանգաբար փոխանցվելով, և նոր ժամանակների պահանջներին համեմատ, հրապարակ է հանում բանահավաքությունը՝ մասնագիտական իմաստով։ Հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանը խոշոր աշխատանք է կատարել այդ ուղղությամբ։ Այնուհետև, բա-

նահավաքության մեծ վաստակավոր Գարեգին Սրվանձտյանցը՝ «Ժամանակի մաշող ժանիքին ազգային դարավոր բանից և ավանդից հիշատակները» փրկելով, և հետագա բանահավաքների գործունեության ընթացքը ուղենշելով, 1874 թ. Կ. Պոլսում հրատարակում է «Գրոց-բրոց», ապա երկու տարի անց նաև «Մանանա» ժողովածուները։

Գ. Սրվանձտյանցի այս գործնական նախաձեռնությունը ոգևորում է արևմտահայ ու արևելահայ մի շարք մտավորականների։ Նրանցից շատերն իրենց գավառներում ըսկըսում են գրի առնել ու հրատարակել տեղական բանահյուսության նմուշները, առանձին գրքերով կամ ժամանակի հայ պարբերականների էջերում։

1877—1879 թվականներին «Մեղու Հայաստանի» լրագրի և «Փորձ» ամսագրի էջերում լույս են տեսնում ժողովրդական հեքիաթներ, աշխատանքի ու հարսանեկան երգեր, հանելուկներ և այլ նյութեր։ Բացի այդ ժամանակի պահանջը թելադրում էր, որոշ դաստիարակչական նպատակներով, դպրոցական դասագրքերում արժանի տեղ հատկացնել նաև ժողովրդական բանահյուսության նմուշներին։ Այդ ուղղությամբ առաջին փորձը կատարեց Ս. Մանդինյանը։ Նա գրական լեզվի վերածելով Գ. Սրվանձտյանցի «Գրոց-բրոց»-ում տպագրված «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» ժողովրդական վեպի առաջին պատումը, զետեղեց 1880 թ. իր կազմած «Ազգային դիցաբանական աշխարհ» մայրենի լեզվի դասագրքում։

Այդ թվականներին իրար են հաջորդում բանահյուսական նյութերի հրատարակությունները. 1880 թ. Վենետիկում լույս է տեսնում Ս. Զուլարտյանի «Առածք ազգային» սովոր ժողովածուն, 1882—83 թվականներին՝ Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի Ա և Բ գրքույկները և «Հայ ժողովրդական ավանդություններ»-ի առաջին պրակը, 1884 թ. Հ. Ալավերդյանի «Ուլնիկ կամ Զեյթուն», Գ. Սրվանձտյանցի «Համով-հոտով», Գ. Շերենցի «Վանա սազ» (1885 թ.), Գ. Տեր-Աղեքսանդրյանցի «Թիֆլիզեցոց մտավոր կյանքը» (1886 թ.) և այլն։

Այդ միջոցին, երբ Կ. Պոլսում, Վենետիկում և Թիֆլիսում զանազան պարբերականների էջերում և առանձին գրքերով լույս էին տես-

² Ն. Ա. Դոբրոլյուբով, Փիլիսոփայական ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 100։

³ Նույն տեղում։

⁴ В. Г. Белинский, Полн. собр. соч., М., 1953, с. 507.

⁵ Մ. Նալբանդյան, Կրիտիկա, Երևանի լիակատար ժողովածու, Գ, Երևան, 1940, էջ 124։

նում բանահյուսական հիշյալ ժողովածուները, ապա Մոսկվայում, ռուսական մշակութի այդ օրրանում, հատկապես Լազարյան ճեմարանում, աճում ու զարգանում էր հայ բանագիտական միտքը:

Դեռևս 1850 թ. իր «Վէպը հնոյն Հայաստանի» բովանդակւից «քննությամբ» հայտնի դարձած, Լազարյան ճեմարանի արևելյան լեզուների պրոֆեսոր Մկրտիչ էմինը, հայագիտական ու բանագիտական երկարատև ու տքնաջան հետազոտությունների կատարելուց հետո, 1881 թ. ռուսերեն լեզվով լույս է ընծայում «Моисей Хоренский и древний эпос армянский» ռուսամասիրությունը:

Այդ նույն թվականին Լազարյան ճեմարանի դասախոս հայկաբան Գր. Խալաթյանցը, ռուսական գիտական հասարակայնությանը ծանոթացնելու նպատակով, հրատարակում է Սասունցի Դավթի ռուսերեն թարգմանությունը («Давид Сасунский, армянский народный эпос») իր գրած առաջաբանով և ծանոթագրություններով:

Գր. Խալաթյանցը քաջատեղյակ էր ռուսական բանագիտության պատմությանը: Վերջին տասնամյակների ընթացքում ռուս բանահավաքների (Աֆանասևի, Յակուշկինի, Ռիբնիկովի, Կիրեևսկու, Գիլֆերդինգի, Շեյնի և ուրիշների) մշակած գրառման լավագույն տրադիցիաներից ներշնչված, նա 1882—83 թվականներին կազմում է ժողովրդական նյութերը գրի առնելու սկզբունքների մասին մի ծրագիր, որը դեռևս ձեռագիր վիճակում ուղարկում է Ալեքսանդրապոլ, Նրեան, Ղզլար, Քիշնև՝ նոր թափ հաղորդելով ժողովրդական նյութերի հավաքմանը այդ վայրերում:

Հիշյալ համառոտ ծրագիրը, ժամանակի ընթացքում վերամշակելուց և ամբողջացնելուց հետո, Գր. Խալաթյանցը 1887 թվականին Մոսկվայում լույս է ընծայում «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական օրվորությունների» ընդհանուր խորագիրը կրող աշխատությունը:

Գիտական որոշ սկզբունքներով կառուցված այդ հարցարանը նպատակ ունի բեկանակնալոր ընթացք տալ մինչ այդ մեղա-

նում ազգագրական ու բանահյուսական նյութերի հավաքման (նաև ռուսամասիրման) տարերային բնութիին:

Ինչպես հայտնի է, մեր մի շարք բանաստեղծներ ուսուցչական աշխատանքին և կամ եկեղեցական - կրոնական պարտականություններ կատարելուն զուգընթաց, թափանցել են աշխատավորական խավերի մեջ, հայտնաբերել ու գրի են առել ժողովրդական պատահած նյութերը: Գրառման միասնական ու կայուն սկզբունքներ չլինելու պատճառով նրանցից շատերը լսածը հարազատություն թողին հանձնելու փոխարեն հաճախ վեճապատմել, մշակել և կամ խմբագրել են՝ ըստ իրենց ճաշակի և հասկացությունների: Նրանք կարևոր չեն համարել գրի առնել բանահյուսական բոլոր ժանրերը, իսկ գրառման ժամանակ էլ չեն ունեցել որոշակի սկզբունքներ՝ նյութերը ժանրային դասակարգման ենթակելու: Անտեսել են նաև բարբառագիտական պահանջները, չեն պահանջել գրառման ժամանակ բարբառների հնչյունաբանական նրբերանգները: Բացի այդ նրանց ուշադրությունից համարյա վրիպել են ազգագրական նյութերը, գրեթե ամբողջությամբ աչքաթող են արվել ազգային իրավաբանական սովորությունները (հողային հարաբերությունները համայնքների մեջ) և այլն:

Հիշյալ թերություններն առավել կամ պակաս չափով նկատելի էին մինչ այդ լույս ընծայվող ազգագրական ու բանահյուսական հավաքածուներում:

Ահա թե ինչու Գր. Խալաթյանցի կազմած ծրագիրն իր ժամանակին կարևոր նշանակություն ունեցավ՝ հստակ կողմնորոշելով ազգագրական ու բանահյուսական նյութերի գրառման հետագա ընթացքը:

80—90-ական թվականներին իրար են հաջորդում զանազան հրատարակություններ: Դրանցից հիշատակելի են Տիգրան Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթների» պրակները:

1888 թվականին Շուշիում կազմակերպված ընկերական գրական երեկոներից մեկում Մ. Աբեղյանը կարգում է «Սասնա ծռեր» հերոսավեպի երկրորդ պատումը (գրի էր առել 1886 թ. մոկաց բարբառով): Այն մեծ հետաքրքրությամբ է ընդունվում, որի անմիջական ազդեցությամբ Լեոն մի հոգևած է գրում «Մի նոր հարստություն մեր ժողովրդ-

⁶ «Журнал министерства народного просвещения», С. Петербург. 1881.

դական գրականության համար»՝ վերնա-
գրով, այնուհետև նա շարադրում է սակ
երկրորդը՝ Իր զույգ հողվածներով Լեոն ոչ
միայն մեջ է բերում այդ նոր պատումի բո-
վանդակությունը, այլև դիպուկ բնութագրա-
կաններով դրվատում է նրա գեղարվեստա-
կան առանձնահատկությունները:

1889 թվականին Շուշիում լույս է տեսնում
Մ. Աբեղյանի գրի առած վերահիշյալ պո-
տումը: Մեր վեպի մինչ այդ հրապարակի
վրա եղած երկու տարբերակների հիման
վրա, մեծանուն գիտնականը գրում է «Ազգա-
յին վեպ» իր ուսումնասիրությունը, որը և
լույս է տեսնում նույն թվականին «Մուրճ»
ամսագրում⁷:

Այնուհետև 1892 թ. հրատարակվում են
Ծր. Լալայանի «Ջավախքի բուրմունք» վեր-
նագրով ժողովրդական երգերի և ավանդու-
թյունների հավաքածուն, Գ. Հովսեփյանի
«Փշրանքներ ժողովրդական բանահյուսու-
թյունից», ինչպես նաև «Սասնա ծռեր» ժողո-
վածունները, որոնցից առաջինը պարունակում
էր հայ ժողովրդական մի շարք վիպերգեր.
(«Ասլան աղա», «Մուկաց Միրզա», Կարոս
խաչ», «Նարեկացի» և այլն), ինչպես նաև
զանազան երգատեսակներ, հեքիաթներ ու
հանելուկներ, իսկ երկրորդը՝ հայ ժողովրդա-
կան հերոսավեպի երկու նոր պատում՝
Մուկաց ու Ապարանի բարբառով:

Այդ թվականներին լույս են ընծայվում
նաև մի շարք կարևոր աշխատություններ,
որոնցից առանձնապես ուշադրության են ար-
ժանի Ս. Հայկունու «Բագրևանդ-ջրաբաշխ
գավառ» (1894 թ.) և Հ. Ծանիկյանի «Հնու-
թյունք Ակնա» (1895 թ.) հնագիտական,
ազգագրական ու բանահյուսական բազմա-
զան նյութերի հավաքածուները:

Սակայն այդ բոլորը չէին բավարարում
նոր ժամանակի պահանջներին:

Նոր ժամանակները նոր պահանջներ էին
թելադրում. անհրաժեշտ էր ցույց տալ հայ
ժողովրդի մտավոր ու հոգևոր կարողություն-

ները, անհրաժեշտ էր կազմակերպել «ազգի
ուսումնասիրության գործը», իսկ այն այլևս
հնարավոր չէր առաջ տանել միայն բանա-
հյուսական ու ազգագրական հատուկներ
ժո-
ղովածուններով: Զգացվում էր մասնագիտա-
կան հանդեսների հրատարակման անհրա-
ժեշտությունը: Հանդես-ժողովածուներ, ո-
րոնք լույս աշխարհ կհանեին ժողովրդական
կյանքի ու կենցաղի մինչ այդ չուսումնասիր-
ված անհայտ անկյուններն՝ իրենց յուրօրի-
նակ մտածելակերպով ու ինքնատիպ բառ ու
բանով:

Այդ հարցում նշանակալից դեր կատարե-
ցին Եվրոպայի ու Ռուսաստանի զանազան
կենտրոններում կրթություն ստացած և հայ-
րենիք վերադարձած հայ առաջավոր մտավո-
րականները, որոնք ձեռնամուխ եղան ազգա-
շեն ու կարևոր այդ գործին:

Արևելահայ մշակույթի զարգացման օր-
րանում՝ Թիֆլիսում, երիտասարդ ազգա-
գրագետ Երվանդ Լալայանի ջանքերով
1895 թվականին սկիզբ դրվեց «Ազգա-
գրական հանդեսի» պարբերական հրատա-
րակությանը:

Ժամանակի այդ հրատապ պահանջը նկու-
տի ունենալով Ա. Կրքին կցած իր «Երկու
խոսքում» հրատարակիչ Ծր. Լալայանը գրում
է. «Հայոց ազգն էլ վերջապես զարթնել է
խոր քնից և ցանկանում է կատարել գիտու-
թյան ամենիմաստ խոսքը «Մանիր զբեզ»
նա կամենում է ճանաչել իրեն և յուր ազգա-
յին հատկությունների վրա հիմնել ազգային
զարգացումը: Մեր այս գործն այդ զգացման
արդյունքն է և մեր կոչումը՝ այդ գործին
գիտական ուղղություն տալ և աշխատողների
մեջ միություն հաստատել»⁸:

Եվ իրոք, այդ բազմաբովանդակ ու պատ-
կերազարդ «Հանդեսն» իր շուրջն հա-
մախմբեց բանահավաք-ազգագրագետներ,
պատմաբաններ, գրականագետներ, լեզվա-
բան-բարբառագետներ, բժիշկներ ու մանկա-
վարժներ, մարդիկ, որոնք, սիրելով իրենց
հայրենիքն ու ժողովուրդը, ապրում, աշխա-
տում ու ոգևորվում էին նրա հետ և նրա հա-
մար:

Սկզբունքորեն այդ նույն նպատակին
ծառայեց նաև Կ. Պոլսի «Բյուրական» երկշա-

⁷ «Մշակ», Թիֆլիս, 1888, № 147, էջ 1—3:

⁸ Լևոն Վանդանյանի «Հրատա-
րակվում է Մուկավայի «Հանդես» գրական և պատմա-
կան»-ում, ապա լույս է տեսնում առանձին գրքով
1891:

⁹ «Մուրճ», Թիֆլիս, 1889, № 10, էջ 1592—1608,
№ 11, էջ 1738—1768, 1890 № 1, էջ 38—49, № 6,
220—230:

¹⁰ «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1895, դիրք Ա,
էջ 5:

բաթաթերթը, որը 1897 թվականից նոր շրջան բացելով, իր էջերն ամբողջությամբ տրամադրեց ազգագրական ու բանահյուսական նյութերին:

Ապրելով առաջավոր հասարակական մտքի զարգացման այնպիսի կենտրոնում, ինչպիսին Մոսկվան է, Գր. Խալաթյանցը ևս նպատակ է դնում, ինչպես ռուսական բանահյուսության աչքի ընկնող պարբերական ժողովածուների, նույնպես և Թիֆլիսի «Ազգագրական հանդեսի» նմանությամբ, հրատարակել բանահյուսական ու ազգագրական նյութերի վերաբերյալ մի նոր պարբերական:

Խոշոր հայագետ Մկրտիչ էմինի կտակի համաձայն, նրա թողած դրամագլխի մի մասը տրամադրվելու էր էմինի հուշարձանին, նրա երկերի լիակատար հրատարակությանը, ինչպես նաև Վենետիկում Մխիթարյանների կողմից լույս ընծայվելիք հայկական պարականոններին, իսկ դրամագլխի մնացած մասը հատկացվելու էր ազգագրական-բանահյուսական ձեռագիր ժողովածուների տպագրությանը՝ թրույն տպագրության գործը հանձնելով դոցա աշխատասիրողներին¹¹:

¹¹ Ծ. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Գր. Խալաթյանցի ֆոնդ, բաժին 5, վավ. 97 ր:

էմինյան կտակի անօրեն Գր. Խալաթյանցը Նդիշե Մադաթյանին հղած իր նամակում գրում է. «Սորանով իրագործվում է իմ վաղուցվա փայփայած հույսս, որ «Ծրագրերիս» առաջաբանում հայտնել էի, բայց մասամբ զբաղմունքներիս և գլխավորապես նյութական միջոցների պակասության պատճառով հետաձգվում էր մինչև այժմ»¹²:

Այդ ուղղությամբ կատարվող աշխատանքները տալիս են իրենց շոշափելի արդյունքը: Մոսկվայի կազարյան ճեմարանի և էմինյան կտակի տնօրեն Գր. Խալաթյանցի ղեկավարությամբ, որոշվում է տարբեր վայրերում լույս ընծայել «էմինյան ազգագրական ժողովածուի» հերթական հատորները: Այս հրատարակության գլխավոր նպատակն էր ժողովրդական հում նյութ մատակարարել հետագա ուսումնասիրողներին:

Ս. Հայկունին, որն արդեն հայտնի անուն էր իր գրի առած բանահյուսական ու ազգագրական նյութերով, անմիջականորեն կապվում է այս պարբերականին, որի շորս ստվար հատորները լույս աշխարհ են հանում նրա գրի առած հայ և քուրդ ժողովուրդների բանահյուսական նմուշները:

¹² Նույն տեղում:

Հայ բազմամասնական բանահավաք, ազգագրագետ, մանկավարժ, հրապարակախոս, հասարակական գործիչ Սարգիս Հայկունին (Սարգիս Ղազարյան) ծնվել է 1838 թվականին, Տրապիզոնի Զեֆանոս գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում: Չորս տարեկան հասակում զրկվում է հորից, մայրը լքում է նրան ու երկու տարեկան եղբորը, ամուսնանում գնում ուրիշ գյուղ: Անօգնական մնացած երեխաները հանձնվում են իրենց Հակոբ հորեղբոր ու նրա դաժան կնոջ հսկողությանը: Վերջինս այնպիսի անխղճություն էր վերաբերվում որբերին, որ հետագայում, Զատիկի հետ կապված սովորություններն ու ժողովրդական ուրախ տոնախմբությունը նկարագրելիս, արդեն տարեց ազգագրագետն անուղղակիորեն անդրադառնում է իր տխուր մանկությանը. «...Նա ու եղբայրս նույն ժամանակ փոքր էինք, թեև այնչափ ազգականներ ևս չունեինք, սակայն մենք ևս համբույրվեցինք չէինք, մենք որ որք էինք հեռի ու մոտ բարեկամներ մեր վերա խղճալով կհամբուրեին, ձու կնվիրեին, ես, որ մեծ մխիթարություն կզգայի անչափ ձվեն չէ, այլ՝ համբույրեն, կզգայի, որ իմ վրա ցուվող կա՞ն»:

Մարդկայնորեն հասկանալի է՝ ծնողական ջերմ հոգատարությունից զրկված և օտարականի համբույրին կարոտ մանկան տառապանքը, որն ավելի է ընդգծվել ծայրագույն շունեորության պայմաններում: «Կիշեմ,—գրում է Ս. Հայկունին իր կենսագրականում,—որ մենք գյուղի չքավոր դատականագին կպատկանեինք, քանի որ փոքր էինք ես ու եղբայրս միայն մի շապիկ հագած էինք, այլև գլուխներս բաց էր, մեր 8-9

տարեկան եղած միշտցը մեր հորեղբայրը մեզ համար գնեց կտավ: Ընկույզի պտղի վերայի կանաչ կեղևն եփելով այդ կտավը սեցուցին, մենք առաջին անգամ իբրև վարտիք հագանք»²:

Ս. Հայկունին իր մանկության տարիներն անց է կացրել հոգնաբեկ ու շարքաշ աշխատանքով՝ հարուստների հոտն է արածացրել արոտավայրում կամ անտառից կոտրատած փայտը շալակելով քաղաք տարել, վաճառել, որպեսզի իր ուժերը ներածին չափով օգնած լինի հորեղբոր ընտանիքին:

Այդ ժամանակաշրջանում ծանր էր Թուրքիայի տիրապետության տակ ապրող հայության վիճակը:

Հայ գյուղացիները պարտավոր էին վճարել աշար³, գլխահարկ, զինվորական հարկ, ինչպես նաև անասունների, արոտավայրերի, ճանապարհների և այլնի համար բազմաթիվ տուրքեր: Բացի այդ, գյուղացիներն իրենց աշխատանքային գործիքներով ու անասուններով կոռ էին կատարում: Մեծ թիվ էին կազմում նաև հողազուրկ՝ մարաբա կոչված գյուղացիները⁴: Օտարներից ետ չէին մնում նաև հայ վաշխառուները:

Նյութական կարիքն ստիպում է Հայկունու հորեղբոր ընտանիքին տեղափոխվել Կոմերա կոչված գյուղը, որտեղ մանկահասակ Սարգիսն ու իր հորեղբայրը երկու տարի մարաբա

² Նույն տեղում, վավ. 107:

³ Բերքի 1/10 մասը:

⁴ Մարաբան հողազուրկ այն գյուղացին է, որը կավածատիրոջ գյուղատնտեսական գործիքներով ու անասուններով մշակում է նրա հողը և ստացած բերքի 2/3 մասը տալիս է կավածատիրոջը: Բացի այդ նա կավածատիրոջ համար պարտավոր է կոռ ու բեգյար կատարել:

¹ ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 631:

են աշխատում Ահմեդ աղայի կալվածքում: Թուրքաբնակ այդ գյուղում, հայերեն իմացող չգտնելով, ուսման ծառայի պատանին, իր ամենօրյա ֆիզիկական ծանր աշխատանքից հետո, ոտքով անցնում էր երկար ու ամալի տարածություն ու մի հայաբնակ գյուղում գրաճանաչություն սովորում:

Կոմերա գյուղի անբերրի հողն անարդյունավետ է դարձնում նրանց աշխատանքը: Ստացված չնչին բերքը, թուրք աղային հանձնելով, առանց որևէ վաստակի, նրանք հեռանում են այդ գյուղից:

Հասարակական-տնտեսական նմանօրինակ պայմանները ծնում էին հողապուրկ ընչազուրկ գյուղացիների հոսքը դեպի քաղաք, 18-ամյա Սարգիսը ևս, այլ ելք չունենալով, 1857 թվականին գնում է Տրապիզոն՝ ապրուստ հայթայթելու: Առևտրական այդ կենտրոնում սկզբում նա աշակերտում է մի պղնձագործի, ապա աշխատանքի է առնում մեծահարուստ Ս. Մեղավորյանի վաճառատանը: Այստեղ նա հնարավորություն է ստանում երեկոները հաճախել տեղի ուսումնարանը:

Այնուհետև, 1860 թվականից Հայկունին հտնվեց տար-օգնական է նշանակվում Տրապիզոնում մսի առևտրով զբաղվող իր հարուստ հորեղբոր մոտ: Այդ տարիներին արդեն խելահաս դարձած Հայկունին տարերայնորեն գիտակցում է, որ իր հորեղբոր կուտակած փողերը ոչ թե արդար վաստակով են ձեռք բերված, այլ՝ արդյունք են բազմաթիվ աշխատավորների դառն քրտինքի: Այդ մտքերի հետևանքը լինում է այն, որ Հայկունին հորեղբորից գաղտնի, իրեն վստահված չահուժաբեր գումարների մի մասն աննկատելիորեն «վերցնում է» և դրանով խնամում պանդուխտ հայերին, որոնք հայրենիքից հեռու առևտրական այդ կենտրոնում աշխատում ու տառապում էին: Ս. Հայկունին իր հուշերում գրում է. «Այդ ստակները խիստ կարոտելոց կտայի, աղքատ տեսած ատենս խղճահարվելով կուլայի... կուղբի հիվանդ պանդուխտներու սենյակից դուրս չգալ...»: Երբեք չհրապուրվելով հարուստ հորեղբոր շահավետ գործերում հարմարավետ կյանք ստեղծելու հեռանկարով, Հայկունին միշտ առաջնորդվել է ազնիվ ու վսեմ գաղափար-

ներով: Նրա միակ բաղձանքն էր կրթություն ստանալ, լուսավորվել և իր ուժերը նվիրաբերել ժողովրդի բարօրության գործին: Ս. Հայկունու այդ վսեմ ձգտումների իրականացմանը նպաստում է Տրապիզոնում հիմնադրված «Խորենյան ընթերցասրահը»: Հայկունին այդ դասընթացներին հետևելու իրավունք էր ձեռք բերել՝ պայմանով, որ ամեն օր մաքրի ու սրբի դասարանների հատակը: Այնտեղ նա ուսումնասիրում է հայոց լեզվի քերականության կանոնները: Կարդում է բազմաթիվ գրքեր ու ամսագրեր, ընդլայնում իր մտահորիզոնը՝ «Կարգալու վրա անշափ սեր ձգած էի,—գրում է նա,—կհիշեմ՝ շատ անգամ հորեղբայրս ճրագը կմարեր, ես դուրսը լուսնկայի լույսով պիրք կկարդայի»:

Պատանու աճող մտքի ձևավորմանը նպաստում էին նաև շրջապատող քաղաքական-հասարակական պայմանները: Ժողովրդի մեծ ազգային ինքնագիտակցության ոգին արթնացնելու և նրան պայքարի մղելու գործում, ժամանակի առաջավոր մշտածողները խոշոր տեղ էին հատկացնում լուսավորությանն ու դպրոցին: Արևմտահայության տնտեսական ու կրթական վիճակը բարվոքելու նպատակով, 60—70-ական թվականներին տարբեր տեղերում ստեղծվում են մշակութային կազմակերպություններ: Հիմնադրվում է «Բարեգործական ընկերությունը», որն իր գործունեությունն է ծավալում հայաբնակ գրեթե բոլոր վայրերում: Տրապիզոնում սկսում է գործել «Խորենյան ընթերցասրահը», որտեղ պանդուխտ հայերին նախական գիտելիքներ էին տրվում հայ ժողովրդի պատմության, հայոց լեզվի ինչպես նաև հայրենի երկրի աշխարհագրության վերաբերյալ:

Սարգիս Հայկունին առաջիններից էր, որ ավարտելով այդ ուսումնարանի անսխտեմ «դասընթացը» մեկնում է Շանա գյուղը՝ լուսավորություն տարածելու: Այդ նույն տարիներին «Երկունք Թ դարի» պատմավեպի հեղինակը՝ Ծերենցն իր ֆյուլական լայն հնարավորություններով մեկնում է Կիլիկիա՝ երկրագործական տիպարային ազարակ և ուսումնարան ստեղծելու:

Ժամանակը ծնել էր իր հերոսները՝ ոմանք

5 ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 107:

6 ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 107:

իրենց գիտելիքներով, մյուսներն իրենց նյութական կարողությամբ՝ ով ինչպես կարող էր զինվորագրվում էր ազգաշինության գործին:

1864 թ. բողոքական դարձած Շանա թրքախոս հայ գյուղի բնակիչներն իրենց ազգային ու հոգևոր այլասերումը կանխազգալով⁷, խնդրում են Հայկունուն իրենց գյուղում Կարոյ հիմնադրել, Ուրիշներին սովորեցնելու համար իր գիտելիքներն անբավարար համարելով, Հայկունին սկզբում համեստորեն մերժում է այդ առաջարկը: Գյուղացիները համառում են և դիմում տեղի ազգապետ Կյուրջյան Պողոս աղային ու Մեսրոպ սրբազան առաջնորդին, որոնք հրավիրում են Ս. Հայկունուն իրենց մոտ և ստիպում ընդունել շանացիների խնդրանքը: «Ըստ իմ սովորության,— գրում է Հայկունին,— ազգային իշխանությունից առաջարկված ունե խնդիր չէի կարող անտես անել. ընդունեցի, գնացի Շանա, ավելի նրա համար, որ բողոքական անունը վերցնեմ այդ գյուղեն»⁸:

Իր առաջին իսկ ուսուցչական առաքելությունը, ժամանակի հասարակական-քաղաքական, ազգային-ազատագրական գաղափարներով իմաստավորելով, Ս. Հայկունին Շանայում սկսում է իր գործունեությունը: Դպրոցական շենք չլինելու պատճառով, սկզբնական շրջանում աշակերտներին հավաքում է մի տան մեջ՝ գրաճանաչություն սովորեցնում: Այնուհետև նա ինքնամոռաց կերպով նվիրվում է մանկավարժական ասպարեզին, կազմակերպում է հանգանակություններ, որոնց հասույթով, կառուցել է տալիս դպրոցական երկհարկանի շենք, նա մինչև անգամ վաճառում է իր միակ սեփականությունը՝ փոքրիկ արտն իր կառուցումով, և այդ գումարով իր սիրեցյալ աշակերտների համար գրքեր ու գրենական պիտույքներ գնում:

Իհարկե, հեշտ չէր թուրքախոս բնակիչների երեխաներին հայերեն գրել-կարգալ սովորեցնել, բայց Հայկունու գործադրած համառճիգ ու ջանքի շնորհիվ աշակերտներից մի

քանիսն այնքան են առաջադիմում ու կատարելագործվում, որ նույնիսկ իրենք շարունակում են իրենց ուսուցչի սկսած գործը:

«Շատ անգամ իմ վրա կգարմանայի,— գրում է Հայկունին,— կհամոզվեի, թե ուսուցիչ լինելու պատրաստություն չունիմ, ինչպես պիտի կարողանամ դաս տալ, սովորեցնել, կերակրել իմ փոքր պաշարով՝ հետաքրքիր տաճկախոս աշակերտներին: Սիրտս կտրոփեր, երբ դասի կբարձրանայի, երես կկարմրեր ու քրտինքս կկաթկթեր վրայս, երբ դժվար խնդիր մը ծագեր, չէի կարող ինձ թույլ տալ ասել աշակերտներուն, թե ես չեմ գիտեր: Կգուշակեի, թե ուրիշ գաղափար պիտի կազմեն վրաս»⁹: Ահա թե ինչու Հայկունին հաճախ ստիպված է եղել խնդրի լուծումը հետաձգել հաջորդ օրվան, քաղաք գնալ, ուրիշների հետ խորհրդակցել ու վերադառնալ՝ ստույգ ու հավաստի պատասխան իր հետ ունենալով:

Իր կրթական ցածր մակարդակը հոգեպես շատ է ընկճել Հայկունուն: Գիտելիքների պակասն զգալի չդարձնելու նպատակով հաճախ հանձնարարել է դասարանի աշակերտներին՝ ուշադիր լսել միմյանց պատասխանները և կամ փոխադարձաբար ընթերցելով գրավոր աշխատանքները՝ ուղղել միմյանց սխալները: Մանկավարժական այս բնույթն մեթոդն զգալիորեն բարձրացրել է աշակերտների գիտակցականությունը և նպաստել նրանց կամային ուշադրության զարգացմանը:

Վրա է հասնում 1868 թվականի համաճարակը, մեծ թվով երեխաներ ու երիտասարդներ ծաղիկ հիվանդության զոհ են դառնում: Գյուղի բնակչության ճակատագրով խորապես մտահոգված ուսուցիչը, առանց ժամանակ կորցնելու, մեկնում է քաղաք, իր նյութական սուղ միջոցները հատկացնում դեղանյութի և պատվաստելու եղանակը սովորելով վերադառնում: Հայկունուն հաջողվում է համոզել սնահավատ ու նախապաշարված գյուղացիներին և ավելի քան 600 հոգու ձրի պատվաստելով վերացնել համաճարակը: Մարդասիրության, ժողովրդասիրության բազմաթիվ օրինակներով են առլեցուն անձնուրաց ուսուցչի կյանքի այդ յոթ տարիները: Տարիներ, որոնք նա

⁷ Այդ շրջանում արևմտահայության մեջ կրոնական վեճեր ու հակասություններ կային լուսավորչական, կաթոլիկ ու բողոքական համայնքների միջև, որը ամեն կերպ հրահրվում ու բորբոքվում էր սուլթանական կառավարության ու եվրոպական տերությունների կողմից:

⁸ ԳԱԹ, Հայկունու ֆոնդ, վավ. 107:

⁹ ԳԱԹ, Հայկունու ֆոնդ, վավ. 107:

նվիրել է շանացիների բարօրության, նրանց մատաղ սերնդի դաստիարակության գործին: «Ամայի երկրի մեջ սերմանած սերմերուս աճումը տեսնելով՝ անշափ գոհ էի և ուրախ»¹⁰,—գրում է նա իր հուշերում:

Հետագայում, արդեն լիովին վստահ իր և իր աշակերտների դիտելիքներին, նա առանց վարանելու մի շարք ստուգող հանձնաժողովներ է հրավիրում, որոնք խորին հարգանքով ու գովեստով են արտահայտվում Հայկունու անձնավորության ու նրա դաստիարակած սաների մասին: «Ժողովուրդը ևս ինձ կհարգեք քահանայի մը ավելի, սակայն վարձատրության մեջ ժլատ էր»¹¹,—գրում է բազմավաստակ մանկավարժը:

1868 թ. Հայկունին ամուսնանում է: Նրա ամենամեծ բաղձանքն էր «Ջավակներ ունենալ. այնպես կրթել և ցույց տալ աշխարհին, թե մարդ, երբ զավակ ունենա բարոյականությամբ լի և մարդկության օգտակար զավակներ ունենալու է»¹²: Իր այդ երազանքն իրականացնելու համար, գիտակից ու կրթված մոր անհրաժեշտությունն զգալով, նա իր անգրագետ կնոջը գրաճանաչ է դարձնում, բավական դիտելիքներ ուսուցանում, ընթերցանության գրքեր է հանձնարարում և աստիճանաբար նրա մտավոր կարողություններն այնքան է զարգացնում, որ նույնիսկ իր դպրոցում ուսուցչուհու պաշտոն է հանձնարարում:

Ծանայում ծավալած երկարամյա գործունեությունից հետո, երբ արդեն տեղի լուսավորության գործը հուսալի հիմքերի վրա էր դրված, Հայկունին փոխադրվում է Տրապիզոնի թաղամասերից մեկը, որտեղ նա երիտասարդների միջոցով աշխատում է վերականգնել երեմանի «Խորենյան ընթերցասրահը», սակայն նրա ջանքերն ապարդյուն են անցնում: Ս. Հայկունին, այնուամենայնիվ, չհուսահատվելով, հիմնադրում է մի դպրոց օգնական ունենալով իր կնոջը և մի այլ ուսուցչի:

Ազգային ինքնագիտակցության զարթոնքի գաղափարները լուսավորության միջոցով հետզհետե տարածվում էին և նորանոր

ուժեր ներգրավում: Այդ նույն նպատակին էր ծառայում 1869 թ. Կ. Պոլսում հիմնադրված «Անձնվեր ընկերությունն» իր ուսումնարանով: Այդտեղ իրենց դաստիարակությունն ստացած բազմաթիվ սաներ հայրենի գավառները վերադառնալով, նվիրվում էին ուսուցչական գործին: Այդպիսով հայաբնակ մի շարք վայրերում այդ կազմակերպությունն արդեն իր շառավիղներն ունեւր «Անձնվեր»-ի արգասավոր փորձից ոգևորված, ժամանակի առաջավոր մտածող Մկրտիչ Փորթուգալյանը Եվդոկիայի մեջ ևս կազմակերպում է այդ ընկերության մասնաճյուղը:

Նույն այդ տարիներին իր գործունեությունն է սկսում «Վարազդատյան ընկերությունը», որի կազմակերպիչն արդեն հայտնի հասարակական դեմք դարձած, հրապարակախոս, «Ասիա» թերթի խմբագիր Մ. Փորթուգալյանը 1873 թ. հատուկ նամակով տեղեկացնում է Ս. Հայկունուն՝ հայաշատ մի շարք վայրերում, այդ թվում նաև Տրապիզոնում, հիշյալ ընկերության մասնաճյուղերն ստեղծելու անհրաժեշտության մասին: Այդ կազմակերպության գլխավոր նպատակն էր լինելու ժողովրդական լայն զանգվածներին գրաճանաչ դարձնել, գեղարվեստական ու քաղաքական գրքերի ընթերցանությամբ մտավոր կարողությունները զարգացնել և լուսավորելով նրանց ազգային ոգին բարձրացնել:

Փորթուգալյանի սրտառուչ նամակի ազդեցությամբ, Հայկունին անմիջապես մեկնում է Կ. Պոլիս, որպեսզի անձամբ ծանոթանա այդ անվանի հայրենասերի հետ և միասին մշակեն գործունեության համապատասխան ծրագիր:

Սակայն կատարվում է անսպասելին: Իր երեակայությամբ ստեղծված Մ. Փորթուգալյանի փոխարեն, Հայկունին նրան տեսնում է խանի (իջևանի) մի անկյունում ծալապատիկ նստած՝ հայ բեռնակիրներին մեսրոպյան տառերը սովորեցնելիս: Տեսնելով նրա կորաքամակ, վտիտ ու տառապյալ կերպարանքը, Հայկունին լռելյայն հասկանում է Փորթուգալյանին և հանձին նրան՝ գտնում իր բախտակցին: Հետագայում անդրադառնալով այդ հանդիպմանը, նա նշում է. «Այդ օրը վերջնականապես հումովեցի, թե ժողովրդին նվիրվել կնշանա-

¹⁰ ԳԱԲ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 107:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում:

կե՝ տառապանքի ուղին բռնելը¹³։ Այդ ժամանակաշրջանը Մ. Փորթուգալյանի համար առանձնապես ծանր էր։ Նա հոգեպես ընկրծված էր, և ապրում էր ծայրահեղ կարիքի մեջ։ Նրա հրատարակած «Ասիա» պարբերականի էջերում պորտաբույծ կղերականների հոգի վարքն ու ստոր արարքները նկարագրելու և խստագույնս պախարակելու պատճառով, աղգալին հոգաբարձությունը նրան հալածանքի էր ենթարկել՝ վտարելով Գում-Գարուի վարժարանի պաշտոնեությունից, բայց ժողովրդի մարդն իր կյանքի այդ սլաքամաններում անգամ, հոգեկան բավականություն ստանալու նպատակով, ձրի դասեր էր տալիս հայ պանդուխտներին։

Դեպի Կ. Պոլիս կատարած այդ և հետագա ճանապարհորդությունների ընթացքում, Հայկունին մտերմական հանդիպումներ է ունենում ոչ միայն Մ. Փորթուգալյանի, այլև հայ խմբագիրներ Օգսեն Խոջասարյանի, Կարապետ Փանոսյանի, ինչպես նաև գրող ու հասարակական գործիչներ Մինաս Զերազի, Հակոբ Պարոնյանի և ուրիշների հետ։ Հայաստանի և հայության ճակատագրով խորապես տաքնապած այդ առաջավոր մտավորականների հետ ունեցած զրույցներն ու մտքերի փոխանակումները, խոշոր տպավորություն են թողնում Մ. Հայկունու վրա՝ զգալի չափով ուղենշելով նրա հետագա գործունեության ընթացքը։

Ժողովրդական լուսավորությունն իր ժամանակի անհետաձգելի խնդիրներից մեկը համարելով՝ Մ. Հայկունին հանձն է առնում նորաստեղծ «Վարազդատյան ընկերության» աշխատանքները Տրապիզոնում ևս կազմակերպել։ Կ. Պոլսում այդ մասին անհրաժեշտ հանձնարարություններ ստանալով՝ նա վերադառնում է Տրապիզոն, որտեղ ուսումնարանական գործի հետ զուգընթաց, կազմալուծված նախկին ձեռքերից ընթերցասրահի» փոխարեն, մեծ ջանքերով ստեղծում է «Վարազդատյան» նոր ընթերցասրահն իր բավական մեծ գրադարանով։ Տրապիզոնում լուսավորական գործը բարվոք վիճակի հասցրնելուց հետո, Մ. Հայկունին անմիջապես մեկնում է Վան, Ալյուր գյուղում հիմնադրում առաջին դպրոցը՝ այդտեղ ևս գործնական ընթացք տալով Վարազդատյան ընկերության աշխատանքներին։

¹³ ԳԱԹ, Մ. Հայկունու ֆոնդ, վավ. 107։

1875—76 թթ. Արդվինում ծայր էին առել կրոնական, ներազգային խլրտումներ։ Գաղափարական այդ անհամերաշխությունը կասեցնելու նպատակով տեղի հոգևոր առաջնորդը հատուկ նամակ է գրում Մ. Հայկունուն, խնդրելով նրան գալ և կարգի բերել ստեղծված վիճակը և հնարավորության սահմաններում կազմակերպել դպրոցական-լուսավորական գործը։ Անշուշտ, Հայկունին կարող էր մերժել այդ առաջարկը, քանի որ ուներ բավական հարմար աշխատանք, սակայն Արդվինի աշխատավոր հայության անորոշ դրությունը և հատկապես նամակի ոգին շատ են հուզում զգալուն մանկավարժին. «Հայկա և Արամս սերը,— կարդում է Հայկունին այդ նամակում,— լուսավորիչը կանգնած ակնդետ քեղ կսպասեն, աստ է մեծ Շանան և գործելու ասպարեզդ, արի՛, փոքր ինչ կարգի դիր. եթե հաճո չէ՝ վերադարձիր»¹⁴։ Ժողովրդի ցավով մտահոգված Հայկունին որոշում է «գնալ և աղգայնոց օգտակար ըլլալ»¹⁵։

Արդվինում Մ. Հայկունին կարգավորում է դպրոցական գործերը, մոտիկից ծանոթանում տեղի բնակչության բոլոր խավերին՝ աշխատելով ամեն կերպ օգտակար լինել ժողովրդին։ Այդ բոլորի փոխարեն նա առնուրեք վայելում է հարգանք ու պատիվ։

Այդ ընթացքում Մ. Հայկունին ծանր հիվանդությամբ տառապող կնոջը փոխադրում է Շանա՝ նրա ծնողների մոտ։ Արդվինից հաճախ նրան տեսություն գալով, հնարավորություն է ունենում ուշի ուշով հետևել շանացիների կյանքին ու նրանց առօրյա անցուղարձեղին։

Այդ շրջանում հայ ժողովրդի վիճակը հետզհետե ավելի էր ծանրանում. սուլթանական կառավարության մեծաքանակ հարկերն ու տուրքերը հավաքելու համար թուրք զապթիկներն ու ենիչերիները ցրվում էին երկրի տարբեր կողմերը, այդ թվում նաև Շանա գյուղը։ Նրանց գործադրած անմարդկային բռնություններն ահռելի չափերի էին հասնում։ Հարկահավաքները դաժանորեն էին վարվում այդ գյուղի հայության հետ՝ ստիպելով չնչին գնով վաճառել իրենց վերջին կովն ու օջախի վրալի կերակրի միակ կաթսան, որպեսզի վճարեն պահանջված գումար։

¹⁴ ԳԱԹ, Մ. Հայկունու ֆոնդ, վավ. 107։

¹⁵ Նույն տեղում։

րը, իսկ հնարավորություն չունեցողին պատ-
ժում էին, խոշտանգում: Ս. Հայկունուն շատ
է հուզում այդ բոլորը: Մի անգամ շանացի
գյուղացիներից մեկը չի կարողանում հարկը
վճարել: Տեղի հայ քահանան երաշխավո-
րում է, որպեսզի նա մեկ օրվա ընթացքում
գնա քաղաք, պահանջված գումարը բերի:
Երբ լրանում է 24 ժամը. հարկատուն ուշա-
նում է, թուրքերը քահանային բռնում և
կապում են մզկիթի շմբին գտնվող մի հա-
ռից, ապա սկսում են վրան ջուր լցնել ու
ծեծել¹⁶: Ս. Հայկունու ժողովրդական ու
մարդասիրական զգացմունքները թույլ չեն
տալիս լուսթյան մատնել այդ դեպքը, և նա
բողոքագիր է ուղարկում Տրապիզոնի ազգա-
յին խորհրդին, բայց ոչ մի արձագանք չի
ստանում: Ստրկամիտ ազգայիններից դժգոհ
ու վրդովված Ս. Հայկունին քաղաքական
բնույթի սուր հոգվածներ է գրում Կ. Պոլսի
«Արարատ», «Հայրենիք» և «Մեջմուա ախ-
պար» պարբերականներում՝ մանրամասն
նկարագրելով կատարված այդ գազանային
իրողությունը:

Հոգվածները¹⁷ հրատարակվում են և մեծ
աղմուկ բարձրացնում: Այդ պարբերական-
ների խմբագիրները պատասխանատվության
են ենթարկվում: Կ. Պոլսի սահրազամը
նրանցից պահանջում է այդ հոգվածների
բնագրերը և հեղինակի անունը: Հայ խմբա-
գիրներն սկզբում հրաժարվում են, ապա՝
սպառնալիքից վախենալով, տեղի են տալիս:
Վտանգվում է Ս. Հայկունու կյանքը: Ամենու-
րեք խոսում են նրա գրած հանդուգն հոգ-
վածների մասին: Այդ օրերին նույնիսկ
Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետ-
յանը հատուկ մարգ է ուղարկում Ս. Հայկու-
նու մոտ՝ խորհուրդ տալով հարկ եղած դեպ-
քում դիմել ուսական դեսպանատան պաշտ-
պանությանը, ոմանք էլ նրան խորհուրդ են
տալիս՝ փախչել: Սակայն ի բնե տոկուն ու
կորովի Հայկունին ոչ միայն խույս չի տալիս,
այլև դատավարության ժամանակ համար-
ձակորեն խոստովանում է, որ հոգվածների
հեղինակն ինքն է, և որ այդ հոգվածները

տպագրվելուց հետո անգամ առավել սարսա-
փելի դեպքեր են կատարվել, ու մեղադրյալի
աթոռին նստած նա առանց վարանելու
պատմում է, թե ինչպես թուրք ոստիկան-
ները, հայ գյուղացիների թիկունքին նստե-
լով՝ գյուղից գյուղ են քշել և տանջել նրանց:
Դատական հարցաքննությունից հետո ոչ
միայն թուրք կառավարությունը, այլև տեղի
հայ առաջնորդարանն անգամ թշնամաբար
են տրամադրվում Ս. Հայկունու նկատմամբ:
Հոգևոր առաջնորդն իր երբեմնի մտերմակա-
ն կապերը խզում է Հայկունուց և եկեղեցու
մեջ քարոզ կարդալու ժամանակ ամբողջ
բնակիչների ներկայությամբ խստորեն հան-
դիմանում է ժողովրդի մեջ հարգանք վայե-
լող ուսուցչին:

Արդվինի հայ եկեղեցին՝ հանձինս հոգևո-
րականների, սաստիկ դժգոհ էր Հայկունուց,
քանի որ նա ոչ միայն նյութական վնաս էր
հասցրել ազգային գանձարանին. մի քանի
ոսկի էր ծախսել տվել իր դատավարության
օրերին, այլև գլխավորապես այն բանի հա-
մար, որ նրա պատճառով թուրք կառավարու-
թյունը կարող էր «վերանայել» իր բարյա-
ցական վերաբերմունքը առաջնորդարանի ու
նրա պաշտոնյաների նկատմամբ: Ս. Հայ-
կունին իր հուշերում զայրույթով է պատմում,
թե ինչպես առաջնորդարանում կազմա-
կերպված պաշտոնական հավաքույթնե-
րից մեկում չհանդուրժելով իրեն ուղղված
անարգական խոսքերը, ընդոստ պատաս-
խանել է. «Ես այն արած եմ, ինչ խիղճս
ինձ թելադրեց, ազգիս պատիվը վերա-
կանգնած եմ, ինչ որ դուք այդ մասին
անզգա դարձած եք, թուրքի ատյանից ազատ-
վեցա, այժմ նույն դերը դուք հանձն առած
եք»¹⁸:

Այդ հանդուգն պատասխանը դուր չի գալիս
առաջնորդին ու ներկա գտնվող ազգային-
ներին, որոնք համախմբվում են և ֆիզիկա-
կան ուժ գործադրելով՝ ծեծում ու բանտ են
նետում նրան:

Զհանդուրժելով «ազգայինների» այդ օրի-
նակ նախատիները, Ս. Հայկունին բանտից
ազատվելուց անմիջապես հետո, մեկնում է
Արդվինի այդ «հեղձուցիչ մթնոլորտից»
և Տրապիզոնի արվարձաններից մեկում
շարունակում է ուսուցչությամբ զբաղվել՝

¹⁶ Տե՛ս Ս. Հայկունու անստորագիր հոգվածը, «Արա-
րատ», Կ. Պոլս, 1876, հոկտեմբերի 24:

¹⁷ Դժբախտաբար մեզ չհաղորդեց տեղում գտնել
այդ պարբերականները, իսկ Ս. Հայկունու անստորա-
գիր հոգվածներից հայտնաբերել ենք միայն մեկը
(տե՛ս նախորդ ծանոթագրությունը):

¹⁸ ԳԱԲ, Ս. Հայկունու ֆոնդ, 107:

մատաղ սերնդի ուսուցման ու դաստիարակութեան մեջ գտնելով իր սփոփանքը:

1878 թվականին, Կ. Պոլսի Ներսես պատրիարքի հատուկ հանձնարարութեամբ, Գրեգին Սրվանձտյանցը վիճակագրական հանապարհորդություն է կատարում՝ արևմտահայության տնտեսական պայմաններն ու նրանց ուսումնական աշխատանքների դրվածքն ստուգելու հատուկ նպատակով: Գ. Սրվանձտյանցն իր հաշվետու տեղեկագրում արձանագրում է. «Ավելորդ է մի առ մի նշանակել, թե քանի-քանի վիճակներն անցա, ուր վարժարաններ երբեք չկան, բայց խնդրությամբ սրտի կհիշատակեմ Սեբաստիոն քաղաքի վարժարանները, Սենեքերիմյան ազնիվ ընկերության ջանից և խնամոց արդյունքը, կան նաև մասնավոր վարժարաններ...»¹⁹ և մեկ առ մեկ թվարկում է նրանց հաջորդությունները ևս: Իր այդ շրջագայության ընթացքում Գ. Սրվանձտյանցն այցելում է նաև Ս. Հայկունու դպրոցը: Նա մոտիկից ծանոթանում է Հայկունու կատարած աշխատանքներին, ստուգում աշակերտների ու աշակերտուհիների գիտելիքները և իր գոհունակությունն է հայտնում բազմաշարժար ուսուցչին՝ խորհուրդ տալով շարունակել այդ հայրենանվեր-լուսավորական գործը²⁰:

Մեծ բանագետի քաջալերանքն ու նրա հետ ունեցած անմիջական մտերիմ զրույցները խոր տպավորություն են թողնում Ս. Հայկունու վրա և նա մեկընդմիջտ որոշում է հետևել նրա բանահավաքական-ազգագրական կոչումին:

Այնուհետև Ս. Հայկունու կյանքում սկսվում է գործունեության մի նոր շրջան, որը համընկնում է ռուս-թուրքական պատերազմի (1877—1878) իրադարձություններին և նրա հետ կապված ազգային ազատագրական տրամադրություններին:

Ազգային ազատագրության գաղափարները, ինչպես արդեն տեսանք, օրակարգի հարց էին դարձրել ժողովրդական զանգվածների լուսավորության խնդիրը: Հայաշատ մի շարք վայրերում հիմնադրվում են դպրոցասեր ընկերություններ:

Այդ ժամանակաշրջանում է, որ Կիլիկյան Երիտասարդական և Արարատյան ընկերությունների օրինակով, 1879 թվականին

Կ. Պոլսում հիմնադրված Դպրոցասիրաց ընկերությունը որոշում է Հայաստանի մի շարք վայրերում դպրոցներ հիմնադրել, այդ թվում նաև՝ Ալաշկերտում, որի հայ բնակիչները պատերազմի ժամանակ անասելի տառապանքներ էին կրել: Այդտեղ դպրոցական գործը կազմակերպելու համար այդ նույն ընկերության հանձնարարությամբ Ս. Հայկունին, ավագ ուսուցչի պաշտոնով, գործուղվում է Ալաշկերտ:

Դա մի այնպիսի ժամանակաշրջան էր, երբ դեպի Արևելահայաստան (ռուսական սահմանները) գաղթած ալաշկերտցիները պատերազմից հետո, հետզհետե վերադառնում էին իրենց նախկին բնակավայրերը: Սակայն նրանք ո՛չ պատսպարվելու տեղ և ո՛չ ուսուցիչ ունեին: Այդ նույն թվականի ձմռանն սկսվում է սովը՝ ավելի սարսափելի դարձնելով նրանց վիճակը:

Սովից, հիվանդություններից ու սառնամանիքից տառապող անօթևան հայ գաղթականները, ռուսական սահմաններից իրենց հարազատ օջախը վերադառնալով, ծայրաստիճան ընդդիմության և բռնությունների էին հանդիպում: Թուրքական կառավարության սպառնալիքները մի կողմից, նրա ձեռքին գործիք դարձած քուրդ կեղեքիչների անմարդկային զազանությունները մյուս կողմից՝ հյուժում և սպառում էին առանց այն էլ ուժասպառված հայ գաղթականներին:

Թուրք կառավարության ազգահալած քաղաքականությունն առաջնորդվում էր «Բաժանիր, որ տիրես» սկզբունքով և ազգամիջյան խռովություններ էր ստեղծում՝ քուրդ անգիտակից տարրերին լարելով հայրի դեմ:

Հայ և քուրդ աշխատավոր ժողովուրդները, որոնք երկար տարիներ իրար կողք կողքի համերաշխ հարևանել էին, արդեն իրար «թշնամի» էին նկատվում: Ս. Հայկունին որպես իր ժամանակի առաջավոր մտածող դեմոկրատ, թուրք կառավարության ձեռքին գործիք դարձած քուրդ կեղեքիչների (բեկեթի ու շեյխերի) անմարդկային վարքագիծը պախարակելով հանդերձ, խոր համակրանք է տածել քուրդ աշխատավոր ժողովրդի նկատմամբ և բարձր գնահատել նրա բարոյական արժանիքներն ու ստեղծագործ ոգին: Այս բոլորի լավագույն վկայությունն է Ժու-

¹⁹ «Փորձ», Կ. Պոլիս, 1879, № 4, էջ 172:

²⁰ ԳԱԲ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 107:

ղովորդասեր բանահավաքի գրի առած քրդական բազմաթիվ վիպերգերը և ժողովրդական այլ նյութերը՝ Ս. Հայկունին քաջատեղյակ՝ ր քրդերեն լեզվին. նա այդ նյութերի ստվար մասը դրի է առել քուրդ ժողովրդի հարազատ լեզվով և այնուհետև ըստ հարկի՝ թարգմանել հայերեն²¹:

Այլաշկերտում Ս. Հայկունին մասնակցում է սլատերազմից տուժվածների համար կազմակերպված Սովետոց հանձնաժողովին²² աշխատանքներին՝ ընտանիք առ ընտանիք շրջելով, սնունդ, վառելիք, դեղորայք ու հագուստներն է բաժանում կարիքավորներին, սփոփում ու մխիթարում գաղթականներին և միաժամանակ, որպես ակնառես, բազմաթիվ թղթակցություններ է գրում Կ. Պոլսի մի շարք պարբերականներին՝ մանրամասն նկարագրելով ժողովրդի վիճակը:

«Ընթերցող հայ հոգիք,—գրում է Ս. Հայկունին 1879 թվականի «Մասիսի» էջերում,—մարդասեր անձեր, պահ մը ինձ հետ դաշտս իջեք, այս տուններուն առջև կեցողներուն հանդիսատես եղեք. ասոնք անոնք են, որ իրենց ստացվածքը քուրդերուն անգութ ճիրանաց, իրենց սիրելիքը քուրդերուն արյունարբու սրոց զոհ տալին հետո, հուսահատ ի Ռուսիա գաղթեցին որպես թե իրենց ազատիչին գիրկն, որ մխիթարություն գտնեն. իրենց հույսն ի դերև ելավ, վասն որո հուսա-

²¹ Քրդական բանահյուսության այդ հարուստ նյութերը Ս. Հայկունին ամփոփել է «Էմինյան ազգագրական ժողովածուի» Ծ հատորում, Մոսկվա—Վաղարշապատ, 1904:

²² Ռուս-թուրքական պատերազմն աղետալի էր դարձել արևմտահայության համար, հատկապես այն շրջաններում, որտեղ կռիվներն ավելի ուժգին էին: Մի քանի տարի շարունակվող երաշտն առավել ևս սաստկացրել էր աղետը: Հայությունը սովի ճիրանների մեջ էր: Այդ նպատակով Կ. Պոլսի բոլոր թաղամասերում կազմակերպվում են նպաստի հանձնաժողովներ, որոնք կարճ ժամանակից հետո միացան Կենտրոնական հանձնաժողովին, որը ներսես պատրիարքի 1880 թ. հունվարի 12-ի հատուկ կոնգակով կոչվեց «Մովսես հանձնաժողով»: Այդ հանձնաժողովին հաջողվեց 39000 ոսկի հանգանակել: Այդ հասույթով նա ոչ միայն նյութապես օժանդակեց չքավորներին, այլև զանազան գավառներում հողագործական ու մշակութային միջոցներ հատկացրեց վարժարաններին՝ զարկ տալով լուսավորության ու արհեստագիտության բազմաթիվ ճյուղերին:

Տե՛ս Մ. Օրմեչյան, Ազգապատում, մասն երրորդ, Կ. Պոլս, 1927, էջ 4375:

հատ ետ դարձան իրենց սպաննիչներն և կեղծքիչներն աղաչելու, որ յուրյանց տանց մեջ իբրև հյուր ընդունվին. շատ անգամ այս ալ կզրլացվի, վասն որո շատ մը ընտանիքներ, ամեն ինչ կորուսած մերկ ու բոբիկ իրենց տանց առջև սայլերու վրա կպառկին օրերով, որ իրենց տուններուն վրա բռնացող քուրդերուն գութը շարժեն»²³:

Ահա այսպես էր գաղթականների վիճակը, իսկ ովքեր ավելի տանելի պայմաններում էին գտնվում, այսինքն լավագույն դեպքում, ունեին տուն և օջախ, ապա անընդհատ ենթարկվում էին թուրք կառավարության կողոպտիչների հարստահարություններին. «Ճանապարհներու վրա եղող գյուղորներից շատերն ամեն օր տարապարհակ կվարվին, իրենց ձիերով և սայլերով անցողաբաժ անող գրեթե ամեն անձեր կիջնան հայու տուն, կուտեն, կխմեն՝ իրենց ձիուն հետ, առանց ստակ մի վճարելու կմեկնին: Եթե այդ հայը չունիմ ասե, այն միջոցին գավազանի կամ խարազանի հարվածներ իրեն բաժինն է: Դեռ վառել ամենօրյա սովորություն է, ամեն գիշեր դաշտիս մեջերն բոցեր կտեսնվին, գիշեր կըլլա, որ 40—50 կամ 100 ոսկի արժողությամբ դեղեր կվառվին, կովեր կամ ոչխարներ կտարվին»²⁴:

Այնուհետև Ս. Հայկունին նկարագրում է ալաշկերտցի գաղթականների սովամահ վիճակը.

«...Տեսա Ամատ գյուղը, մի ընտանիք, հայր, մայր սովից մեռած: 7 թե 10 տարվա փթած ցորենը շաղել ու հաց էին թխել, որ հոտին մարդ չէր կարող տոկալ, երկու մեծ աղջիկները գունաթափ հյուծված, թունտրան վրան նստած կիսամերկ, ամոթու ձեռներով իրենց մերկություն կծածկեին»²⁵:

Եվ կամ Զետկան գյուղի գաղթականները, որոնք հազիվ «գարիի հացով կապրեին», երբ գյուղում հայտնվում է Մստաֆա բեկը, 30 տնավեր շերքեզների հետ, գյուղացիներն «առ ահի իրենց զավականց պարեն կտրելով՝ այդ անգութներուն որկորը լցրին»²⁶:

Բացի ավարից ու ավերից, մարդասպանությունն ու առևանգությունը անասելի չափերի էր հասնում: Ճարահատյալ հայերը

²³ «Մասիս», Կ. Պոլս, 1879, № 2479:

²⁴ Նույն տեղում, № 2481:

²⁵ ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 107:

²⁶ Տե՛ս «Մասիս», Կ. Պոլս, 1879, № 2481:

այդ բոլորի համար բողոքում էին կառավարությանը, սակայն ոստիկանները փոխանակ հայերին պաշտպանելու, խրախուսում էին բեկերին: «...Կուզե մարդասպան ըլլա, ազատ կթողուն,—գրում է Հայկունին վրդովված,—և ընդհակառակը, կգանակոծեն զհայերն, ի պատիժ իբր ի Ռուսիա գաղթելուն»²⁷:

Դեռ այսքանը քիչ էր ալաշկերտցիների համար, «Կարսի նահանգեն 1000 տան շափ տաճիկ գաղթականներ տարածված են դաշտիս շրջակա գյուղերն ու բլուրներու մեջ, որը վրանաբնակ, որն ալ տուներու մեջ զետեղված: Հայ գաղթականն արդեն ոչինչ չունի, իր դրացիեն կամ ազգականեն մուրալով պիտի ապրի», իր գոյությունը մի կերպ պիտի պաշտպանի բաժին հանելով նաև թուրք հափշտակիչներին, որոնք կառավարության կողմից ուղարկված էին հայկական շրջաններում բնակություն հաստատելու և հայերի հողերն ու գույքերը զավթելու: Այդ թուրք վերաբնակիչներից բացի հայերին կեղծեցում էին նաև կառավարական հարկահավաքները, որոնք Ռուսաստան գաղթած ու վերադարձած հայ բանակավորներին ցապահանջում էին հին ու նոր ամեն տեսակի հարկերը, խոշտանգում ու չարչարում էին դաժան կերպով՝ առանց այն էլ սովի մատնելով գյուղացիներին:

Ս. Հայկունին, չկարողանալով վերջակետ դնել իր սրտաճմլիկ նկարաշարքին, ավելացնում է «Ալ ինչե՛ր կա, որ խեղճ ժողովուրդն առ ահի կըռն չկրնար համարձակիր բողոքելու, որպեսզի ավելի թշնամիներ չվաստկի, վասնզի կտեսնե, որ շատ մը բողոքներ անգործադրելի մնացեր են և հետևանքն ավելի գեշ եղած է»²⁸:

Ժողովրդի ցավերով մորմոքվող Ս. Հայկունին Կ. Պոլսի պարբերականներում գրած իր հոդվածներով կոչ է անում բոլորին, որպեսզի օգնության ձեռք պարզեն. «Գթասիրտ հայեր,—գրում է նա,—խնդրեմ դարձուցեք աչքերնիդ Վաղարշակերտի վրա, տեսե՛ք իր եղկելի վիճակ, ուր սոքա ձեռն ի ծնոտ կղեգբորին իրենց ամենահարկավոր հացն կորոնեն, որպեսզի ձմեռն սովամահ չկորչին, որովհետև քաջ գիտցած են, որ առ ոտն է սովն, եթե գթասիրտ հայեր ձեռն չկարկանեն: Երկու հարյուրե ավելի ընտանիք ամեն

բանե զրկյալ իրենց հայրենիք դարձած են և նոցա շափ մ'ալ գալու վրա են, հոս չէին, որ ցորյան ցանեին, ստակ չունեին, որ առնան, ալ ո՛վ ընթերցողք, դուք խորհեցե՛ք, թե սոցա վիճակն ի՞նչ պիտի լինի, վասն հայ եք՝ մարդ, գիտե՛ք սովի սարսափելի երես»²⁹:

Ժողովրդասիրության անկեղծ զգացումով տոգորված Ս. Հայկունու լրագրային այդ սրտառու թղթակցությունները, որոնք սկիզբ դարձան նրա հետագա ազգագրական, վիճակագրական ու տեղագրական ծավալուն ուսումնասիրություններին, դրական ներգործություն էին ունենում ընթերցողների վրա: Սովյալների օգնություն կազմակերպող հանձնաժողովի միջոցով, ամեն կողմից Ալաշկերտ էր ուղարկվում ցորեն և այլ սննդամթերք, փող ու դեղորայք: Այդ բոլորը Ս. Հայկունին բարեխղճորեն բաժանում էր կարիքավորներին:

Մի քանի տարվա ընթացքում ալաշկերտցիների վիճակն աստիճանաբար բարելավվում է: Այլևս այնքան չեն նկատվում պատերազմի ու սովի հետքերը: Գյուղացիներն զբաղվում են իրենց առօրյա աշխատանքներով: Ս. Հայկունու դպրոցի աշակերտների թիվն օրըստօրե աճում է, վաստակյալ ուսուցիչն ստիպված է լինում դպրոցական նոր, ընդարձակ շենք կառուցելու մասին մտածել: Նա այդ նպատակով հանգանակություն է կազմակերպում և հավաքված գումարով շինանյութ գնում: Այնուհետև կազմակերպում է գյուղացիներին ու աշակերտներին, և միահամուռ ուժերով սկսում են դպրոցի շինությունը: Բոլորի հետ միասին նա ևս եռանդուն աշխատում է, քար ու շաղախ կրում՝ իր անձնակազմ օրինակով ոգևորում ուրիշներին:

Դպրոցի շինությունն ավարտվում է, սակայն վրա հասնող ձմեռային սառնամանիքները Հայկունուն ստիպում են շենքի լուսամուտներն ու դռները թղթով ու կտավով մի կերպ պաստառել և սկսել պարապմունքները:

Ալաշկերտի դպրոցի համբավը տարածվում է շրջակա վայրերում: Բազմաթիվ պատանիներ ու աղջիկներ գալիս հաստատվում են Ալաշկերտ՝ որպեսզի տեղի դպրոցը հաճախեն:

²⁷ «Մասիս», Կ. Պոլիս, 1879, № 2481:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում:

Ս. Հայկունին ևս տեսնում է իր սաների վիթխարի առաջընթացը: Այդ մասին նա գրում է. «Վարժարանս խիստ լավ կերպով կհառաջադիմե, աշակերտաց բարոյականն լավ է, իրենք ուսման ընդունակ և սիրող ուսման, վասն որոգիչեր ցերեկ բան գործըրած են ուսումն, որով մի վայրկյան դատարկ չեն անցուներ, վասնզի դիտեն, որ ամբողջ Վաղարշակերտի տարածության մեջ ուրիշ վարժարան չկա»³⁰:

Ժողովրդական ուսուցիչը քաջ գիտակցել է ժողովրդական կրթության անփոխարինելի դերն ու նշանակությունը: Ահա թե ինչու նա ջանք չի խնայել մատաղ սերնդին լավագույն ձևով ուսուցանելու մայրենի լեզուն, հայ ժողովրդի պատմությունն ու աշխարհագրությունը, իսկ երեկոները անգրագետ մեծահասակներին հավաքելով նա ձրի գրաճանաչություն է սովորեցրել:

Մանկավարժական գործի նկատմամբ Ս. Հայկունու նվիրվածությունը անսահման է եղել: Նա իր գիտելիքները աշակերտներին հաղորդելուց բացի, նույնիսկ իր նյութական սուղ միջոցներն է տրամադրել՝ նրանց համար գնելով հաշատուր Աբովյանի, Ղևոնդ Ալիշանի, Մկրտիչ Պեշկևիթաշյանի, Պետրոս Դուրյանի, Հակոբ Պարոնյանի և շատ ուրիշ հայ գրողների ստեղծագործությունները: Այդ եղանակով նա դպրոցին կից ստեղծում է նաև համեստ գրադարան-ընթերցասրահ:

Դպրոցական ուսուցման պաշտոնական սիստեմը բնութայնն ու ժամանակակից կյանքին ավելի մոտեցնելու հատուկ միտումով Ս. Հայկունին հանգստյան օրերին իր աշակերտների հետ հայրենասիրական երգեր երգելով, առաջնորդում էր զանազան զբոսանքների: Փորձառու ուսուցիչը դաստիարակչական այդպիսի միջոցներով նպատակ ուներ զարգացնել նրանց ոչ միայն ֆիզիկական, այլև հոգևոր ու մտավոր կարողությունները: Հայրենի գեղատեսիլ բնության գրկում կատարած այդ պտույտները միաժամանակ անսպառ նյութ էին մատակարարում նրանց զարգացող երևակայությունը:

Ս. Հայկունու՝ մտածող-մանկավարժի, մեծագույն երախտիքը եղել է այն, որ նա ամեն կերպ աշխատել է պատանիներին ճանաչել տալ իրենց հայրենի բնաշխարհը,

այդ գեղեցիկ բնության գրկում իր տխուր ու ողբերգական կյանքով ապրող հայության քաղաքական ու տնտեսական անմխիթար վիճակը:

Այդ բազմաթիվ շրջագայությունների ընթացքում աշակերտներն իրենց շարադրությունների համար անհրաժեշտ նյութեր ու տպավորություններ էին կուտակում, իսկ Հայկունին օգտվելով առիթից, հավաքում էր տեղագրական ու ազգագրական, ինչպես նաև բանահյուսական հարուստ ու բազմազան նյութեր:

Մանկավարժական այսպիսի նպատակասլաց գործունեությունը, սակայն, իր բարդ ու դժվարին կողմերն ուներ: Հինգ-վեց դասարանից բաղկացած դպրոցի աշակերտների թիվը հետզհետե աճում էր, այնինչ Հայկունին միայնակ էր և չէր հասցնում բոլոր դասարանների պարապմունքները ղեկավարել: Հետևաբար և ստիպված է լինում մանկավարժական յուրօրինակ միջոցներով դիմել: Հաճախ նա բարձր դասարանի աշակերտներին հանձնարարում էր հսկել փոքրերին, ստուգել նրանց գրավոր աշխատանքները և ուղղել կատարած սխալները:

Բացի այդ, փորձված մանկավարժը իր աշխատանքային գործունեության ընթացքում կիրառում էր այլևայլ մեթոդներ: Ծաբաթվա մեջ մի անգամ հանձնարարում էր աշակերտներին իրենց սիրած հեղինակի մի որևէ ստեղծագործության նմանությունը շարադրել արձակ կամ շափածո աշխատանք: Այդ միջոցով զարգացնում էր աշակերտների երևակայությունը, ինչպես նաև նրանց լեզվական ունակությունները:

Ս. Հայկունու կիրառած մանկավարժական այս ձևերն ու եղանակները բարերար ազդեցություն էին ունենում սովորողների վրա: Թեև նա ոչ մի ջանք չէր խնայում լավագույն ձևով կազմակերպելու իր դպրոցի աշխատանքները, բայց նա միշտ զգացել է իր թույլ կողմը՝ գիտելիքների այն պակասը, որը դժբախտաբար, հետևանք էր իր անսխալ ուսումնառության:

«Կխոստովանիմ,—գրում է նա իր հուշերում,—որ աշակերտները հսկա քայլեր առին, անցան զիս, նկատեցի այլևս անկարող եմ ուսման ծարավի աշակերտները հագեցնել»³¹ և գործի հաջողության համար

³⁰ ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 107:

³¹ ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 107:

գիմում է դպրոցասիրաց ընկերության վարչությանը՝ խնդրելով մի ավելի պատրաստված երիտասարդ ուսուցչի աշակցությունը: Այլաշկերտ է առաքվում ոմն Գևորգ Զիլին-գարյան, որի հետ միասին Ս. Հայկունին շարունակում է աշխատել: Որոշ ժամանակ անց նոր ուսուցչի հոգի վարձագիծը բացասաբար է անդրադառնում աշակերտների վրա. «Այն մատաղ տունկերը, որոնց վրա անհաշիվ խնամք թափած էի, տեսա խամրած ու փչացած,— ցավով գրում է Հայկունին,— ես կար միշտ համբերեցի, որպեսզի ասել չտամ թե տնօրենության պաշտոնից զրկվելուն համար կհակառակի, վասնզի կյանքիս մեջ կարողութենես բարձր պաշտոնի ձգտած չեմ երբեք: Սակայն կրակն ընկած էր սիրտս, կտեսնեի այն աշակերտները, որ պատրաստված էին իրենց ընտանիքին ու ազդին մեկ-մեկ պիտանի անդամներ դառնալու՝ կփչանային»³²:

Մի անգամ, երբ այդ նոր ուսուցիչը հարած դասարան է մտնում, Հայկունին խստությամբ հանդիմանում է նրան: Վերջինս փոքրոգությամբ ընդունելով այդ վերաբերմունքը, դպրոցի տեսուչի հասցեին հեռու-րանքներով լի հեռագիր է ուղարկում Օրմանյան սրբազանին ու Միացյալ ընկերությանը, որոնք առանց խորամուխ լինելու հարգի էությունը, աշխատանքից հեռացնում են վաստակաշատ մանկավարժ Ս. Հայկունուն: Շուրջ երկու տարի նա առանց աշխատանքի մի կերպ պահպանում է բազմաճյուղ ընտանիքի գոյությունը: Տնտեսական այդ ծանր պայմաններում անգամ Ս. Հայկունուն մտահոգում է մանուկ սերնդի ուսման ու դաստիարակության գործը: Պաշտոնից զրկված ժողովրդական ուսուցիչը, առանց նյութական որևէ ակնկալիքի, ձեռնամուխ է լինում ազգային վարժարանի խարխուլ շենքի վերանորոգմանը: Ավելացնում է դասասենյակների թիվը, բարելավում հարմարությունները և սկիզբ դնում Հայուհյաց օրիորդաց վարժարանին, որտեղ և հետագայում նշանակվում է ուսուցիչ:

Առաջավոր գաղափարներ ունեցող Ս. Հայկունուն խորապես մտահոգել է կանանց ազատագրության հարցն ու նրանց լուսավորության գործը: Նա իրեն հուզող այդ հարցե-

րըն արծարծել է նաև ժամանակի պոլսահայ մամուլում, կոչ անելով հասարակությանը «Զբաղվի Հայաստանի թշվառ օրիորդների փրկության գործով»: Հայ հասարակայնության, հայ ընտանիքի կազմավորման լավագույն նախապայմանը համարելով կնոջ՝ մայրերի, դաստիարակությունը «Այն անգործագետ գեղջկուհիները, որոնք այսօր անտաշ քար են, բայց վաղն հղկվելով քան զականս պատվականս պիտի ըլլան: Զրեմք այս մատաղ և անմեղ տունկերն, ապա պիտի տեսնեմք, թե ի՞նչ օգտակար պտուղներ պիտի տան: Ասոնք չեն այն տունկերեն, որ շատ աշխատանքով առաջ կուգան, այլ նորածիլ բողբոջի պես դյուրությամբ ուզած կողմերնիդ կրնաք շտկել, ուղղեմք սոքա, որ օգտակար մայրեր պատրաստվին հայության համար»³³:

Ս. Հայկունին իր մանկավարժական գործունեության ընթացքում բազմաթիվ հոգսերի հետ միասին չէր դադարում շրջագայել գյուղերն ու ավանները, թափանցել ժողովրդական հոգու և մտքի խորխորատները, և Սրվանձությանցի օրինակով աշխատում էր ամենայն մանրամասնությամբ նկարագրել տեղավայրն ու աշխարհագրական միջավայրը, բնակչության քաղաքական, տնտեսական գոյավիճակը, ազգագրական ինքնատիպ նիստ ու կացը, սովորույթն ու հավատալիքը, խոսքն ու զրույցը: Ազգագրագետ-հետախույզի ուշադրությունից չի վրիպել նաև հնագիտական մեծ արժեք ներկայացնող պատմական նշանավոր, թե աննշան տեղավայրերը, հողի ընդերքից պեղված կմախքներն ու առարկաները, սեպագիր արձանագրություններն ու ձեռագիր հիշատակարանները: Ս. Հայկունին իր ճանապարհորդություններից մեկի ժամանակ, խաստուր գյուղում նկատում է սեպագիր մի արձանագրություն: Հայկական հնությունների հանդես պաշտամունքի հասած սերրանրան ստիպում է այդ սրբատաշ քարը փոխադրել Այաշկերտ և հյուսել իր հիմնադրած դպրոցի պատի մեջ, որպեսզի գետնի վրա մնալով նրա գրերն ավելի շաղավաղվեն և գոնե «հետագա ուսումնասիրողաց նյութ դառնա»³⁴: Նույնպիսի հոգատարությամբ նա

³² ԳԱԲ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. ԻՃ7:

³³ «Մասիս», Կ. Պոլս, 1879, № 2484.

³⁴ ԳԱԲ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 107:

Շեռոյան գետի աջափնյա բարձունքից հայտնաբերում է հնադարյան հսկա անասունների կմախքներ, որոնք անվթար պահպանելու համար փոխադրում է Կարին՝ հանձնելով Սանասարյան վարժարանի պահպանությանը:

Ալաշկերտում անցկացրած տասը տարիների ընթացքում Ս. Հայկունին անընդհատ շրջագայել է մանրամասն նկարագրել այդ գավառի ամեն մի գյուղը, սարն ու ձորը, դաշտն ու լեռը, գետն ու առուն, հնամյա նյութական մշակույթի հուշարձանները, կոթողների ավերակները: Նա շրջագայությունների ժամանակ այցելել է նաև Արուզեյթի բերդը, որի նկարագրության մի հատվածը լույս է ընծայում³⁵, իսկ մնացածը՝ մի խնդրոտ մարդ չգտնվեցավ, — գրում է նա, — որ այդ թանկագին գրվածքները ի մի հավաքելով՝ տպագրվեին³⁶:

Ալաշկերտում եղած ժամանակ նա ամառային արձակուրդն անց է կացրել Ուշ-Քիլիսի վանքում՝ նկարագրելով այդ վայրերն իրենց շրջակայքով:

Ոստիկանական խուզարկությունից խուսափելով Ս. Հայկունին իր հավաքած ու գրի առած նյութերի մեծ մասը թաղում է հողի տակ: Հետագայում, երբ թուրքական կառավարության կողմից դատապարտվում է 101 տարվա բանտարկության, նա փախչում, անցնում է ռուսական սահմանը: Տարիների ընթացքում հավաքած ու գրի առած բանագիտական-ազգագրական և հնագիտական հարուստ նյութերն այդպես էլ մնում են Ալաշկերտի-Բազրեանդի հայրենի հողում անթնդված:

Ս. Հայկունուն խորապես հուզել ու մտահոգել է իր ժողովրդի տխուր և անօգնական վիճակը: Թուրքական կառավարության կողմից կազմակերպված քրդերի հետամուտ ավազակային խմբերը կողոպտում, ավերում էին Ալաշկերտի շենքերը: Սարսափահար եղած գյուղացիները թողնում հեռանում էին հարազատ վայրերից: Հրոսակախմբերը հետապնդում էին փախստական հայերին և սահմանի վրա նրանց հասնելով՝ խոշտանգում, կոտորում:

Ս. Հայկունուն անշափ վիշտ ու դառնու-

թյուն են պատճառում այդ դեպքերը և նա, որպես իր միջավայրի առաջավոր ու աչքի ընկնող մարդկանցից մեկը, դիմում է տեղի կառավարական ատյանին՝ խնդրելով զսպել ավազակաբարո ամբոխի մոլի կատաղությունը: Սակայն նրանք ոչ միայն ուշադրություն չեն դարձնում նրա աղաչանքին, այլև բռնում ու սաստիկ գանահարում են նրան: Այդ իրադարձությունները բողոքի ալիք են բարձրացնում ալաշկերտցիների մեջ: 1888 թվականին, այդ գավառի ամեն գյուղից 2—3 մարդ՝ գյուղի լիազորությամբ դնում են Դավո գյուղի մոտ գտնվող ս. Գևորգ ուխտավայրը, որտեղ կազմակերպված գաղտնի ժողովում որոշում են «Ձեռք-ձեռքի տված հնար եղածին չափ դարման տանիլ ազգային կացությանը»³⁷: Ժողովականներն իրենց միջից մի քանիսին ուղարկում են Կ. Պոլիս՝ խաչատուր Կերեքյանի և ուրիշների հետ խորհրդակցելու, իսկ մի քանիսին Կարին՝ նահանգապետին բողոքելու կատարված բռնությունների համար: Այդ բողոքին ի պատասխան՝ սկսվում է 1889 թվականի Կարնո կոտորածը, ահ ու սարսափի մատնելով շրջակա հայությունը:

Ժամանակն իր պահանջներն էր թեւադրում. խմորվում էր հայ հասարակական-քաղաքական միտքը: 1887 թվականին ժնկում մի խումբ մտավորականների կողմից (Ավետիք Նաղարեկյանի գլխավորությամբ) կազմակերպվում է հնչակյան կուսակցությունը, որի կենտրոնական օրգանն էր «Հնչակ» թերթը: Ըստ հնչակյանների գաղափարախոսության, սոցիալիզմին հասնելու հետ միասին նրանց հիմնական նպատակն էր ազատագրել Արևմտյան Հայաստանը սուլթանական բռնապետության լծից: Այդ գործի համար նրանք ստեղծում են գաղտնի կազմակերպություններ, դրամ են հանգանակում, մարդիկ ու զենք են փոխադրում Արևմտյան Հայաստան, նույնիսկ տեղորոշական փորձերի ու զինված ելույթների են դիմում: Դժգոհ ժամանակաշրջանում, Բաքվից ու Թիֆլիսից Հայաստան եկող հասարակական գործիչների նման Կ. Պոլսից ևս Հունաստանի, Բուլղարիայի և Ռուսաստանի վրայով, Հայաստան էին անցնում հայրենասեր երիտասարդներ՝ իրենց հետ բերելով ազատատենչ

³⁵ «Երկրագունդ», Կ. Պոլիս, 1885, № 5, էջ 210—214:

³⁶ ԳԱԲ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 107:

³⁷ Լույս տեսնում:

Բուլղարիայի և ռուս մեծ ժողովրդի առաջավոր զաղափարները:

Տեղյակ լինելով ժամանակի ոգուն, Ս. Հայկունին արդեն իր համար մշակել էր հասարակական-քաղաքական որոշակի ըսկզբունքներ: Ս. Հայկունին մասսաներին կոչ էր անում ռենք գնել ու ինքնապաշտպանութան դիմել, մինչև իսկ նա իր սուղ միջոցներով հրացաններ է գնում, որպեսզի գյուղացիները զինվեն, սակայն զգալով, որ իր ջանքերն ապարդյուն են, և որ ամենից կարևորն է՝ դեռևս պատրաստի հող չկա համաժողովրդական ապստամբության համար, նա վերադարձնում է արդ զենքերը՝ միայն մի քանի հատ պահելով իր համար: Ս. Հայկունին պարզ գիտակցում է, որ իր գոյութունը հազիվ քարշ տվող չքավոր, հայ գյուղացին նյութական ավելորդ միջոցներ չունի զենք գնելու, որ ամենից էականն է, հնարավոր չէ նրան միանգամից ոտքի հանել ու պայքարի առաջնորդել: Ահա թե ինչու այդ հարցում նա վճռական տեղ էր տալիս ժողովրդական զանգվածների զաղափարական դաստիարակությանը:

Ս. Հայկունու հասարակական գործունեության այս զգույշ քայլերն, անշուշտ, չեն վրիպում թուրք կառավարության ուշադրությունից: Վերջինս հետապնդում է Ս. Հայկունուն՝ դատապարտելով 101 տարվա տաժանակրության:

Ժողովրդական ուսուցիչն ստիպված լքում է դպրոցն ու ընտանիքը, ինչպես և հողի տակ անթեղած իր մեծ քանակությամբ արծեքավոր նյութերը և փախչում, անցնում է ռուսական սահմանը: Երկար ժամանակ անգործ թափառում է Կարսում, Կաղզվանում, ապա ընկնում է Վաղարշապատում, Երևանում, անցնում է Իգդիր, ձմեռում է Կողբում, ապա՝ գնում Պարսկաստան:

1893 թ. Ս. Հայկունու մեծ աղջիկը՝ Արուսյակը, հայ փախստականների հետ միասին Ալաշկերտից մի կերպ գալիս ու գտնում է իր հորը: Նա Արուսյակից տեղեկանում է, որ իր փախուստից հետո, թուրքերը ձերբակալել են իր կնոջը, որը բանտում հուսահատությունից թունավորել է իրեն ու վախճանվել: Իր անձնական վշտի ու հոգսերի տակ տրորված Հայկունուն միաժամանակ մտահոգել է հայրենիքի ողբերգական դրությունը և իրենից հեռու գտնվող իր զավակների

անօգնական վիճակը: Նա իր դստեր հետ մեկնում է Թավրիզ այն հույսով, որ մի հարմար աշխատանք գտնի և կապ հաստատի Ալաշկերտի հետ՝ օգնելով և՛ իր երեսաներին, և՛ իր հայրենակիցներին: Սակայն իզուր են անցնում այդ ջանքերը, և նա վերադառնում է Վաղարշապատ:

Իր այդ դեգերումների ընթացքում Ս. Հայկունին, հոգեկան ու նյութական ծանր պայմաններում ապրելով հանդերձ, երբեք չի մոռանում հավաքել ու զրի առնել ազգազրական, տեղազրական ու բանահյուսական կարգի պատահած նյութերը: Ուր որ գտնված եմ,—գրում է նա,—ամենե՛ն նեղ օրիս մեջ միակ մխիթարությունս գտած եմ գրելով անցնել, այս տեղերում ևս բավական ազգազրական (և ոչ միայն ազգազրական—Վ. Ս.) նյութեր հավաքած եմ:³⁸

Սկսած 1893 թվականից Ս. Հայկունին ապրում և աշխատում է էջմիածնում: Ժամանակի հայտնի մտավորական, հրապարակագիր Նիկողայոս Քարամյանը հետևյալ կերպ է արտահայտվել նրա մասին. «...էջմիածնի պատկանելի պատերի տակով անցնելիս, Ներսիսյան հոյակապ լճի եզերքին շրջելիս կամ հին ավերակ ժառանգավորաց դպրոցի միջանցքով անցնելիս կհանդիպենք հաճախ մի անձի... վտիտ, կապույտ աչքերով և մեղմ հայացքով: Ծատ անգամ այդ անձին կտեսնեք երկու որբերի հետ, որոնց թևից բռնած նա մտամոլոր շրջում է: Անտարբեր մի՛ անցնեք նրա կողքից, այդ չքավորության կերպարանքի տակ մի հայ ուսուցիչ է անցնում ձեր քովից, կանգ առնեք, խոսեցրեք նրան: Նա շատ բաներ ունի ձեզ պատմելու, ոհ, շատ բաներ: Հերիք չէ՝ միթե, եթե ձեզ ասեմ, որ այդ անձն այժմյան աղետալի Հայաստանի բոլոր կողմերը շրջել է, ամեն տեղ ապրել է և ճանաչում է յուր հայրենի երկրի թե քարերն և թե ժողովուրդը: Ես շատ անգամ անցել եմ դրա մոտով, պիտի խոստովանեմ մեղքս, արժանի չեմ համարել ուշադրության, որովհետև ծանոթ լինելով ս. էջմիածնի հանգամանքներին, գիտեմ, որ շատ անգամ բախտախնդիրներ և կամ արհեստավոր աղքատներ սիրում են մայրաթոռի հովանուն ապաստանել, որոնց հետամուտ եղողը հաճախ մի նոր հուսախաբություն է պատահում:

³⁸ ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 107:

Սակայն իմ անտարբերությունը երկար չտևեց. վաճառքի մեջ յուր որբերի հետ ապրող մի աշխարհական նորություն էր ինձ համար. հարց ու փորձ արի և իմացածս շատ բան չեղավ:

— Դա պ. Հայկունին է, համալսարանի վարժապետն է:

Իսկ այդ «համալսարան» կոչվածը ոչ այլ ինչ էր, եթե ոչ վաճառքի ներքին սեղանատունը: Իսկ ովքեր էին այդ համալսարանականները, ոչ այլ ինչ, եթե ոչ Հայաստանի տարբեր գավառներից գաղթած շուրջ երկու տասնյակ որբեր, որոնք հավաքվել էին վաճառքի ներքին սեղանատունը և Հայկունին, հրիմյան Հայրիկի հանձնարարությամբ, պարապում էր նրանց հետ՝ պատրաստելով ճեմարան ընդունվելու համար: Այդ շրջանն անցնելուց հետո, Հայկունին ղրկվելով իր սաներից սկսում է զբաղվել էջմիածնի տպարանի սրբագրությամբ³⁹:

Ընդամենը տասը ութիկի ամսավճարով նա սրբագրում էր «Արարատ»-ի համարները: Ձործս տասը վարդապետի գործ էր, սակայն դարձյալ վարդապետներից շատերը վրաս կհոխորտային. «ձրիակներ» անվանելով շատ անգամ երեսիս կշարտեին⁴⁰, — գրում է Հայկունին խորապես վշտացած:

1893—95 թթ. Արևմտահայաստանի զանազան գավառներում ծայր են առնում սուլթանահամիդյան արյունոտ քաղաքականությունը՝ սպառնալով իսպառ ոչնչացնել հայ ժողովրդին: Շուրջ երեք հարյուր հազար մարդկային զոհեր մատուցելուց հետո՝ հալածական հայ գաղթականները «արյան ծովը ճեղքելով անցնում են սահմանը, որպեսզի բարեկարգ ուսական երկրին մեջ անվրդով ապրին», — գրում է Ս. Հայկունին իր «Բնագրեանդի» նախաբան-ուղերձում: Այս տողերից պարզ է դառնում, թե որքան բուռն է եղել հեղինակի սերն այն ժողովրդի նկատմամբ, որն հայրենի հողից զրկված, աստանդական թափառում էր՝ իր հույսը կապելով ուսահայության հետ:

Քաղաքական այս թռուրտի ժամանակ էջմիածնում առանձնապես նշանակալից է եղել հրիմյան Հայրիկի դերը: Սույն տարագրյալ գաղթականը, — գրում է Ս. Հայկուն-

նին նրա մասին, — որք գանասար գայլերու ոհմակներու ճիրաններեն հագիվ զերծած, որք ի կորուստ մատնած տուն և տեղ, հարստություն և հայրենի ամենաքաղցր վայելություն, զրկված զավակե, հորմե, եղբորմե և սիրելի բարեկամներե, բյուրալոր հառաչանքներով տոշորված մի հուսո աստղ յուրյան առաջնորդ բռնած շունչն ու հոգին բերանը առած՝ հեալով կղիմե փրկարար մսուրն, կղիմե յուր հայրիկի դուռը բախելու, յուր սրտի ծանրագույն ցավերը հայրիկի առաջ պարզելու, յուր արհնալից անդամներն գործվագութ հորդ բարձր ատյանին ներկայացնելու և դարձան խնդրելու յուր անկշռելի, անտանելի ցավոց համար»⁴¹:

Այդ ժամանակաշրջանում վանից, Արճե- շից, Արծկեից ու զանազան վայրերից ռուս- մաթիվ անապաստան գաղթականներ եկել կուտակվել էին Մակուի (Պարսկաստան) շրջակա գյուղերում: Քաղցն ու համաճարակը ավերներ էր գործում: Ս. Հայկունին, որ հրիմյան Հայրիկի կոնդակով⁴² տեղի Թաղևոս Առաքյալ վանքում կառավարիչ էր նշանակված, կարճ ժամանակամիջոցում ոչ միայն կարգավորում է վանքի տնտեսությունը, այլև հրիմյան Հայրիկի հանձնարարությամբ մեծապես օգնում անապաստան գաղթականներին: Նա տեղացիներից գաղթականների համար սենյակներ ու գոմեր է վարձում և տեղավորում նրանց. վառելիք ու սննդամթերք, հագուստ է բաժանում կարիքավորներին: Նրանցից շատերը այստեղ ևս ցրտին ու քաղցին չդիմանալով, հիվանդանում են, Ս. Հայկունին նրանց դեղորայք է հասցնում:

Հայ ժողովրդի ֆիզիկական գոյության նկատմամբ Ս. Հայկունու մտահոգվածությունը սերտորեն զուգակցվում է այդ նույն բազմաշարք, բայց տաղանդավոր ժողովրդի հոգևոր գանձերը պահպանելու և անմահացնելու ձգտումին: Այդ իսկ նպատակով

⁴¹ Ս. Հայկունի, Թագրեանդ ջրաբաշխ գավառ, Կուրջապատ, 1894, էջ 3:

⁴² Այսու Հայրապետական կոնդակա մերով կարգմբ զքեզ ուսուցիչ դպրեվանից Ս. Թաղէի, միանգամայն և տեսուչ դպրոցաց շրջակայ գիւղօրէից խանութեանն պատուիրելով փութալ հասանել ի տեղի պաշտամանց և քոյով տոկուն շանասիրութեամբ սկսանիլ զգթուարին գործդ կրթական: Այլ և պատուէր հրամանի տամբ կառավարել զկալուածս վանից ժողովել զարդինս նորին և մատակարարել զայնս: ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 142:

³⁹ «Արձագանք», Թիֆլիս, 1895, № 89:

⁴⁰ ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 107:

նա մի կողմից այդ գաղթականներից գրի է առնում բանահյուսական բազմազան ու հարուստ նյութեր, մյուս կողմից, ամենայն խնամքով ու հոգատարությամբ, արտագրում և ցուցակագրում է այդ վանքում ցիրուցան թափված տասնյակ ձեռագիր հիշատակա-րանները:

Սակայն փոխվում է դեպքերի ընթացքը. Առաքելոց վանքն է ուղարկվում Հովհաննես վարդապետ Բաղդենին: Այդ դաժան ու հար-բեցող ճամրդ-գազանը՝ շատ է տանջում Հայ-կոսնոսն և նրա Կրկու զավակներին՝ Արուս-յակին ու Գուրգենին, որոնք փախել էին Ալաշկերտից և ապրում էին իրենց հոր հետ: Այս անգամ էլ Բաղդենին մի շարք զրպար-տություններ ու հերյուրանքներ հորինելով՝ նրան հալածում է և աշխատանքից հեռաց-նում: Ձեռք զրկեցի Թադևոս առաքյալ, որ քո հին մեղքերդ քավես, բայց դու դարձյալ նույն ճիվաղն ես, ի՞նչ կուզես Հայկու-նիեն»⁴³,—գրում է կաթողիկոսը նրան հղած իր նամակում: Բայց այդ ևս չի զգաստաց-նում Բաղդենուն:

Ս. Հայկունին չհանդուրժելով նրա լարած որոգայթները, Խրիմյան Հայրիկից օգնու-թյուն է հայցում. «Ի՞նչ անեմ, վեհափառ տեր,—գրում է նա,—գործ չկա, մուրալ կամաչեմ, տեղացիքս (խոսքը հոգևորական-ների մասին է—Վ. Ս.) այնպես մուրացկան են, աստծո զրպանից (իմա՝ վանքի տնտի-սությունից—Վ. Ս.) կզողնան: Ի ձեռք կխնդրեմ, որ շնորհ անեք մի վերջին օգնու-թյուն, որով զայս սոսկալի դրությունից փրկեմ զավակներուս կյանքը»⁴⁴:

Հայկունին ճանապարհածախսն ապահո-վելով իր երեխաների հետ վերադառնում է էջմիածին: Սահմանադիտում պարսկական մաքսատունը նրա հավաքած ազգագրական ու բանահյուսական նյութերի մի մասը վտանգավոր նկատելով բռնագրավում է, որը և անհետ կորչում է:

Այնուհետև Ս. Հայկունին էջմիածնում ստանձնում է վանքի բանջարանոցի, Ղոփ այգու, հնձանի, գինու պահեստի և ապա՝ ընթերցասրահի հսկիչի պարտականությունը:

Այդ տարիներին իր կատարած աշխա-տանքների մասին նա գրում է. «Ամեն ինձ

հանձնված գործ իղճի մտոք կատարած եմ, սակայն վանական կառավարության վերջին տարիներուս մեջ նշանակված անդամները, որք հազար ու մի ստորաբարձ միջոց-ներով ձեռք ձգած են անդամությունը, այսպիսի անձինք ի՞նչ կարող էին ճանաչել հավատարիմն ու անհավատարիմը, մինչև անգամ ինքզինքնին չէին ճանաչեր, ո՞ւր մնաց զիս ճանաչեին: Արդեն այդ գիտեի ու չէի հուսար, որ ճանաչեն, դորա համար իսկ ցավ չեմ զգար, միայն իմ խիղճը ճան-դարտ է ճարա ճամար, որ քրտինքովս ապ-րած եմ, վաճճին ոչ մի վնաս չտալեն զատ օգտակար ևս եղած եմ ընդմիջու, Իսկ դա-տարկապարտ կարգ մի վարդապետներու ճա-մար գործս առ ոչինչ, կերածս ձեռակերու-թյուն կճամարեմ»⁴⁵:

Էջմիածնի պատերի տակ ապաստան գտած Հայկունին ահա այսպես է բնութագրում այդտեղ ծվարած դատարկապորտ վարդա-պետներին: Նա լավ էր հասկանում, որ հայ եկեղեցին Գարեգին Սրվանձտյանցի, Ղևոնդ Ալիշանի և Խրիմյան Հայրիկի նման բացա-ռիկ դեմքեր ժողովրդին պարգևելուց բացի տվել է նաև բազմաթիվ պորտաբույծներ, ժողովրդի հաշվին հղիացող դատարկա-պորտներ:

Կյանքի այդ ծանր պայմաններում Ս. Հայ-կունու միակ մխիթարությունը լինում է այն, որ նա հնարավորություն է ունենում «Աղա-րատ» ամսագրի տարբեր համարներում, ինչպես և առանձին գրքուկներով լույս ընծայել «Բագրեկանդ», շրաբաշխ զավառ տեղագրական-ազգագրական ծավալուն ու-սումնասիրությունը (1894 թ.), «Մոքոս» ժողովրդական ավանդավալը (1896 թ.), «Հուլիսիկ Սամել հովիկ» վիպակը (1895 թ.), «Շվոտ և Դուլվաթ» ազգագրական հավատալիքը (1895 թ.), «Սեպտագիք ու համշենցիք» (1895 թ.), ինչպես նաև ժողո-վրդական երգեր ու վեպեր, հեքիաթներ ու առածներ:

Երկար տարիների ընթացքում նրա քրտնաջան աշխատանքով գրի առած բանա-հյուսական-ազգագրական այդ նյութերի հրատարակությունը մեծ համբավ է բերում Հայկունուն, բայց նյութական և ոչ մի օգուտ,—գրում է անխոնջ բանահավաքն իր

⁴³ ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 142:

⁴⁴ Նույն տեղում, վավ. 117:

⁴⁵ Նույն տեղում:

ժամանակի մտավորականության իրավա-
կան ծանր վիճակն ընդգծելով⁴⁶:

Այդպիսի տխուր պայմաններում անգամ
Ս. Հայկունին չի մոռանում իր որբացած
ընտանիքի հոգսերը: Նա Արուսյակին փո-
խադրում է Երևան՝ Հոփսիմյան իգական
դիմնագիւյում կրթություն ստանալու:

Տարիների ընթացքով իր հավաքած
ժողովրդական նյութերի ճակատագրով մտա-
հոգված Հայկունին 1898 թվականին մի
նամակ է գրում Մոսկվայի Հազարյան ճեմա-
րանի տեսուչ պրոֆ. Գր. Խալաթյանցին՝
հայտնելով, որ ինքն ունի տեղագրական,
ազգագրական ու բանահյուսական տարբեր
տեսակի նմուշներ. «Գրվածքներս բազմա-
թիվ են և մի ճյուղի չեն պատկանիր, և յլ
շատ մի գավառաբարոններով գրված
զանազան նյութեր են և նրանցից մի մասը
լավ ասողների բերանից առնելով հաջող
դուրս բերած եմ, մասամբ ևս անհաջող»⁴⁷:

Ս. Հայկունին իր գրառումների ծավալուն
ցուցակն ուղարկում է Գր. Խալաթյանցին,
հայտնելով, որ իր հավաքած նյութերից
առանձին հատվածներ հրատարակվել են
«Արարատ» և այլ պարբերականներում:
«Սակայն ինձ համար հաճելի չէ,— ավել-
ացնում է Հայկունին,— գրվածներս իրարից
բաժանել. զղջացել եմ մինչև այժմ տպված-
ներուս վրա անգամ»⁴⁸:

Գր. Խալաթյանցին հիացմունք է պատճա-
ռում «անսպառ կամքի ուժով և քրտնաջան
աշխատանքով» կուտակված այդ անգն-
հատելի հարստությունը և խոստանում է
«էմինյան ազգագրական ժողովածուի»
առաջիկա հատորներով լույս ընծայել այդ
նյութերը, հեղինակին վարձատրելով՝ 100 ռ.
և 300 արտատպված օրինակ:

Հետին չբավորության մեջ գտնվող Հա-
կունին ոչ այնքան նյութական ակնկալիքով,

⁴⁶ Նախահոկտեմբերյան շրջանում հայ գրողն իր
գրքի տպագրության համար վարձատրություն չստա-
նալուց բացի՝ ստիպված էր սպասել մինչև գրքերի
վաճառվելը, որոնց միայն փոքր մասն էր պատկա-
նում հեղինակին:

Թիֆլիսի «Գոտենբերգ» գրախանութը վաճառում էր
Ս. Հայկունու գրքերը, որոնց շնչին տոկոսները գանձելու
համար Հայկունին էջմիածնից հասնում էր Թիֆլիս՝
ստացածը ճանապարհածախսի հատկացնելով:

⁴⁷ ԳԱԹ, Գր. Խալաթյանցի ֆոնդ, բաժին 5, վավ 97 հ:

⁴⁸ Նույն տեղում, վավ. 420, 1898, նոյեմբերի 14-ի
նամակը:

որքան իր ժողովրդի հոգևոր մշակույթը
հավերժացնելու նպատակով՝ իր պատաս-
խան նամակում գրում է. «Առ այս իմ մեծ
աշխատանքիս փոխարեն Ձեր վարձատրու-
թյունը շատ աննշան է. և ես անշափ խստա-
պահանջ չեմ, եթե կարելի է ինձ միայն
100 օրինակ արտատպություն տվեք մյուս
ինձ հասանելիք 200 օրինակի արժեքը՝ վճա-
րեք, որով փոքր-ինչ վիճակս ապահովեմ,
դարձյալ Ձեզ համար նյութեր հավաքեմ՝
ավելի կանոնավոր ու կատարյալ. այլևայլ
վայրեր ունեցած գրվածքներս կարողանամ
բերել տալ: Դեռ մաքուր շանցուցած շատ
նյութեր կան մոտս, սակայն ապրուստի
համար աննշան ծառայությամբ պարապելով
միջոց չունիմ գրիչ ձեռք առնել»⁴⁹: Եվ իրոք,
ապրուստի հոգսն այդ ժամանակ ստիպում
էր Ս. Հայկունուն զբաղվել էջմիածնի գւմի
կենդանիների մորթու վաճառքով, որից
ստացված գումարը նա հանձնում էր վանքի
կառավարությանը⁵⁰:

Գր. Խալաթյանցը ևս զգում է իր առաջա-
կած վարձատրության շնչին լինելը և պատ-
ճառաբանում է, թե «ազատ գումար չկա» և
Ս. Հայկունուն խորհուրդ է տալիս «Բագ-
րևանդու սովորությունների մեջ առանձին և
մանրամասն ուշադրություն դարձնել նույն
գավառի իրավաբանական սովորություն-
ների վրա» որչափ հնարավոր է իր հրատա-
րակած ծրագրի (87—111 էջերի) հարցում-
ներին համապատասխան «մի ամփոփ աշ-
խատություն պատրաստել այդ նյութերի մա-
սին, այն ժամանակ հնարավոր կլինի առա-
ջարկված գումարի եռապատիկը ձեռք բերել
այլ աղբյուրներից»⁵¹:

Գր. Խալաթյանցը խորհուրդ է տալիս
Ս. Հայկունուն, բացի Բագրևանդից ընդգրկել
նաև «ղրացի մյուս գյուղերի հայ ժողովրդի
իրավաբանական կյանքը»⁵²: Գրության հետ
նա ուղարկում է իր «Մրագիրը»:

Գր. Խալաթյանցը համոզված էր. «Հայկու-
նին ձեռնահաս է կատարել այդ գործը,
նկատի ունենալով, որ պահանջվում է հեռավոր
նյութ, իրական կյանքից վերցրած ամփոփ

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Մաշտոցի անվան Մատենադարան, կաթողիկոսա-
կան դիվան, ցուցակ № 20, թղթ. 237, վավ. 95:

⁵¹ ԳԱԹ, Գր. Խալաթյանցի ֆոնդ, բաժին 5, վավ.
97 դ, 1900 թ. փետրվարի 3-ի նամակը:

⁵² Նույն տեղում:

տեղեկություններ և ոչ թե գիտական և քննական հետազոտություն»⁵³։

Ընդունելով պրոֆ. Գր. Խալաթյանցի առաջարկը, Ս. Հայկունին նրան տեղեկացնում է, որ ինքը հիշում է մի շարք սովորություններ, սակայն մեծ մասը պետք է լրացնել, Ծաղկազարդին դուրս գալ, շփվել գաղթականների հետ, նրանց մեջ ապրել⁵⁴, և եթե արդյունքները գոհացուցիչ չլինեն, ստիպված պետք է մեկնել Կարսի և Կազվանի մի քանի գյուղեր⁵⁵։

Վանքի Ղոթի այգու հսկիչի պաշտոնը կատարելու հետ միասին, Հայկունին տոն օրերին և արձակուրդներին շրջագայում է գյուղերն ու ավանները. «Թափանցում ժողովրդյան խավերու մեջ, պատահած դեպքերը իբրև օրինակ առատորեն առաջ բերում»⁵⁶, ծրկար ու քրտնաշան աշխատանքով ստակավ առ տակավ որոճալով⁵⁷, բազմաթիվ նոր տվյալներ ավելացնելով, նա իր այդ սովոր ուսումնասիրությունն ուղարկում է Մոսկվա։

«Վաստակաշատ ազգագրագետին» գրած իր նամակում Գր. Խալաթյանցը հայտնում է, որ Լազարյան ճեմարանի մասնագիտական դասարանների դասախոսների խորհրդի սեպտեմբերի 9-ի նիստում լսվեց իր զեկուցումը՝ Հայկունու «Նյութեր ժամանակակից հայերի սովորության իրավունքի» ձեռագիր աշխատության մասին։ Նուրն խորհրդի հատուկ որոշմամբ Ս. Հայկունու այդ աշխատությունը արժանանում է Քանանյան մրցանակի 3/4 մասին, այսինքն՝ 400 ռուբլի գումարի։ Սակայն այդ գրվածքը դեռ իր բոլոր մասերով կատարյալ չէր, ուստի վերադարձնում է, որպեսզի լրացնի իր սկսած Ալաշկերտի ունևոր, միջակ և աղքատ ընտանիքների նկարագրությամբ, որից հետո հնարավոր կլինի այդ ուսումնասիրությունը հրատարակել։ Բացի այդ Լազարյան ճեմարանի տեսուչը Ս. Հայկունուց պահանջում է ուղարկել իր բոլոր գրառումները՝ «Էմինյան ազգագրական ժողովածուի» հետագա հատորների հրատարակությունը նախապատրաստելու համար։

⁵³ ԳԱԹ, Գր. Խալաթյանցի ֆոնդ, բաժին 5, վավ. 97 դ. 1900 թ. մարտի 6-ի նամակը։

⁵⁴ Նույն տեղում, 1900 թ. մարտի 24-ի նամակը։

⁵⁵ Նույն տեղում, վավ. 426։

⁵⁶ ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 107։

⁵⁷ Նույն տեղում, Գր. Խալաթյանցի ֆոնդ, բաժին 5, վավ. 429։

1901 թվականից սկսվում է Ս. Հայկունու բանահյուսական նյութերի հրատարակությունը։ Էմինյան կտակի տնօրեն Գր. Խալաթյանցի հեռակա ղեկավարությամբ էջմիածնի տպարանում լույս է տեսնում «Էմինյան ազգագրական ժողովածուի» երկրորդ հատորը, որն ընդգրկում էր հայ ժողովրդական բազմաթիվ հեքիաթներ ու «Սասունցի Դավիթ» ժողովրդական վեպի Մոկաց երկու տարբերակ։

Հատորի նյութերը կազմելու, խմբագրական, սրբագրական և նույնիսկ տպագրության հետ կապված գրեթե բոլոր աշխատանքները ծանրանում են Ս. Հայկունու վրա։ Նա իր առօրյա զբաղմունքներից հետո, գիշերներ է լուսացնում, որպեսզի «Խալաթյանցի և այլ բանասերների առաջ ամոթով չմնա», բայց պատկառելի ծերունին զգում էր տպագրական աշխատանքի լուրջ դժվարությունը և համեստորեն խոստովանվում. «Թեև որչափ ևս տքնիմ, կզգամ, որ թերություններ պիտի լինին, սակայն որչափ կարելի է պիտի աշխատիմ թերություններու թիվը պակսեցնել»⁵⁸։

Լույս ընծայված ժողովածուն բավական մեծ ընդունելություն է գտնում գրասեր հասարակության կողմից։

Հրապարակված մի շարք գրախոսականներում, գովեստով են խոսում «Լազարյան ճեմարանի և ծերունու»⁵⁹ հասցեին, իր ժամանակին Ստ. Մալխասյանցի նման գիտնականն անգամ լեզվաբանական ու բարբառագիտական որոշ թերություններ նկատելով հանդերձ, բարձր է գնահատել այդ ժողովածուն որպես հայ բանագիտության մտքի պատմության մեջ նշանակալից մի երևույթ⁶⁰։

1902 թ. լույս է տեսնում «Էմինյան ազգագրական ժողովածուի» 4-րդ հատորը։ Այն ընդգրկում էր շուրջ հիսուն հայ ժողովրդական հեքիաթ, ինչպես նաև վեպի Շատախի, Արարատյան երկու տարբերակ⁶¹։ Այս բոլորի հետ միասին Ս. Հայկունին բարձր է գնահատել նաև քուրդ ժողովրդի ստեղծագործ կարողությունները։

⁵⁸ ԳԱԹ, Գր. Խալաթյանցի ֆոնդ, բաժին 5, վավ. 429։

⁵⁹ Տե՛ս «Արարատ», Վաղարշապատ, 1902, հունվ., էջ 7։—77, 1901 թ. փետրվարի 8-ի նամակ։

⁶⁰ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1902, № 70։

⁶¹ Տե՛ս «Էմինյան ազգագրական ժողովածու», հատոր Դ, (հավաքեց Ս. Հայկունի), Մոսկվա—Վաղարշապատ, 1902։

ինչպես հայտնի է, մեր իրականության մեջ առաջին անգամ հայ մեծ լուսավորիչ հաշատուր Աբովյանը «Քրդեր» ուսումնասիրությանը քննության է առել նրանց կյանքը:

Այնուհետև, հայ բանագիտության ռահ-վիրա Գարեգին Սրվանձտյանցն իր «Գրոց-Րոց», «Համով-հոտով» և այլ գրվածքներում անդրադարձել է վանա ծովի շրջակայքում բնակություն հաստատած քրդերի կենցաղին, նրանց սովորություններին ու հավատալիքներին և ընթերցողներին մատուցել քրդական «Սիամանթո» և հաջնդարն ժողովրդական սիրավեպի նախնական տարբերակը:

Քրդերի կյանքն իր ժամանակին զբաղեցրել է նաև եվրոպացի մտածողներ Մո-րիս Վազներին, Լյարդին, Լերխին, Սոցի-նին և ուրիշների: Սակայն այդ մասին եղած նյութերը, այնուամենայնիվ, կցկտուր էին ու անբավարար: Գերմանացի քրդագետ պրոֆ. Սոցինի ասելով՝ «Քրդերի մասին տեղեկությունները հայերից էր սպասվում»⁸², Հայերի հետ կապված այդ մեծ հույսը Ս. Հայկունին արդարացրեց իր համեստ վաստակով:

Նա, հետևելով իր նախորդների՝ Խ. Աբով-յանի և Գ. Սրվանձտյանցի օրինակին, ոչ միայն հանգամանորեն նկարագրել է իր շրջագայությունների ընթացքում իրեն պա-տահած քրդական գուլգերն ու ավանները, այլև տվել է նրանց տնտեսական ու հոգևոր կյանքի պարզ ու անպաճույճ վերարտադրու-թյունը: Ս. Հայկունին չրի է առել քրդական բազմաթիվ օրհնանքներ, անեծքներ, առած-ներ ու ասացվածքներ⁸³, Առանձնապես նշա-նակալից է նրա երախտիքը վասպուրականի հայ ժողովրդի բերանում շրջող քրդական զանազան վիպերգերը հավաքելու գործում:

«Էմինյան ազգագրական ժողովածու»-ի հրատարակության տնօրեն, արևելագետ Գր. հալաթյանցը Ս. Հայկունուն հղած իր մի նամակում գրվատանքով է խոսում այդ մասին, «Ձեր այս աշխատանքը,—գրում է նա,—առանձին ուշադրության կարժանանա բոլոր եվրոպացի իրանագետների և հատկա-պես Ֆիրդուսիի «Շահ-նամե» վեպը ուսում-նասիրողների կողմից: Այդ, վերին աստի-

ճանի կարևոր նյութերը գուցե աննկատելի մնալին հետազոտողների համար»⁸⁴:

Ոգևորված այս քաջալերանքից, Ս. Հայկու-նին խնդրում է Գր. հալաթյանցին, որպեսզի նրա աշակցությամբ այդ վիպերգերի մի շարք եղանակները ձայնագրվեն. «Քրդական վեպերու հետ նոցա խորխտ, քաղցր, ընտիր եղանակներն ի լույս հանվին լավ կլինի»:

Այդ մասին կարծեմ մի մեծ ծախս չլինի, եթե տեղս հայր Կոմիտաս հանձն առնե ձայնագրել»⁸⁵:

Ս. Հայկունուն հաջողվում է այդ գործին մասնակից դարձնել նաև մեծ երաժշտա-գետին: Կոմիտասը մանրամասն ուսումնա-սիրում է քրդական տասներեք վիպերգի եղանակները և ամենայն ճշգրտությամբ գրանցում: Ըստ երևույթին, պետք է ընդու-նել, որ քրդական երաժշտական բանահյու-սության առաջին հրապարակումը այդ փոք-րիկ տեսարան է՝ կցված Ս. Հայկունու «Հայ-քրդական վեպին»⁸⁶:

Կոմիտասյան նոտագրումները (Ս. Հայկու-նու գրառումներով ու թարգմանություններով հանդերձ) մեծապես բարձրացնում են այդ հատորի աշտեքը, նրան տալով ոչ միայն քրդագիտական ու լեզվական, այլև երա-ժշտագիտական նշանակություն⁸⁷:

Բանահյուսական նյութերի հրատարակման դժվարությունները մի կողմից, իր զավակ-ների դաստիարակության ու նրանց ապ-րուստի հոգսը մյուս կողմից հոգեպես և ֆիզիկապես սպառում են Հայկունուն: Բայց ի բնե տոկուն և դիմացկուն ծերունին անդ-րադառնալով իր դրությամբ, գրում է. «Այդ մասին ոչ թե վիճակես կզանգատիմ, այլ

⁸⁴ ԳԱԲ, Գր. հալաթյանցի ֆոնդ, վավ. 97հ:

⁸⁵ Նույն տեղում, բաժին 5, վավ. 443:

⁸⁶ Տե՛ս «Էմինյան ազգագրական ժողովածու», հատոր Ե (հավաքեց Ս. Հայկունին), հավելված, Քրդական եղանակներ (ձայնագրեց Կոմիտաս վարդապետ), Մոսկվա—Վաղարշապատ, 1904:

⁸⁷ 1904 թվականին «Մուրճ» ամսագրում լույս է տեսնում «Վանի նահանգը ներկայումս» ծավա-լուն հոդվածաշարը «Մերուկ» կեղծանունով: Այդ կապակցությամբ Արսեն Ղազիկյանն իր «Հայկական նոր մատենագրություն և հանրագի-տարան հայ կյանքի» Ա հատորում գրում է. «Արդեն շարված էին սույն էշերը, երբ իմացա թե Մերուկ ծած-կանումն է Ս. Հայկունին» (էջ 1218): Ձեռքի տակ եղած փաստերը չեն համոզում, թե «Մերուկը» Ս. Հայ-կունին է:

⁸² Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1895, № 91:

⁸³ Տե՛ս «Էմինյան ազգագրական ժողովածու», հատոր Զ, հավաքեց Ս. Հայկունի, Մոսկվա—Վաղարշապատ, 1906:

բախտավոր կհամարիմ զիս, որ ազգիս գրու-
թյան բախտակից եմ»⁶⁶։

Այդպիսով, իր և իր ժողովրդի տխուր և
անօգնական վիճակը նույնացնելով Ս. Հայ-
կունին ելք ու միջոց է որոնում «Ազգի գրու-
թյունը բարվոքելու»⁶⁷։

Ս. Հայկունին գործոն մասնակցություն է
ցուցաբերում հնչակյան կուսակցության
աշխատանքներին՝ գլխավորելով այդ նույն
կուսակցության «Արաքս» մասնաճյուղը
(էջմիածնի գավառում)։

Ս. Հայկունին սկսում է առաջավոր գաղա-
փարներով խմորել էջմիածնի երիտասարդ-
ների (նաև ճեմարանականների) մտքերն ու
հույզերը։

«Հնչակյան Հայրիկի» (ինչպես անվանում
էին հնչակյանները Ս. Հայկունուն) հասա-
րակական-քաղաքական գործունեության այդ
շրջանի մասին նրա ժամանակակիցներից
մեկը գրում է. «Երբ վաղարշապատի միջ
իրենց ընտանիքը առանձին տուն վարձեց,
այդ տունը դարձավ արտաճեմարանական
մեր ակումբը, սոցիալ-դեմոկրատական
հնչակյան գաղափարներու հնոցը»⁶⁸։

Ս. Հայկունու քաղաքական այդ դիրքորո-
շումը, անշուշտ, չէին կարող հանդուրժել
էջմիածնի դաշնակցականները, որոնք մի
անգամ մուծ գիշերին հարձակվում են ծերու-
նու վրա և ծանր կերպով վիրավորում նրան։
Ցարական կառավարությանը ևս հայտնի է
դառնում Հայկունու ծավալած ընդհատակյա
գործունեությունը։ Մի անգամ Հայկունու
տանը կազմակերպված գաղտնի ժո-
ղովից հետո, երբ դեռ սեղանի վրա
սփռված էին ամեն տեսակի «վտանգավր»
փաստաթղթեր, ներս են մտնում ոստիկան-
ները, խուզարկում և հայտնաբերում են
հնչակյան կազմակերպության շրջաբերու-
կանի կնքված թերթիկը։ Հայկունու դուս-
տրը՝ Արուսյակը, չէր հասցրել մյուս փաս-
տաթղթերի հետ միասին այդ ևս թաքցնել։
Կասկածները հիմնավորվում են. Ս. Հայկու-
նուն որպես քաղաքական հանցավորի, ձեռ-
բակում են՝ դատապարտելով բանտարկու-
թյան. «Ս. Հայկունուն տոն բերին բանտից
մարմինն ու դեմքը վերքերով ծածկված, ցա-

րական ոստիկանները անգույթ կերպով ծեծել
էին ծերունուն և թրի բույթ կողմով բազմա-
թիվ վերքեր հասցրել նրան»⁷¹,— գրում է
որդին իր հոր մասին։

Ս. Հայկունու բանտում եղած ժամանակ
Արուսյակն ինքն է ստանձնում հոր պարտա-
կանությունները։ Նա ձեռնամուխ է լինում
«էմինյան ազգագրական ժողովածուի»
վեցերորդ հատորի նյութերը պատրաստելու
աշխատանքին։

Արուսյակն իր հասարակական գործունեու-
թյանը զուգընթաց, օգնում էր նաև իր ծի-
րունի հոր աշխատանքներին։ Խնամսյա տա-
ժանակիր բանտարկությունից հետո, Ս. Հայ-
կունին ոչ միայն ֆիզիկապես հյուծվել էր,
այլև բարոյապես ընկճվել. էջմիածնը, որը
մինչ այդ փոքր-ինչ նպաստում էր ազգագրա-
գետ-բանահավաքին, նրա բանտարկությու-
նից հետո, որպես ցարական կառավարության
կողմից վարկաբեկվածի, Ս. Հայկունուն ան-
վանարկում է «անբարեհույս» և «ոչ ցանկա-
լի» հետևարար և նրան արձակում է «Արարա-
տի» սրբազրիչի պաշտոնից, ինչպես և զրկում
Խրիմյան Հայրիկից ստացվող չնչին թոշու-
կից։

Աշխատանքից ու ապրուստի տարրական
պայմաններից զրկված ծերունի Հայկունին
իր միևնույն քաղաքում որոնում է ժողովրդի մեջ։
Նա իր միակ օգնական Արուսյակի հետ
շրջապայում է Վազարշապատի մոտակա
գյուղերը՝ «էմինյան ազգագրական ժողովա-
ծուի» վեցերորդ հատորի համար լրացուցիչ
նյութեր հավաքելու։ Արուսյակն ուղեկցում
է հորը, սիրով մտնում գյուղական
խրճիթները, տեսնում գյուղացիների կարիքն
ու չքավորությունը, հետամնացությունն ու
անգրագիտությունը։ Նա մեծ խնամքով ու
հոգատարությամբ գրի է առնում բազմաթիվ
սիրո ու վիճակի քառյակներ, հարսանիքի ու
սգո երգեր։ Արուսյակն ամենայն մանրամաս-
նությամբ հավաքում է ժողովրդական
սնտրիապաշտության մնացուկներ և զանա-
զան հավատալիքներ⁷²։

Թիֆլիսում լույս ընծայվող «Ազգագրա-
կան հանդես»-ի նյութերին ծանոթ Արուս-
յակը, անվանի բանահավաք Երվանդ Լալա-
յանին գրած իր նամակում հայտնում է.

⁶⁶ ԳԱԲ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 107։

⁶⁷ Նույն տեղում։

⁷⁰ ՄԼԻ, Գ. Հայկունի, էջեր Հայաստանի հեղափոխա-
կան շարժման պատմությունից, 1955, էջ 28։

⁷¹ Առանձն կիսուր, «Արարատ գրական», Բեյրութ,
1959, սեպտ., դեկտ.։

⁷² ԳԱԲ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. Ձ 108։

ստ. Զելինսկու կազմած ծրագրի համաձայն ծննդկանի և նորածնի վերաբերյալ նյութեր հավաքել հմ.

ա) Բաբերդի սովորութիւններին, որ ծրագրից ավելի ընդարձակ նյութեր է բովանդակում:

բ) Շիրակա Ղոմդու դյուղի, որտեղ ինքս անձամբ շրջել, տեսել և հավաքել եմ: Այս երկուսը բոլորովին պատրաստ են:

դ) Վաղարշապատի, որոնց մեծամասնութիւնը տականտես հմ եղել, դասավորված են և շուտով պատրաստ կլինի:

դ) Զանազան տեղերից, ինչպես են Կարսի, էջմիածնի, Մոկաց և այլ հատուկություններ, որոնք ի մի ամփոփելով մի ամբողջություն են կազմելու:

Խոստովանում հմ, որ ես որպէս սիրող հմ հավաքել. ոչ մի դրամական օգնություն նկատի չեմ ունեցել, սակայն նյութական անձուկ դրութիւնից ստիպված՝ այդ առաջարկութիւնը հանդգնում հմ անելու⁷³,— ամոթխածորեն ավելացնում է Արուսյակն իր ծերունի հորը նյութական օգնելու հուսով: Այդ ժամանակ Ս. Հայկունին, իրոք, թանձուկ դրութիւն» մեջ էր, չնայած նա մեծ դժվարութիւններ վերստացել էր իր սրբագրելի պաշտոնը և ամսական 12 ռուբլու համար ամբողջ օրն աշխատում էր, ավելի շուտ տանջվում. «Թեև շատ դժվար էր,— գրում է նա,— յոթնասունամյա հասակիս մեջ տալիս ես չէի ներքի, սակայն հացի խնդիր էր, շարունակեցի գիշերներն ես դորանով պարապիլ: Թե գրքիս նյութերը պիտի պատրաստեի, կարգավորեի, գրաշարի պիտի հանձնեի և սրբագրութիւնը անեի, մյուս կողմն ևս տպարանի մեջ տպված ավետարանի, Մաշտոցի և Արարատ—ի (ամսագրի —Վ. Ս.) սրբագրութիւնը պարապեի, գիշեր եղած է անքուն անցուցած հմ: Այս ծանր բեռն տակ Արուսյակ ինձ կօգնեի, ծախքս դարձյալ շատ էր, տան հացը և ուտելիքը շալակելով տուն պիտի տանեի: Արուսյակ տեսնալով իմ վիճակը երբեմն ախ կքաշեր»⁷⁴:

Ամուսնական ապերջանիկ կյանքի դառնութիւնն ու հասարակական կարծիքի դա-

տապարտումը, ինչպես նաև կանանց անիրավահավասարութիւնն պատճառով աշխատելու հնարավորութիւնից զրկված լինելն ու իր սիրեցյալ հորը նյութական օգնելու անկարող Արուսյակը, իր գոյութիւնն ավելորդ բեռ համարելով, 1905 թ. նոյեմբերի 2-ին ինքնասպանութիւնը վերջ է տալիս իր կյանքին, սեղանի վրա թողնելով հետեւյալ երկտողը. «...Ոչ ոք մեղավոր չի կարող լինի այս պարագայում: Բայց միայն ներկայումս տիրող անիրավ կրթական հասարակական սոցիալակ սն թշվառ դրութիւն մեջ պիտի փնտրել շարիքը, ես չունեցա կորով կովելու և հաղթական դուրս գալու, սակայն ուրիշները թող համբերութիւն, կամքի ուժ գործ դնեն...»⁷⁵:

Զառամյալ ծերունու նյութական կարիքին ավելանում է նաև հոգեկան անդամանելի վիշտը. միակ անձը, որին նա կապված էր այդ վերջին տարիներին իր գաղափարներով ու հետաքրքրութիւններով, այլևս ոչ ևս էր:

Բնութիւնից տոկուն կամքի տեր Ս. Հայկունին իր ծանր վշտի մեջ անգամ չի վհատվում և ստեղծագործ աշխատանքի մեջ է որոնում իր սփոփանքը: Արուսյակի հավաքած նյութերն ուղարկում է Մոսկվա՝ Գր. Խալաթյանցին, որոնց զգալի մասը մնում է անտիպ, իսկ որոշ մասը տեղ է գտնում «էմինյան ազգագրական ժողովածուի» վեցերորդ հատորում: 1906 թ. այդ հատորը լույս ընծայելուց հետո, Ս. Հայկունին 1907 թ. հրատարակում է «Կենդանական վեպ, ժողովրդական առակներ» առաջին գրքուկը, որը նվիրում է Արուսյակ դստեր անմոռանալի հիշատակին:

Անխոնջ բանասերը միաժամանակ շարունակում է իր բազմազան գրառումներից դուրս գրած ազգագրական, կենցաղային և այլ բնույթի շուրջ տասը հազար բառի մեկնաբանման աշխատանքները: Այդ սովոր բառարանը⁷⁶, մինչ այդ չլուսաբանված բառիմաստների մանրակրկիտ բացատրութիւնը, նշանակալից երեւոյթ էր ոչ միայն հայ բանագիտութիւն, ազգագրութիւն, տեղագրութիւն ու արհեստագործութիւնն ասպարեզների համար, այլև այնպիսի բնագա-

⁷³ ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 158, 1905 թ. հոկտ. 6-ի նամակը:

⁷⁴ Նույն տեղում, վավ. 107, էջ 72:

⁷⁵ Նույն տեղում, վավ. 184, 1905 թ. նոյ. 2-ի նամակը:

⁷⁶ Նույն տեղում, վավ. 1:

վառներին, ինչպիսիք բուսաբանութիւնն ու կենդանաբանութիւնն են:

Դստեր մահից հետո, անխնամ մնացած Հայկունին, վշտից և նյութական կարիքից հարկադրված, դիմում է կաթողիկոսին, որպեսզի մի առժամանակ վանքի հացատան մեջ պատուարվի: «Սակայն վանքն պետք եղած խնամքը չեմ ստացած,—գրում է գառ-

նացած ժերունին,—բացի ուտելիք ավուր կերակուրեն: Ձմռան ցրտեն պատուարվելու որևէ միշտ շունենալով սարսափելի տանջանքների մատնված եմ»⁷⁷:

Կյանքի այդպիսի ծանր պայմաններում 1908 թվականին Սարգիս Հայկունին վախճանվում է՝ իրեն ընդմիշտ անմահացնելով իր հավաքած ժողովրդական նյութերով:

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Հայկունին իր ողջ իմաստալից կյանքի ընթացքում, աստանդական հայի ցուպը ձեռքին, մեծ մասամբ ոտքով՝ լինի այդ ձմռան բուքին, թե ամառվա կիզիչ արևին, այցելել է բազմաթիվ բնակավայրեր: Ամենուրեք ուսումնասիրել է բնակչության նիստ ու կացը, ազգագրագետի բացառիկ զգացողությամբ ընկալել տվյալ տեղավայրին հատուկ ու բնորոշը և, որպես ականատես-վկայագիր, մանրամասն գրի է առել իր տեսածն ու լսածը՝ սկսած իր ծննդավայր Տրապիզոնից մինչև իր վերջին ուղևորութիւնը դեպի Թալին ու Ղոմզու:

Ճանապարհորդութիւնների այս ամբողջ շղթան դարձել է Ս. Հայկունու տեղագրական-ազգագրական գրվածքների քարտեզագրական այն հենքը, որի հիման վրա նա վերարտադրել է հայ և այլազգի բնակչության աշխարհագրական միջավայրը, քաղաքական, տնտեսական ու հոգևոր գոյավիճակը:

Ս. Հայկունու արխիվում պահպանվում են իր ծննդավայր Տրապիզոնի մասին գրած հավանաբար ծավալուն ուսումնասիրության միայն պատուհկները, որոնք հիմնականում վերաբերում են տեղի ճարտարապետական կոթողների արտաքին և ներքին նկարագրությանը: Եթե 1892 թ. «Արարատ» ամսագրում լույս ընծայված «Տրապիզոնի Զեֆանոս, Կոմմիլա հայ գյուղորենից սովորութիւններն ու բարբառը» գրվածքով Ս. Հայկունին հակիրճ պատկերացում է տալիս իր ծննդավայրում օրենքի ու ժողովրդական մի շարք սովորութիւնների, տոների ու բնակիչների լեզվա-բարբառային առանձնահատկութիւնների մասին, ապա 1905 թ. այդ նույն ամսագրի համարներում լույս տեսած «Տրապիզոնի հայ գյուղացու կյանքը» ծավալուն ուսումնասիրության մեջ նա շունչ է

տալիս ժողովրդական կենցաղի հետ կապված ամենաբազմազան մանրամասներին: Աշխարհագրական ու վիճակագրական մի շարք տվյալներ հազորդելուց հետո, Ս. Հայկունին նշում է, թե այդ գրվածքում առանձնապես ինչի վրա է կենտրոնացրել իր ուշադրութիւնը: «Մենք այժմ պիտի ներկայացնենք,—գրում է նա,—Համշենի և Սև գետի կոտորածն խույս տվող այն տոկուն, աշխատասեր ու շարքաշ հայերու կյանքը, որոց մեջ ծնած, մեծացած և որոց աշխատանքին ևս մասնակցած եմ, պիտի ներկայացնեմ նոցա աշխատության եղանակները մանրամասն, թե յուրաքանչյուր տուն, ինչպես անտառի մի խորշը, առանձին վայր, տուն, մառան, մարագ, գոմ, կորոբ, տուռան կշինե, տանը շուրջը ինչպես ընտանի ծառեր, կաղնուտ, բանջարանոցի համար ածու, հացի համար լազուտի արա կպատրաստե, ինչպես զանազան բույսեր կսերմանե, ինչ եղանակով կմշակե, կաղնուտը, լազուտը, լուբիան, դդումը և այլն»⁷⁸:

Սակայն Տրապիզոնի և նրա շրջակա գյուղերի մասին ավելի մանրամասն ու բազմակողմանի պատկերացում է տալիս 1905 թվականին Վաղարշապատում լույս ընծայված «Հոսեփիցի ազգատոհմ և տարօրինակ ավազակ Աբրիեոմ Տրապիզոնի հայ գյուղերու մեջ 1795—1840 թթ.» գրքուկը: Հետաքրքրաշարժ վերնագիր կրող այս գրվածքն իրենից ներկայացնում է ականատեսի հիշողութիւններ ու տպավորութիւններ, որոնք նա քաղել է 1858—59 թթ. Տրապիզոնի գյուղերում կատարած ճանապարհորդության ընթացքում և իր գեղարվեստագետի գրչով ստեղծել՝ ինքնատիպ ու անմոռաց մի վիպակ:

Այդտեղ Ս. Հայկունին առանձին համս-

⁷⁷ ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 107:

⁷⁸ «Արարատ», Վաղարշապատ, 1901, էջ 737—738:

կրանքով է նկարագրում Մալա գյուղը: Մալայի հայերը վաղուց բնակություն էին հաստատել անառիկ լեռների ու անմերձենալի անտառների խորքերում: Ի վերջո թուրք կառավարությունն իմանալով նրանց գոյության մասին, մի խումբ ենիչերիներ է ուղարկում՝ տերունական հարկը գանձելու: Հուսեփը, լինելով մեծ գերդաստանի նահապետ, հրաժարվում է և դիմադրում: Մոլեռա՛դ մահմեդականները, ենիչերիների հետ միասին, կոտորում են նրա տոհմը: Ավերում են ամեն ինչ: Ահա այդ գերդաստանից մազապուրծ փախած և բռնի հավատափոխ դարձած սերունդների մի շառավիղն էր Վաղարշապատում:

Ժողովրդի մեջ տարածված ավանդության համաձայն Սարգիս Հայկունին նկարագրում է նրա կիկլոպյան արտաքինը: Ըստ այդ պատումների նա իր գերմարդկային ուժի և անխոցելիության համար ձախ ձեռքին կրում էր նախնիներից ժառանգած բազմանդը: Սակայն Արրիեռմի կերպարը հայ բանագիտության մեջ ցարդ ճիշտ չի մեկնաբանվել. արտահայտվել է այն թյուր կարծիքը, թե նա լավ տեսակ նոր Անդեզ Տորք է, բայց ոչ հայրենասիրական ոգով, այլ՝ մի bête humaine (սարդակերպ գազան)²: Այնինչ Արրիեռմը ժողովրդական մի հերոս է, որի խորապես մարդկային էությունը նրա համագյուղացի հուսեփիներին անգամ անհասկանալի է եղել: Այդ է պատճառը, որ նրան անվանել են Վալազա, Վեռլառ, կամ Վերլառ: Նրանից վախենալով՝ նույնիսկ անմարդկային ու սատանայական հատկություններ են վերագրել նրան:

Համամարդկային գաղափարներ կրող դրական հերոսի այդօրինակ ընկալումը բացառիկ երևույթ չէ ժողովրդական մտայնության համար. հիշենք ազատության ու արդարության համար մարտնչող վիպական Արտավազդին, Սասունցի Դավթին ու Փոքր Մհերին, որոնց և վերագրվել են շար, դիվային հատկություններ:

Արրիեռմի կերպարը ևս իր վիպական մշակումն է ապրել, բայց չի կորցրել իրական, պատմական անձի հավաստիությունը: Որպես ժողովրդական հերոս նա պայքար է մղում թուրք կառավարության ջոկատների ու

ենիչերիների դեմ՝ պարտության մատնելով նրանց:

Բնորոշ է այն, որ օտար շահագործողների նկատմամբ Արրիեռմի ատելությունը գուգակցվել է իր և իր գերդաստանի պատիվը բարձր պահելու անդիմադրելի ձգտումին:

Ինչպես տեսնում ենք, այդ ստարոբինակ ավազակ՝ Արրիեռմը արդարամիտ է ու անաշու, նրա բոլոր արարքները բխում են ժողովրդասիրությունից և արտահայտում բողոք օտար հարստահարիչների դեմ: Սուլթանական կառավարությունը հետապնդում է Արրիեռմին և դարանակալելով՝ նենգորեն սպանում:

Ս. Հայկունու շարադրանքը խորապես համակում է ընթերցողին և համոզում. Արրիեռմը չգնահատված ու չարժեքավորված ժողովրդական հերոս է: Հեղինակն ըմբռնելով այդ կերպարի հերոսական ոգին, իր գրվածքն ավարտել է հետևյալ խոսքերով. «Շատ շատեր անեծք կկարդան նորա հիշատակին, իսկ այժմ կան հուսեփիք, նորա մեկ-երկու բարեմասնություններով կպարծենան, մանավանդ նորա քաջության համար, ընթերցողն ևս իր դատողությամբ կանե՞ս»:

Ս. Հայկունուն իր այս գրական-գեղարվեստական երկով հաջողվել է ստեղծել ինքնատիպ ու անմոռաց կերպարներ, որոնց դրական կամ բացասական լինելու հանգամանքը պայմանավորված է ժողովրդի և հայրենիքի նկատմամբ ունեցած իրենց վերաբերմունքով:

Գրվածքի գլխավոր հերոսը՝ ստարոբինակ ավազակ՝ Արրիեռմը, պատմական անձնավորություն լինելով հանդերձ, իր մեջ խտացրել է բռնի կերպով հավատափոխ դարձած հուսեփիների և ընդհանրապես բազմաշարժար հայ ժողովրդի ընդվզող ու ազատատենչ ոգին:

Այս գրվածքում հանդես եկող սեգետացի Տեր-Կարապետը ևս գեղարվեստական ընդհանրացման արտահայտություն է: Տեր-Կարապետի նախահայրերը հինգ-վեց սերունդ շարունակաբար նույն Տեր-Կարապետ անունով քահանա են ձեռնադրվել, որպեսզի գաղտնի Սև գետ գնան և քրիստոնեական

² Ս. Հայկունի, Հուսեփի ազատահամ և տարօրինակ ավազակ Արրիեռմ Տրապիզոնի հայ գյուղերու մեջ 1795—1840, Վաղարշապատ, 1905, էջ 89:

² «Արձագանք», Թիֆլիս, 1895, № 89:

հավատը վառ պահեն բռնի թուրքացած հայերի մեջ:

Սեբեդեցիների և Տեր-Կարապետի ծավալած ժողովրդասեր գործունեության մասին ավելի մանրամասն շարադրված է Նշխարների կորած ու մոռացված հայեր. Տրապիզոնի հայ մահմեդական գյուղերն ու նրանց ավանդությունը՝ գրվածքում⁴:

Համշենի լեռների արևմտյան մասից հասող Սև գետի (Գարա Դերե) ու նրա շրջակա հովտի ամբողջ տարածության վրա բնակվում էին սեբեդեցիները, որոնք 1708—10 թվականներին մոլեհանդ մոլլաների և ենիչերիների կողմից բռնի կերպով թուրքացել են:

Տրապիզոնում ժողովրդական ուսուցչի համբավ ձեռք բերած Ս. Հայկունին 1878 թվականին, որպես դպրոցական քննիչ հրավիրվելով Սև գետ, ականատես է դառնում ձեռք տեղականացուցիչ սեպուր հայերին⁵, հասու լինում թիրեց անցյալ սրտաճմլիկ անցքերուն⁶: Ս. Հայկունին ընդամենը տասնհինգ օրվա ընթացքում կարողանում է մանրամասն տեղեկություններ քաղել թուրքացած հայերի մասին: Ուսումնասիրության ընդարձակ ասպարեզ բացվեցավ իմ առաջ,—գրում է նա,—այդ ասպարեզը մտնելու համար մեծ ուժ պետք էր, սակայն տասն և հինգ տարիներ է վեր մեր հարգելի տրապիզոնցի հայրենակիցներից անձկանոք կսպասեի, դժբախտաբար մեկն երևան չեկավ այդ ամենակարևոր վայրի վերա գրող, որպեսդի նկարագրեր այդ վայրն ուր գետեղված էին ստվար թվով հայ ժողովուրդ մի, Բագրատունյաց անկումից հետո և հազարավոր հիշատակներ ու ավանդություններ թողած, որ տակավ առ տակավ կորչելու վերա են,—և զայրույթով ավելացնում է,—ափսոս մեր երիտասարդության, որ իրենց և ազգին պատիվ բերող, գործերեն հեռի գտնվելով՝ փափկակյաց կյանք անցնելու համար միայն ծնած են⁷:

Մինչև 1700 թ. շուրջ 1600 սեբեդեցիք խուսափելով արտաքին աշխարհի հետ հարաբերություն ունենալուց, ինքնամիտքի ապ-

րում էին անձեռնմխելի որջերի մեջ, ի վերջո Կ. Պոլսից առաքված ենիչերիների մոլեհանդ հրոսակախմբերը, օգտվելով Սև գետի բնական-լեռնային հարմարություններից, ռուկանի մեջ ամփոփված ձկներու նման ինչ որ ուզած են այստեղ անել՝ հաջողած են⁸: Առանձնապես ծանր էր Թորոսլի գյուղի բնակիչների վիճակը: Ենիչերիներն այդտեղ սրախողխող էին արել Տեր-Կարապետ քահանային, խուճապի մատնել հայությանը և անցել մոտակա Սյուրմենե գավառը՝ բնակիչներին սպառնալով. «Եթե չընդունիք (հավատափոխությունը—Վ. Ս.), թագավորից մեծ բանակ կգա, զամենք կկոտորե, ձեր որդիքը և աղջկունքը ձեռքից կբաժանեն»⁹: Ս. Հայկունու գրչի տակ շունչ ու կենդանություն են ստանում հայ ժողովրդի անցյալի պատմության այս եղբրական դավաճները, Գեղարվեստագետի հատուկ վարպետությանը հեղինակը նկարագրում է սեբեդեցիների հերոսական դիմադրությունը: Անողորմ թշնամու հասցրած ավեր ու թալանը, կոտորածն ու ջարդերը ստիպողաբար թելադրում են հայերին ընդունել կեղծ հավատափոխությունը. «Ժողովուրդը,—գրում է Ս. Հայկունին,—ամեն օր պարտավորյալ էր մզկիթ գնալ, աղոթել՝ հայտնապես, իսկ տարին մեկ անգամ իր սիրած կրոնի պաշտամունքը կատարել՝ գաղտնի»¹⁰: Նա հիշատակում է նաև սեբեդեցիների հետևյալ ավանդությունը, թե Մամետի հրամանով Սև գետը կարմիր է դառնում և, իբր այդ հրաշքը տեսնելով, հայերն ընդունում են հավատափոխությունը: Ս. Հայկունին, որպես իր ժամանակի գիտակից ու հայրենասեր անձնավորություն, հանգամանորեն վերլուծում է այդ ավանդության հասարակական-քաղաքական պայմանները և հետևյալ եզրակացությունն է հանգում. «Այո»,—գրում է նա,—Սև գետը արյուն դարձավ, այդ ևս կվկայեն այսօր այն հայ քրիստոնյա մնացած հայերը. յոթ օր, յոթ գիշեր արյուն կհոսեր, դա ուրիշ բան չէր, այլ եթե իրենց սիրելի ազգակիցներու արյունը, որ կատաղի բարբարոսությունը կհեղուր, որ հոսելով խառնվեցավ Սև գետի ալիքներուն, Սև գետ կիսով չափ սև արյունով թանձրացած՝ մեծ ու

⁴ «Արարատ», Վաղարշապատ, 1895, էջ 239:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում, էջ 240:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում, էջ 242:

փոքր հայոց դիակները, կասեն, ջրի ընթացքը կասեցուցած էին»¹⁰։

Բռնությամբ, հրով ու սրով հավատափոխ է արվել հայ ժողովրդի այդ հատվածը։ Ազդադրադետի վկայությամբ նմանօրինակ դաժան պայմաններ էին ստեղծվել հաև Համլենում, որտեղ հայոց լեզուն թուրք մոլլաների կողմից արգելված էր և ձայերեն յոթ րաուր մի հայհոյություն նկատելով սահմանված էր տուգանք՝ հինդ ոլխարի քանակով»¹¹։

Ստիպողական հարկադրանքը հայ ժողովրդին աստիճանաբար մոռացության էր ենթարկելու նրա մայրենի լեզուն, հավատքն ու սովորույթները, նրա նահապետական կենցաղի ինքնատիպությունը։

Այստեղից հետևություն, թե որքան անհրաժեշտ էին իր ժամանակին Ս. Հայկունու կողմից դրի առնված այդ բոլոր նյութերը, որոնք այսօր մեղ հստակ պատկերացում են տալիս մեր ժողովրդի տվյալ հատվածի երբեմնի հասարակական-քաղաքական այդ անցքերի մասին։

Ս. Հայկունին մանրամասն քննության է առնում տեղի բազմաթիվ գյուղերի ու գավառների ինչպես աշխարհագրական միջավայրը, նույնպես և հայ բնակչության քաղաքական, տնտեսական ու հոգևոր կյանքի նվաստացուցիչ պայմանները։

Ս. Հայկունու գրվածքների տրապիզոնյան այս շարքը նշանակալից իրադարձություն էր հայ հասարակական մտքի զարգացման ասպարեզում. մանավանդ, եթե նկատի ունենանք, որ մինչ այդ հայ բանագիտության մեջ գրեթե ոչ ոք չէր անդրադարձել Տրապիզոնի ու նրա շրջակայքի ուսումնասիրությանը, բացառյալ 1892 թ. եվրոպացի հետախույզ Ալբերտ Դըվելի «Ուղևորություն ի փոքր Ասիա-Տրապիզոնեն ի Կարին» գրվածքը, որը ճանապարհորդական տպավորություններից այն կողմ չէր անցնում¹²։ Այնինչ Ս. Հայկունին, որպես բարեխիղճ տեղագրագետ ու ազգագրագետ, հանգամանորեն ուսումնասիրում է այդ վայրերի աշխարհագրական միջավայրը, բնակչության նիստ ու կացի, սովորույթի հետ կապված մի

շարք ինքնատիպ առանձնահատկությունները, որոնք խաթարվում ու եղծվում էին սովթանական Բուրքիայի արյունոտ քաղաքականության հետևանքով։

Ս. Հայկունու գրական ժառանգության մեջ առանձին տեղ են գրավում Ալաշկերտի (որտեղ նա անց է կացրել իր կյանքի մեծ մասը) վերաբերյալ նյութերը։ Այդ գրվածքներն իրենց բազմազանությամբ ընդգրկում են ոչ միայն տեղի աշխարհագրական միջավայրն ու հասարակական-քաղաքական կյանքի ուսումնասիրությունը, այլև հատուկ ու մանրամասն քննության է առնվում բնակչության սովորույթները, հավատալիքները, նրանց կենցաղն ու առօրյա զբաղումը։ Այդ իմաստով ուշադրության է արժանի «Բագրևանդ ջրաբաշխ գավառ» աշխատությունը (1894 թ.)։

Գիտական ուսումնասիրություն դառնալու հավանությունից զերծ, բայց հետազոտության համար հսկայական նյութ պարունակող այս հատորն, ինչպես հեղինակն է գրում իր ուղերձում, «Ծաղկանց մի կապոց է հավաքված հայրենյաց մի անկյունն, Բագրևանդա լեռներեն ու դաշտերեն, սարերեն ու ձորերեն»¹³։

Ս. Հայկունին, գեղարվեստական գրողի հատուկ վարպետությամբ, ընթերցողին իր հետ վերցնելով, շրջագայում է իր հայրենի երկրում։ Նա մեկ առ մեկ ցույց է տալիս Բագրևանդի հեռաստանները աղաշտ և լեռ մեծ ու փոքր աղբյուրներով զարդարված, ամեն տեղ սփռված հստակ սառն քաղցրահամ ջրեր, գլգլացող աղբյուրների ակեր, կարկաչող առվակներ, պսպղուն փոքրիկ և մեծ լճակներ, և այդպիսի ջրաշատ ու ջրաբաշխ երկիր ռավելորդ է ասել, թե որպիսի տեսակ բանջարեղենոք և երփներանգ ծաղկոք և մարգագետիններով պծնված է»¹⁴։

Աշխարհագրական միջավայրի այս գեղատեսիլ նկարագրի հետ միասին Հայկունին տալիս է նաև ամեն մի լեռան, ամեն մի ժայռի, բերդի ու ճանապարհի, աղբյուրի ու լճակի անվանումները, նրանց հետ կապված հին-հին զրույցները՝ մե'րթ ավանդական, մե'րթ դյուցազնական և մե'րթ էլ ողբերգական։

¹⁰ «Արարատ», Վաղարշապատ, 1895, էջ 243։

¹¹ Նույն տեղում, էջ 297։

¹² Տե՛ս «Հանգես ամսօրհայ», Վիեննա, 1892, № 1, էջ 74—75։

¹³ Ս. Հայկունի, Բագրևանդ ջրաբաշխ գավառ, Վաղարշապատ, 1894, էջ Ա։

¹⁴ Նույն տեղում։

Ընթերցողը մտովին փոխադրվում է Բագրևանդի հայ գյուղացու տունը և կամ քրդի վրանը, որտեղ ծերունիները պատմում են իրենց երկրի պատմությունը, ուր մենայն մանրամասնությամբ կարելի է աշխատեսն դառնալ տեղի բնակչության նահապետական կենցաղին, նիստ ու կացին ու դարերով սրբագործված սովորություններին։ Սակայն այդ գեղեցիկ բնության նկարագրից իսկույն հաջորդում է հեղինակի ճակատագրական հարցադրումը։ «Ընթերցող, բայց կարծես թե, թե ա՛յս է կյանքը»։ Եվ սկսում է նկարագրել այդ սքանչելի բնության գրկում իր տխուր ու ողբերգական կյանքով ապրող հայության վիճակը։

Ս. Հայկունին առանձնապես ընդգծում է Բագրևանդի բնակչության տնտեսական վիճակը։ «Չնայած երկրագործությունը տեղս հաջող է,—գրում է նա,—հողը բերրի, ընդարձակ և մեծ մասամբ դաշտային է, շուրը առատ, բերքն է ցորյան, գարի, կտավատ, կորեկ, բոստան և բանջարեղեն, կանուցանեն մեծ մասամբ գոմեղեն, ոչխար, այծ, եզ, կով, սակայն տրոց (տուրքերի—Վ. Ս.) խիստ ծանրության պատճառով ժողովուրդը յուր արդյունքի մեծ մասն կառավարության տրոց փոխարեն հատուցանելուն՝ միշտ աղքատության ճիրաններուն մատնեցված է, շատ անգամ ևս տրոց ծանրության շտկալով, բանտի խստությունից խույս տալով, պանդխտության կղիմե, այս տեսակներու թիվը օր ըստ օրե կաճի, միջին հաշվով Բագրևանդի վիճակեն 8—900 երիտասարդ ոռոսական երկրի այլևայլ կողմերն կգտնվի, այլևայլ պատճառով չեն կարող հայրենիք վերադառնալ»¹⁵։ Այդպիսի գյուղերից նա հեշատակում է Եխնի Թափան, ռուր ժողովուրդն աղքատ է և ծանր հարկի ներքե ճնշված լինելով ստիպված են 50—60-ի չափ երիտասարդներ Բաթում և այլուր գնալ, դժամ շահել...»¹⁶։

Թուրքական կառավարությունն, իր հայաջինջ քաղաքականությունն իրականացնելու համար, քուրդ մեծամեծներին հրահրում էր հայերի դեմ՝ ազգամիջյան խռովություններ սերմանելով երկու ժողովուրդների միջև։ Ս. Հայկունին, բարձր կանգնած լինելով ազգային նեղմտությունից, որպես իր ժամա-

նակի առաջավոր մտածող-ազգագրագետ, մեկ առ մեկ թվարկում է քրդական գյուղերն ու ավանները¹⁷, մանրամասն նկարագրում իրենց արդար վաստակով ապրող քուրդ և եզդի աշխատավոր գյուղացիների կենցաղն ու առօրյան¹⁸, միաժամանակ գրի առնելով քրդական անունները, որոնք ըստ նրա զգրեթե համանման են հայկական անվանց»¹⁹։

Գնահատելով քուրդ ժողովրդի ստեղծագործական կարողությունները, նա դրի է առնում նրանց բազմաթիվ երգերն ու առածները, Հայկունին բերում է մի շարք փաստեր հայ և քուրդ ժողովուրդների բարի-դրացիական հարաբերություններից։ Այդ առումով ուշագրավ է Շեռյանա իշխանությունը վարող մամլոտանցի քուրդ էմիր բեկը։ «Սա արդարությունը պաշտպանող մի ահձնավորություն լինելով,—գրում է Ս. Հայկունին,—հայ և քուրդ ժողովրդյան առջև մի պաշտելի անձնավորություն դարձավ, ոչով Համիտ բեկի (Ալաշկերտի իշխանությունը վարողի—Վ. Ս.) նախանձն գրգռեց յուրյան դեմ»²⁰։ Հեղինակը, որպեսզի գաղափար տա այդ դեպքերի ու դեմքերի մասին, նկարագրում է, թե ինչպես Համիտ բեկը հարձակվում է էմիրի վրա, որպեսզի գերեզմանի նրա սահմաններում ապրող հայերին։ Հայերի ճակատագրով մտահոգված էմիրը մեկ գիշերվա մեջ հավաքում է նրանց, զորք կազմում և դիմագրում թշնամուն։ Ողջ մնացած հայերին նա փոխադրում է Մանազկերտի Հասան Փաշա գյուղը, որպեսզի գտնեն նրանք զերծ մնան վերահաս կոտորածից։ Անշուշտ, պատմական ճշմարտությունը պահանջում է նշել նաև, որ, վերջին հաշվով, էմիր բեկին մահոգել է իր սահմանների ու բնակչության քանակի ապահովությունը։ Բայց և այնպես փաստը մնում է նշանակալից, որպես հայ և քուրդ ժողովուրդների եղբայրության և միասնաբար ընդհանուր թշնամու՝ սուլթանական կառավարության քաղաքականության դեմ պայքարելու ցայտուն մի արտահայտություն, որը գեղարվեստական նկարագրությամբ պատկերել է Ա. Հայկունին։ Սակայն հայ ժողովրդի ճա-

¹⁷ Նույն տեղում, էջ 125—128։

¹⁸ Նույն տեղում, էջ 116—119, 205—208, 310—317։

¹⁹ Նույն տեղում, էջ 348։

²⁰ Նույն տեղում, էջ 172։

¹⁵ Ս. Հայկունի, Բագրևանդ ջրաբաշխ գավառ, էջ 52։

¹⁶ Նույն տեղում, էջ 235—236։

կատարող մտահոգված ազգագրագետն անտարբերությամբ չէր կարող անցնել սուլթանական կառավարության ձեռքին գործիք դարձած, քուրդ բեկերի ու շեյխերի անմարդկային զազանությունների կողքից: Նա սրտի խորունկ կսկիծով է նկարագրել հայկական բնակավայրերի ավերն ու թալանը, հայ գյուղացիների հարստահարությունն ու կոտորածը և ի վերջո նրանց հուսահատ արտագաղթը դեպի ուսական սահմանները:

Շատ ու շատ գյուղերի նման Ղարաբեյլիսի գավառում գտնված Զիրոն գյուղը ևս անցյալում հայաբնակ է եղել և ունեցել է 40—50 տուն հայ բնակիչ, սակայն «այս ժողովուրդը միշտ քրդաց հարվածներու տակ ճնշված լինելով անտրտունը կտանեն ամեն հարստահարություն»²¹:

Շատ ու շատերի պես քուրդ հափշտակիչների կողմից ավերվել ու թալանվել են նաև Փիրոնի ու Զոլոնի հացաշատ օջախները: Հեղինակը մխիթարական ոչ մի խոսք չգտնելով իր ակնարկն ավարտում է հետևյալ տողերով. «Քրդեր միշտ կողոպտած են այս դուռը, գյուղացիք տակավ սու տակավ ցրված, մնացած քանի տան հայերու դրությունը խիստ ցավալի է»²²:

Ցավալի էր ոչ միայն այդ, այլև շատ հայաբնակ գյուղերի վիճակը, որոնցից էր Անտապի Դութաղ (երկու թաղ) գյուղը. «Այստեղ Ահմետ աղան յուր խմբին գլուխն անցած, որպես անզղներու երամ, կիջևանն պատրաստ դիակներու վերան: Նա արդեն իրեն բան գործ արած էր մտածել, թե որտեղ կարող է ընչաքաղցությունը հագեցնել»²³: Նա իր խմբով իջևանում է Ալաշկերտի Մարառ գյուղի բնակիչ խալոյի տունը, ուտում, ոչնչացնում է նրա ունեցած հազար գլուխ ոչխարը և մորթիները բաժանում է համագյուղացիներին՝ անխղճորեն նրանցից պահանջելով մի հսկա գումար «փոստ փարախ» (մորթու գին—Վ. Ս.). «Գոհ չե՞ք,—ասում է նա լկտիորեն,—փոստ կտամ՝ դրամ կպահանջեմ, եթե չգիշ քիրասին» (ատամի վարձ—Վ. Ս.) ևս պահանջելու լինիմ, ի՞նչ պիտի անեք»²⁴:

Շատերը շտկալով այդ ծանր տուրքին, թողնում են իրենց տունն ու տեղը և փախչում, ոմանք տուրքի փոխարեն իրենց լավ անասուններն են տալիս, իսկ Ահմետ աղան իր անասելի հարստահարությունները շարունակում է նաև Շահնազար, խաստուր, Զեական գյուղերի բնակիչների նկատմամբ: Սակայն Դութաղում ևս ուժեղ դիմադրության է հանդիպում: Լուր է ուղարկում Դութաղ գյուղի հայերին, որպեսզի պատրաստվեն հյուրընկալության: Արդեն տեղյակ նրա ավարառություններին, դութաղցիները որոշում են ընդդիմանալ: Նրանք իրենց սակավթիվ հրացաններով հերոսաբար կռվում են, բայց, թշնամու ստացած նոր ուժերին չդիմանալով՝ ընկճվում: Սկսվում է գյուղի հայերի կոտորածը:

Ս. Հայկունին մեկ առ մեկ նկարագրում է այդ եղերական դեպքերն ու հերոսական դեմքերը, որոնցից առանձնապես աչքի է ընկնում առյուծասիրտ Հովասափը: Ժողովրդական այդ հերոսին հաջողվում է առեկտնել հայ աղջիկներին ազատել և կրկին իրենց ծնողներին վերադարձնել:

Դեպքերի ու դեմքերի այս ամբողջ պատկերաշարով Ս. Հայկունին ընթերցողի աչքերի առաջ վերականգնացնում է հայության քաղաքական ու տնտեսական անմխիթար վիճակը՝ սուլթանական թուրքիայում: Ահա թերեքամա թուրքերի ձեռքով ավերված խարաճանի ավերակ եկեղեցու նկարագիրը: Նրանք մի այդ հոյակերտ շինությունը մեկ ժայռի վրա էր կառուցված: Նրա խորանն իր ընդերքում ունեցել է 60 գաղտնի դարակներ, որոնք լուսավորվել են միայն մեկ լուսանցքից. «Ահա Ձեզ սքանչելի մի եկեղեցի, որի մեջ դեռ երեկ լսվում էր աստվածապաշտ ժողովրդի ջերմեռանդ աղոթքը, իսկ այժմ նա քրդի ոչխարների հանգստության տեղի է. ահա Ձեզ մի այլ օջախ, ուր պահվում էր, գուցե, թարգմանչաց օրից գրված սքանչելի աստվածաշունչը. բայց այժմ չկա այդ օջախը, իսկ աստվածաշունչը քրդի ձեռքում գերի էր և փրկանքով միայն կարելի եղավ ազատել, բայց այժմ այդ էլ չկա»²⁵:

Իր սրտառու նկարագրություններն ավարտելու անկարող Ս. Հայկունին շարունակում է շրջագայել՝ իրեն ուղեկցող ընթերցողին

²¹ Ս. Հայկունի, Բագրևանդ ջրաբաշխ գավառ, էջ 263:

²² Նույն տեղում, էջ 264:

²³ Նույն տեղում:

²⁴ Նույն տեղում, էջ 314:

²⁵ Նույն տեղում, էջ 301:

զգուշացնելով. «Ամենուրեք մեզ պիտի պատահին ավեր գյուղեր և կամուրջներ, ավեր եկեղեցիներ ու վանքեր, ավեր գյուղաքաղաքներ ու բերդեր, արդ տես և ուշի ուշով դիտես այն հրապուրիչ հանգստարաններուն, որք դեռ կանգուն և անեղծ մնացած են. կարծես խոյացած են Գարա-Քիլիսի և Ալաշկերտի վերա, ուր կատարված անգթութիւնները կթվեն»²⁶: Սկսվում է ժողովրդական զանգվածների գաղթը դեպի Արևելեյան Հայաստան: «Հայերը թույլ տվին յուրյանց ամենասիրելի արտն ու ափը, պատվական աղբյուրներն ու լալով հեռացան»²⁷, — գրում է հայրենասեր ազգագրագետը սրտի խորունկ կսկիծով:

Պապենական տներից ու արտերից արմատախիլ եղած բազմաթիվ ծերունիներ, որոնք ֆիզիկական բնաջնջումից ու հոգևոր այլասերումից մազապուրծ խույս են տվել, «ամոթխած հարսեր, որք թեև մերկ և քաղցած են, որք թեև ուրախ և ժպտալից կերևին նորա համար, որ ռուսական հողը մտած են և յուրյանց պատիվը պահած: Սակայն քաղցը ստիպած է անսովոր մուրացկանութեան դիմել»²⁸:

Բարբարոսները խոշտանգել ու նահատակել էին հայերին, բնաջնջել ու ամառացրել հայրենի աշխարհը: Ամառացի էր հայրենի Բագրևանդը, հանգել էր հյուրասեր օջախների ծուխը, հուռթի դաշտերում այլևս չէին երևում գործունյա մշակները. չէին հնչում նրանց հորովելն ու գութանի երգը. ձմռան գիշերներին այլևս օդաներում չէին հավաքվում պատմելու համար հին-հին զրույցներ, չէր զրնգում հարսանյաց դհոլն ու զուռնան. «Դրախտանման այդ երկրում այլևս շունչ ու շշուկ չկար»: Ահա թե ինչու անհրաժեշտ էր անհապաղ գրիչը ձեռքն առնել և մանրամասն նկարագրել նրանց անհետացող կենցաղն ու առօրյան, նրանց զբաղմունքն ու արհեստները, նրանց սովորույթն ու երգերը, այն ամենը, ինչ ժողովրդական էր, ինչ ժողովուրդն էր ստեղծել իր մեղավաջան եռանդով, դարերի ընթացքում հյուսելով դարձրել իր ինքնատիպ ու խայտաբղետ կյանքի հենքը:

Այդ բոլորն անհրաժեշտ էր հավաքել ոչ միայն իսպառ կորստից փրկելու համար, այլ հենց իրեն՝ ժողովրդին ցույց տալու իր ուժն ու կարողությունը: Ինքնագիտակցության կոշիկ ժողովրդական զանգվածներին իրենց իսկ արժեքների վերահանումով, և համայն աշխարհին ցույց տալ, որ հայը ևս տաղանդավոր ու ստեղծագործ մի ժողովուրդ է, որն ունեցել է իր հարուստ անցյալը, իսկ այժմ պարտավորված է ապրել տխուր ներկայով. բայց այդ ժողովուրդն արժանի է հարգանքի ու նրա դատը պետք է պաշտպանել:

Ս. Հայկունին հմուտ ու գործիմասց ազգագրագետի վարպետությամբ խուսափել է, վերացականությունից. նա ժողովրդական նյութի շարադրանքն ստեղծել է կոնկրետ պատմական դեմքերի ու դեպքերի փաստալից նկարագրություններով, որոնք իրենց ընդհանրացման կարողությամբ տիպական են և անմիջականորեն արտացոլում են տվյալ ժամանակաշրջանի հասարակական հարաբերությունները:

Հասկանալի է, թե ինչու Ս. Հայկունին իր հետազոտությունն սկսում է ազգագրական մի միավորի նկարագրությունից՝ հայկական մեծ գերդաստանից, որն իր մեջ խտացնում է ժամանակի հասարակական հարաբերությունների գրեթե բոլոր բնորոշ կողմերը: Ահա Ալաշկերտի 65 հոգուց բաղկացած խլոյի գերդաստանը²⁹: խրոն, որպես այդ գերդաստանի նահապետը, պետք է յուրաքանչյուրին պարտականություններ հանձնարարի և առանձնահատուկ մոտեցումով հսկի նրանց կատարողականին: Նա պետք է շինի ու վերանորոգի երկրագործական գործիքները, վճարի կառավարական ծանր տուրքերը, գնի ու ծախի անասունները, պիտի հայթայթի տան պիտույքն ու հագուստեղենը: Դրամը դեռ իր այլասերող դերը չի կատարել: խլոյի փողի մասին գաղափար չունի, այլ միայն իր վաճառած կենդանիների փոխարեն ստացած գումարը դիտես: Սակայն, դժբախտաբար, միայն այդքանն ենք իմանում խլոյի մեծ գերդաստանի մասին, քանի որ այդ դրվածքն անավարտ է մնացել: Ս. Հայկունին մտադիր է եղել միջակ և աղքատ ընտանիքներին ևս նկարագրել, բայց ինչպես

²⁶ Ս. Հայկունի, Բագրևանդ շրաբաշխ դավառ, էջ 301:

²⁷ Նույն տեղում, էջ 270:

²⁸ Նույն տեղում:

²⁹ ԳԱԲ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 72:

ինքն է գրել՝ մեծն անգամ չի կարողացել ավարտել³⁰։

Հայ գյուղացու տնտեսության և նրա զբաղմունքի մասին ավելի մանրամասն պատկերացում են տալիս Ս. Հայկունու մի շարք այլ անտիպ գրվածքները³¹։

Ժողովրդական կենցաղին հետախույզ ազգագրագետն անդրադարձել է հայ գյուղացու անասնապահությանը։ Նա ամենայն մանրամասնությամբ քննության է առել մի շարք կարևոր հարցեր, թե ինչ նպատակով է հայ գյուղացին պահում այգ կենդանիները, ինչպես է խնամում նրանց, ինչպես է տեղի ունենում կովկիթի, սերահավաքի, յուղհանի, մածուն մերելու և այլ աշխատանքները։

Կենցաղագրական այս մանրությունները նկարագրելու ընթացքում անգամ, Ս. Հայկունին հանդես է գալիս որպես ժողովրդին ցավակից ազգագրագետ։ «Գյուղացու համար,—գրում է նա,—մի հավը մի կով կարծես, նա հավին մեծ կարևորություն կտա, իսկ ամեն մի հավ-կիթը մի հավ կարծես։ Այդպիսի հակիրճ ու բնութագրական արտահայտություններով Հայկունին ընդհանրացնում է այդ ժամանակաշրջանի հայ գյուղացու կյանքն ու տնտեսական պայմանները։

Այնուհետև, Ս. Հայկունին անդրադառնում է նաև գյուղացու տնից դուրս կատարված աշխատանքներին։ Այսպես, օրինակ, նրա դրվածքներից մեկը հայտնի է դառնում, որ այդ ժամանակաշրջանում հայ գյուղացին դեռևս իրավունք է ունեցել օգտվել համայնքի անտառի փայտից, հավաքել զանազան մրգեր ու վայրի մեղր, ձկնորսություն կատարել մոտակա գետերում և այդ ձևով լրացնել իր տնտեսության պետքերը։

Բագրևանդի հայ գյուղացու համար, սակայն, ամենակենսական պայմանը եղել է երկրագործությունը։ Ամբողջ տարվա ընթացքում երկրագործության հետ կապված ամենաբազմազան աշխատանքների հատուկ ու մանրակրկիտ ուսումնասիրությունը Ս. Հայկունին տվել է իր «Գուլթան» ծավալուն մենագրության մեջ։ Իր այդ գրվածքի մասին հեղինակը նշել է հետևյալը. «Գրի է առնված Բագրևանդա իսկական բարբառով, մանրամասն նկարագրված է Բագրևանդա հայ ժողովրդյան երկրագործական կյանքը,

գոմշեղեններու պահպանումը, վար ու ցանքը, հունձն ու կալը, աղունը և բնաղունը և այլ ամեն սովորություններով»³²։

Բացառիկ հետաքրքրություն ներկայացնող այդ աշխատությունը ցավոք անհետ կորել է՝ իր հետ տանելով երկրագործական աշխատանքների մանրամասն նկարագրությունը։

Ս. Հայկունու ազգագրական նյութերի մեջ նշանակալից արժեք են ներկայացնում ժողովրդական հավատալիքները։ Այդ նյութերի զգալի մասը հոր հրահանգներով և ղեկավարությամբ ամենայն խնամքով գրի է առել նրա դուստրը՝ Արուսյակը, որոնք և լրացրել են Ս. Հայկունու ծրագրած հարուստ ժողովածուն։

Հավատալիքային վերապրուկները մարդկության վաղնջական շրջանի երևակայության արգասիք լինելով, հաճախ իրենց մեջ խտացնում են անիմիստական մտածողության տարրեր։ Այսպես, օրինակ, հեթանոսական վիշապաքաղ Վահագնի պաշտամունքին աղբյուրվող մի հավատալիքում օձը դիտվում է որպես փոթորկի, պտուտահողմի, փոթորկալից ամպի անձնավորում։ «Հենց ինքը փոթորիկը թանձրացյալ ամպով» կաժակներով ու ոլորտմունքով մի շար ոգի է, ողի նախատիպն է օձը»³³,—Մանուկ Արեղյանի այս տեսակետն իր ապացուցումն է գտնում Արուսյակ Հայկունու գրի առած հետևյալ հավատալիքում, ըստ որի թերթ ամպ (անձրև) չգար, օձը ողջ-ողջ կվառեն, որ ամպ գա»³⁴։

Մարդկության վաղնջական շրջանի անիմիստական մտածողության արգասիք է նաև Արևին, Լուսնին և այլ երկնային մարմիններին մարդկային ծագում վերագրելը։

Ուշագրավ է նաև «Գելվենի» սնոտիապաշտական հավատալիքում. գիշերվա կեսին տնից մերկ դուրս եկած հարսի գայլ դառնալը, ապա կրկին մարդու կերպարանափոխվելը և կսւմ կենդանիներին բարեբախտ կամ չարագուշակ հատկանիշներ վերագրելը, հետևաբար և նրանց սիրաշահելն ու պաշտամունքի առարկա դարձնելը։ Այսպես, օրինակ, բվի կոնչոցը կամ գայլի ոռնոցը նկատվել է աղետարեր ու մահառիթմի նման

³² Տե՛ս Հուսեփի ազգատոհմ..., էջ 98, (հավելված)։

³³ Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Ա, Երևան, 1944, էջ 85։

³⁴ ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 66։

³⁰ ԳԱԹ, Գր. Խալաթյանի ֆոնդ, բաժին 5, վավ. 424։

³¹ Նույն տեղում, վավ. 58—60։

ըստ սնոտիապաշտական հետևյալ հավատալիքի՝ ավագ երկուշաբթի պատրաստված «օձ թթուն» ուտողն ամբողջ տարին զերծ է մնացել օձից խայթվելու վտանգից⁵⁵։

Եվ կամ նրան, ում կատաղած շունը կծել է՝ «40 օր վրանի տակ կպահեն, վերջին գիշերը թույլ չեն տար քնելու և կատաղած շան հանդես կկատարեն. դրհուլ զուռնա կածեն պար կխաղան»⁵⁶։

Հանդիսավոր այս ծիսակատարությունը մարդկային վաղնջական շրջանի մտածողության արգասիքն է եղել, երբ դեռևս բնության տարերային ուժերի դեմ պայքար մղելու անզոր մարդն ստիպված էր սիրաշահել իրեն կաշկանդող ուժերին։ Բնության անհասկանալի ու շար ուժերը մեկնաբանելու անկարող մարդու երեակայությունն է ստեղծել սատանան, հետևաբար և նրան սիրաշահելու և նույնիսկ խորամանկության մեջ նրան հաղթելու զանազան միջոցներ։ Ս. Հայկունին մեջ է բերում կորած իրը գտնելու համար արտասանված հետևյալ բանաձևը.

Սատանա՛, սատանա՛,
Պոչիդ տակը ինչ ըմ կա.
Կեսը՝ քեզիկ, կեսը՝ ինձիկ⁵⁷։

Հեթանոսության հեռավոր վերհուշն ենք հանդիպում հետևյալ հավատալիքում, ըստ որի «գիշերը, եթե դռները բաց թողվին՝ շար ոգիք ներս կխուժեն, գոց պահելու է արշալույսին անմիջապես բանալու է, որ բարի լուսու աստուծոն իր բարիքները ներս լեցնեն»⁵⁸։

«Բարի լուսու աստվածը» ծնունդ առնելով հեթանոսական շրջանի արևի աստվածության պաշտամունքից իր առողջապահիկ բնույթով հարատևել է նաև քրիստոնեության շրջանում։ Նույն ձևով ծովային աստուծո պաշտամունքի վերապրուկն ենք հանդիպում մի այլ հավատալիքում, որտեղ ջրի մեջ ընկնող կարկուտի հատիկների փոխարեն պղպջակների գոյացումը վերագրված է ջրային ոգիներին. «այդ սատանաներն են, որ իրենց նիզակները դուրս կհանեն կմխեն դեպի կարկուտը»⁵⁹։

⁵⁵ ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ. վավ. 3։

⁵⁶ Նույն տեղում։

⁵⁷ Նույն տեղում։

⁵⁸ Նույն տեղում։

⁵⁹ Նույն տեղում։

Տարերային ուժերի այսօրինակ ընկալումը, սակայն, ժամանակի ընթացքում իր տեղը զիջել է ավելի իրական էականերին։ Այսպես, եթե սնոտիապաշտական հավատալիքներից մեկում պատմվում է ձորերի, անբնակ ավերակների և ջրաղացների մեջ բնակվող սատանաների մասին, ապա այդ նույն հավատալիքի ավելի ուշ շրջանի տարբերակում սատանաներին փոխարինում են սարսափազդու արաբները։ Իրական հասարակական կյանքի և հատկապես արաբական արշավանքների հետ աղերսվող այդ հեռային էականերն արդեն դառնում են նախկին սատանաների իրական գործնական լուծումը։

Հասարակական-քաղաքական իրադարձությունների ավելի ուշ շրջանի թաթար-մոնղոլական արշավանքների հեռավոր արձագանքն ենք գտնում նաև մեծ պասի հետ կապված ակլատիզի հավատալիքում։ Յոթ փետուրից պատրաստված ակլատիզն երգիկից կախելու միջոցին արտասանվել է հետևյալ քառյակը.

Ահա ճժեր Ուռուճ բեկ,
Բացեց զըյուր թևեր,
Որն օր պասս ուտէ,
Կհանն զըյուր աչքեր⁶⁰։

Դաստիարակչական բնույթ ունեցող այս տողերը պահքը խախտողին սպառնացել են Ուռուճ բեկի սարսափազդու կերպարով։ Անշուշտ, ակլատիզի մասին այս հավատալիքն ավելի հին ծագում ունի, քան թաթար-մոնղոլական հարստահարիչների ավարառությունը, սակայն հատկանշական է այն, որ ժողովրդական հավատալիքը սոցիալական գունազարդում է ստացել։

Սարգիս և Արուսյակ Հայկունիների գրի առած հավատալիքներում առանձնապես ուշագրավ է հայ ժողովրդի համար ողբերգական դարձած պանդխտության հետ կապվող հավատալիքը, ըստ որի հեռու երկրում պանդուխտ ունեցողը հագնում է իր զգեստները և դուրս գալիս փողոց, ոտքի տակ դնում դռան բանալին և վրան կանգնում։ Այդ վիճակում նա ականջ է դնում անցորդների պատահական խոսքերին, որոնց միջոցով էլ նա գուշակություններ է անում իր պանդուխտի վիճակի մասին։ Ինքնասփոփումի այս սրտա-

⁶⁰ Նույն տեղում։

ռուլ հավատալիքը նաև տարածված է Հաստատանի տարրերը գաղափարներում:

Բացի այդ բոլորից, Ս. Հայկունու հավաքած սնոտիապաշտական հավատալիքների մեջ կան նաև այնպիսիները, որոնք անմիջականորեն առնչվում են գյուղացու առօրյա աշխատանքին ու կենցաղին: Երկրագործական շարքի հավատալիքներից առանձնապես ուշագրավ է հեթանոսական շրջանի հողի և ջրի, ինչպես և արգասաբերության, բերքատվության հետ կապված հավատալիքը, ըստ որի սերմանողը պետք է սկսած օրեն մինչև վերջանալը սուրբ պիտի մնա, ցանքի առաջին օրը հագուստները պիտի վառված թուղրան վրա ոչիլները թափ տա, պիտի լողանա, ապա մի բուռ հող պիտի լեցնե մի ծոցը և մի բուռ ցորյան մյուս ծոցը, այդ հողը և ցորյանը պիտի մնա ծոցերը մինչև 10—20 օր, որ սերմանելու գործը վերջանա⁴¹:

Հավատալիքային այս նկարագրությունների հետ միասին Ս. Հայկունին մեջ է բերում նաև մի շարք ասացվածքներ, որոնք պարզ պատկերացում են տալիս, թե ժողովրդի մտայնությունը աստվածային պատվիրաններին մեղանչել է նկատվել «հացը գետին ձգելը» և կամ «գետին ընկած հացի վրա կոխելը»: Ահա թե ինչու իր ժամանակը խնայողաբար օգտագործող հայ աշխատավորը «մեղք» է համարել հաց ուտելուց հետո, երկար ժամանակ սեղանի շուրջ նստած մնալը⁴²: Բնորոշ է նաև ժողովրդի մեջ տարածված հետևյալ արտահայտությունը, թե «ցերեկը հեթաթ ասելը մեղք է. տան ալյուրը կպակսի»⁴³: Այստեղից էլ բարոյադաստիարակչական այն հետևությունը, որը թելադրում է ժամանակն ավելի արդյունավետ ձևով օգտագործել և հասարակության համար պիտանի աշխատանք կատարել:

Քրտնաջան վաստակի տեր հայ աշխատավորության համար խորթ է եղել պորտաբույծ, ուրիշի հաշվին ուռճացածների անաշխատ վարքագիծը: Ինչպես բնության, նույնպես և հասարակության շար ուժերի երևակայական արտացոլումն ենք գտնում «Շվոտ և Դովաթ» հավատալիքում, որը Ս. Հայկունին լույս է ընծայել 1895 թ. էջմիածնի «Արարատ» ամսագրում:

Հեղինակը տալով այդ էակների ավանդական ծագումնաբանությունը, նշում է. «Շվոտները սերած են նոյն հապսի քամ որդի են, տապանում քամը որդի է ունենում և պղծում տապանի սրբությունը, երբ հրեշտակը բացում է դուռը հաշվով դուրս հանում մարդկանց. քամը չի հայտնում, որ մի նորածին էլ կա և հրեշտակը ասում է. եթե ուրիշ ոք կա չիք դառնա և նա աներևութանում է, մեծանում, ամուսնանում մարդկային սերունդների հետ, աներևութ զավակներ ունենում»⁴⁴: Այդ աներևութ շար էակները, «երբ տնից ներս խուժեն կսկսին սպառել մարդկային աշխատության արդյունքը և դովաթին լցած բարիքը: Դովաթ կայցելե իր բնակած տան ամեն մասերը շվոտի սպառածի տեղն անմիջապես կլրացնե: Դովաթները բարի ոգիներ են, որոնք իրենց գտնված տունը ամեն բարիքով կլեցնեն»⁴⁵:

Դարեր շարունակ հայ աշխատավորը, չհասկանալով բնության երևույթները, անձնավորել է նրան, աղբսսելով՝ սիրաշահել է նրա տարերային ուժերը, բայց և այնպես բնությունը նրա համար մնացել է անլուծելի մի առեղծված:

Բնության ու հասարակության շար ուժերի դեմ մարդու մղած պայքարի փոխաբերական պատկերումն է շվոտահանի արարողությունը, երբ այլևս անհնար է լինում հանդուրժել «շվոտների» ամենակույ գործունեությունը: Ըստ այդ հավատալիքի «փետրվարի վերջին դովաթը լրիվ ընկճված, տան բարիքն ավարի առնված, ստիպված են մարդիկ օգնության հասնիլ դովաթին. դուրս են արտաքսում Շվոտ՝ ի դուրս, մարտ՝ ի ներս ասելով»⁴⁶: Բնորոշ է այն, որ Շվոտի հանդիսավոր վտարումը կատարվում է չոր ոչխարենու և ակիշի օգնությամբ: Արգասաբերությունը, կյանքի կրակն ու հավերժությունը մարմնավորող այդ խորհրդանշների միջոցով ժողովուրդն արտահայտել է իր հաստատ հավատքը լավագույն ապագայի նկատմամբ. «Այդ հավատքը կարող էր ժողովրդին հույս ներշնչել, թե դովաթը հանկարծ կարող է մի շատ աղքատ մարդու տուն մտնել և միանգամից հարստացնել»⁴⁷:

⁴¹ ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 3:

⁴² Նույն տեղում:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ «Արարատ», Վաղարշապատ, 1895, էջ 210:

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Նույն տեղում, էջ 213:

⁴⁷ Նույն տեղում:

Այսպիսով, դիտելի է դառնում այն, որ «Շվոտ և դովաթ» հավատալիքային վերապրուկը ևս իր վերջնական լուծումն ստանում է իրական կյանքում՝ բնության ու հասարակության շար ուժերի դեմ մարդու մղած պայքարում:

Նույնանման մեկնաբանման է կարոտ նաև մեր ժողովրդի մեջ տարածված «Գրողի դժիք» հավատալիքային վերապրուկը: Մահառիթ երևույթները մարմնավորող ծերունի գրողին առաջնորդում է գյուղի գզիրը, որի ձեռքին սև և կանաչ ճիպոտներ կան: «Գրողի հրամանով, երբ գզիրը մեկուն սև ճիպոտով հարվածի՝ կմեռնի, կանաչով՝ կառողջանա»⁴⁸: Ինչպես հայտնի է պատմական անցյալից, հայ ժողովուրդը բազմիցս ենթարկվել է օտարերկրյա հարստահարիչների ավարառությանը: Ստիպողական հարկեր են հավաքել ոչ միայն օտար, այլև ազգային շահագործողները՝ ավատատերերն ու հոգևորականները: Հարկահավաքները միաժամանակ կատարել են գրողի դեր, նրանք գրանցել են հարկը չվճարողի անունը և հարկի փոխարեն բռնագրավել գյուղացու ունեցվածքը, նրա լծկանը և նույնիսկ հարազատներին:

Հարկահավաք-գրողներին, որպես կանոն, ուղեկցել է տվյալ գյուղի գզիրը: Պատմական այս իրողությունների գեղարվեստական արտացոլումն ենք գտնում նաև հայ ժողովրդական վեպում, երբ Կողբադինը Սասուն է զալիս քառասուն տարվա «խարջը» հավաքելու:

Քանոսուն անծին շուշմբ կուզիմ,
Քանոսուն անծին երինջ կուզիմ,
Քանոսուն ըղտաբեռ ոսկի կուզիմ,
Քանոսուն ազապ աղջիկ կուզիմ՝ երկանք
աղան,

Քանոսուն երկան կնիկ կուզիմ՝ ուղտ
բառնան⁴⁹:

Իրական կյանքի հասարակական հարաբերությունները ինքնաբերաբար վերագրվել են նաև ոչ իրական՝ երկնային կյանքին:

⁴⁸ Ժողովրդական հավատալիքներից մեկում նույնանման մահաբեր պաշտոն է կատարել նաև ժանտախտի համաճարակ տարածող «սուր քուղավոր Շնովորը» (ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 3):

⁴⁹ «Սասնա ծռեր», խմբագրեց Մ. Արեղյան, աշխատակցությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1936, Ա, էջ 70:

Ժողովուրդն իր ապրած կյանքի պատկերով, երևակայության մեջ ծնունդ է տվել մարդկային կերպարանքով մահաբեր գրողների և նրանց առաջնորդող գրողի գզիրներին, որոնք իբր թե բռնությամբ կարող են մարդու հոգին վերցնել ու տանել անդրշիրիմյան աշխարհ:

Սարգիս և Արուսյակ Հայկունիների գրի առած հավատալիքներն ու նախապաշարումները ընդգրկում են մարդու անձնավորությունը՝ նրա ծննդից մինչև մահը, հասարակական կյանքի բոլոր ոլորտները ներառյալ: Այդ նյութերը նրանք տվել են ամենայն մանրամասնությամբ՝ հաճախ համեմատելով ու հակադրելով շրջակա տեղավայրերի հավատալիքային վերապրուկների հետ:

Ժողովրդական կենցաղում հավատալիքային վերապրուկները գաղափարական հիմք են ծառայել ժողովրդական սովորույթների համար: Ս. Հայկունին գրի է առել նաև հայ ժողովրդական կենցաղին յուրահատուկ սովորույթները: Այդ առումով առանձնապես ուշադրության է արժանի նրա «Սովորություն Ալաշկերտի հայ ժողովրդյան հարսանյաց» ուսումնասիրությունը, որը 1891 թվականից մինչև օրս անտիպ է մնացել⁵⁰: Գեղարվեստական բնույթի այդ գրվածքը, հարսանական սովորույթի շրջանակներից դուրս գալով, ընթերցողին համակողմանի պատկերացում է տալիս Ալաշկերտի հայության հասարակական-դասակարգային հարաբերությունների մասին: Թորո—Վարդիկ, Շողեր—Հովո զուգահեռների հետ կապված բոլոր դեպքերն ու դեմքերը սոցիալական երանգավորում ունեն:

Ս. Հայկունին վարպետությամբ ստեղծել է ժողովրդական մի հարազատ միջավայր, որտեղ տիպականորեն կյանք են առել ժողովրդի մարդիկ:

Ահա Մելիք Մուսոն իր մեծ գերդաստանով: «Նա ևս,—գրում է Ս. Հայկունին,—իր նախնայաց օրինակին հետևած էր: Նրա տնից հացը և հյուրասիրությունը պակաս չէր, ամեն անցորդին նորա տունը կհարցնեին, որպեսզի ջուր խմեն, հանգստանան և փորերին կշտացնեն ու գնան... աշխատասիրությունը կեռար այս տան մեջ, որմե դուրս կյանք չկար, ամեն կողմ ժրաջան մեղվի նման գործ և շարժում կտիրեր, կարծես թե

⁵⁰ ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 2:

սորա արտ ու մարգ, կալ ու մարադ, տուն ու գոմ երկրաշարժ ընկած կղխտեցներն⁶¹։

Մուտոյի կրտսեր որդու Թորոյի ամուսնութեան պարագան բացահայտում է դեպքերի ընթացքն ու կերպարների հոգեբանությունը։ Թորոն սիրում է սղքատ Շողերին։ Հայրը դեմ է դրան։ Նա ուղում է որդուն ամուսնացնել, բայց ոչ Շողերի հետ, որովհետև նա աղոմշու, մատկու երես տեսած չէ, իմալ պտի կառավարե մեր ծովի պես մալ⁶²։

Մուտոն դարերով սրբագործված սովորության պահպանն է։ Ամուսնության վերաբերյալ նա ունի իր հատուկ տեսակետը. «նրա համար մահ է,—գրում է հեղինակը,— երբ լսեր, թե դուրսը կիսին, թե Մուտոյի տղան Մկոյի աղջկան սիրած է, այն ես իրմե վատ վիճակ ունեցող ընտանիքի աղջկան»⁶³։ Այդ մասին նրա ունեցած մտորումները խտանում են «Մուգիբ աղքատի խաթուն, ուզի դուլվաթվորի կատուն» առած-ասացվածքի մեջ։

Շողերը՝ աղքատ ընտանիքի այդ աղջիկը, նկատելով իր չունեոր ծագումը, բարի խորհուրդ է տալիս ասելով. «Թորո՛, խըտ ընծի ի՞նչ բան ունիս, չէ՞ դուն Մելիք Մուտոյի տղեն իս, ես Մկոյի աղջիկն իմ, մեր մեջ սարեր կան»⁶⁴։

Շողոն, իր վերջին հանդիպման հրաժեշտի պահին, իր սիրելի Թորոյին երջանիկ կյանք է մաղթում ոես Սաքոյի աղջկա՝ Վարդիկի հետ, ասելով. «Ձեզի համար դիւաք (բարեմաղթություն) կենիմ, օր շատ էղպալ (հաջողություն) ունենաք, մեկ բարձի ծերանաք, քիչ դատիք, շատ ուտիք»⁶⁵։ Ազբստ, բայց խելացի Շողոյի քիչ դատելու և շատ ուտելու մասին նրա այս ակնարկն ինքնին մի բողոք է ուղղված ժամանակի դասակարգային անհավասար կարգերին, որոնք սիրո ազնիվ ու վսեմ զգացումի փոխարեն անգամ գնում են փողի և ունեցվածքի սառը հաշիվը։

Շողոյի կերպարը տրամաբանական կատարելության է հասնում, երբ նա ամուսին է ընտրում ոես Սաքոյի տան մշակ՝ աղ-

քատ, բայց աշխատասիրությամբ ու ճարպելությամբ աչքի ընկած Հովոյին։ «Հըմենքըս լե մեկ ինք,—ասում է Շողոն իր մտորումներն ընդհանրացնելով,—մարդ քրջերու մեջլե էղնի էլման մարդ ա... Հովոյի սիրտն է ընծի պետք, թող ընտոր շորեր հագար լե կտրտուկ էղնի. էն հերք ա, օր էն ընծի կսիրեսս լե ընտոր»։

Ս. Հայկունին ուշի-ուշով ուսումնասիրելով ժողովրդի վարքն ու բարքը, ակնառես է դարձել հայ գեղջկուհու տխուր ու անմխիթար կացությանը։ Հայ կնոջ ստրկական վիճակն ու նրա անլուսաշող կյանքի պայմանները խորապես հուզել են կենցաղագրին, և նա դառնացած գրչով թղթին է հանձնել իր տեսածն ու զգացածը, մերթ որպես հնավորին հաց տանելու ճանապարհին Թորոյի ու Շողոյի անխոս զրույց, որը փոխադարձորեն ընկալվել է որպես սիրո խոստովանություն, մերթ որպես Վարդիկի աղջիկտեսի արարողություն, որը հարսնացու աղջկա մեկ բաժակ ջուր մատուցելուց այն կողմ չի անցել, բայց որոշել է նրա ամբողջ ապագան։ Ապրելով իրավական այսպիսի պայմաններում, հայ կինը զուրկ է եղել ազատությունից և ինքնուրույնությունից։ Ահա թե ինչու Ս. Հայկունին ամենայն մանրամասնությամբ վերաբերելով Թորոյի և Վարդիկի հարսանեկան հանդեսի նկարաշարքը՝ զանազան խաղերն ու զվարճալիքները, պարերն ու շուրջպարերը, միաժամանակ տխրաթախիծ տողեր է հատկացրել իրենց շնորհքը ցուցադրելու դուրս եկած ամոթխած կանանց ու աղջիկների խելահեղ մյցությունը. «Այս մրցումը,—նշել է նա,— առավել իզական սեռին մեջ արմատացած է. նա երկար օրեր, շաբաթներ, ամիսներ առանձին և ամեն հարաբերութենե զուրկ, խեղդված լինելով տան հեղձամաղձուկ մըթնոլորտին մեջ, այժմ ուրեմն կըզնի անցյալեն վրեժ լուծելու»⁶⁶։ Կաշկանդված կյանքի այդ անուրախ մթնոլորտից է հառնում Շողոյի հասուն ու գիտակից կերպարը։ Նա իր միտումնայնությամբ հանդերձ ընդհանրացնում է հայ գեղջկուհու բողոքի ու վրեժի արտահայտությունը։ Ս. Հայկունու կարծիքով հայ կնոջ վիճակը, սակայն, չի փոխել նաև ամուսնությունը որպես նրա կյանքում կա-

⁶¹ ԳԱԲ. Ս. Հայկունու ֆոնդ. վավ. 2, էջ 2—3։

⁶² Նույն տեղում, էջ 5։

⁶³ ԳԱԲ. Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 2, էջ 26։

⁶⁴ Նույն տեղում, էջ 27։

⁶⁵ Նույն տեղում, էջ 128։

⁶⁶ Նույն տեղում, էջ 147։

տարված միակ նշանակալից իրադարձություն: Հեղինակը մեկ առ մեկ նկարագրելով հարսանիքի հետ կապված սովորույթային ու հավատալիքային ավանդություններն իրենց ընդունված ձևերով (խնամիական հարաբերությունների մեջ պահանջվող անհրաժեշտ հյուրընկալությունը, նրանց համար պատրաստված ուտելիքների տեսակները, խրախճանքի ընթացքում տեղի ունեցած թատերական ներկայացումներն ու խաղ-պարերը, երաժշտությունը, զգեստներն ու զարդերը) միաժամանակ որոնել ու գտել է նաև հարսանիքի հետ կապված կորած սովորությունների հետքերն ու մնացորդները, որոնք այնքան անհրաժեշտ են անցյալի սովորույթային երևույթները ուսումնասիրելիս: Այսպես, օրինակ, այդ դրվածքում հանդիպում ենք աղջիկ գնելու վաղնջական սովորույթի հետագա վերապրուկները, որոնք իրենց դրսևորումն են գտնում աղջկա ու տղայի ծնողների միջև կնքված դալանի (զլխագին) գործարքում: Իր աղջկա գեղեցկությունը բարձր գնահատող ռես Սաքոյի կարծիքով «Մեղր որ ըլի, ճանճերը Բաղդատու կգան», ուստի և փեսացուի հարուստ հայրը պարտավոր է նշված դալանը վճարել: Նա իր պահանջողի գիրքը հիմնավորում է «Ուղտապանի հետ բարեկամ եղողը, դուռը բարձր պիտի շինե՞ս ժողովրդական խորիմաստ արտահայտությամբ: Դրամական այդ գործարքն ավարտվում է նրանով, որ բացի դալանից աղջկա մայրը ևս առանձին նվեր է ստանում որպես «կաթնագին»: Նվեր պահանջելու իրավունք ունեն նաև աղջկա հայրն ու գերդաստանի մյուս անդամները: Ամուսնական հարաբերություններում հանդիպող այդ սովորության արմատները պատմական հին ծագում ունեն: Ինչպես հայտնի է, դեռևս հնագույն ժամանակներում առևանգման հետ զուգընթաց, հարսի գնումը ևս գոյություն է ունեցել, անշուշտ, իր տարբեր նշանակությամբ: Պրոֆ. Խաչիկ Սամուելյանն անդրադառնալով այդ հարցին, նշում է. «Այն (իմա՝ զլխագինը—Վ. Ս.) ծառայել է իբրև փրկանք, որ վճարվել է տղայի կողմից աղջկա տերերին, որպեսզի մի կողմից՝ ծածկվի այն վնասը, որ կրում էին հարսի ծնողները, զրկվելով աշխատավոր ձեռքերից և մյուս կողմից՝ հատուցանվի աղջիկ փախցնելիս վերջինիս ծնող-

ներին ու ազգականներին հասցրած տոհմային վիրավորանքը»:

Աղջիկ գնելու սովորության հետագա տատանակներն ենք հանդիպում նաև (տվյալ դեպքում՝ Վարդիկի) «եթե քաջ եք», «ծոց մտնելու», «ծաղիկ տեսնելու», «բերան քացելու» և ավանդական այլ ծիսակատարությունների ժամանակ, որոնց ընթացքում փեսայի (Թորոյի) հարազատները փող կամ ընծաներ են պարգևել նորահարսին: Այդ բոլոր ստացվածքը դառնում է հարսի սեփականությունը որպես նրա սեփական մարմնի կամ արյան գինը:

Ինչպես տեսնում ենք, Ս. Հայկունին ազգագրական նյութն ուսումնասիրել է ամենայն մանրամասնությամբ, նկատի ունենալով տվյալ վայրի ու ժամանակի պայմանները:

Ս. Հայկունին, գիտակցելով իր կատարած գործի կարևորությունը, «Սովորությունն Ալաշկերտի հայ ժողովրդական հարսանյաց» գրվածքի Ա մասն ավարտել է հետևյալ համաստ խոսքերով. «Ահա Ձեզ մի պարզ ամուսնություն, զոր տեսանք և Ձեզ ներկայացավ յուր ամեն ձևերով, սովորությամբ: Այս գյուղական կյանքի ամուսնության մի ճշգրիտ պատկերն է...: Արդ, հայ ընթերցող, մի քիչ ևս հառաչ գնանք տեսնե՞ք, թե Հայաստանի տարօրինակ կյանքը, որ ընդմիշտ փոփոխության ենթակա է, ինչ վիճակ պիտի տնօրինե այս երջանիկ ամուսնին»⁵⁷:

Ս. Հայկունին, ինչպես ինքն էր ծրագրել, կարողացավ վերարտադրել «հայ ժողովրդական երկու կարգի հասարակության (հարուստ ու աղքատ) հարսանյաց սովորություններու ճշգրիտ պատկերը»: Բայց նա չհասցրեց տալ այդ գրվածքի երկրորդ մասը, որը նախորդի տրամաբանական շարունակությունն էր լինելու: Այդտեղ հեղինակը պատմելու էր, «թե հարստահարությունն ինչ աստիճանի վերա խոնարհեցուց զիրենք (իմա՝ նորապսակ երկու տարբեր զույգերին)»⁵⁸: Հասարակական-քաղաքական այդ կարևորագույն հարցերի մանրակրկիտ շարադրանքը նրան ավելի ուշ հաջողվեց տալ «Նյութեր ժամա-

⁵⁷ Խ. Սամուելյան, Հայ սովորութեան իրավունքը, Թիֆլիս, 1919, էջ 69: :

⁵⁸ ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 2, հավելված:

⁵⁹ Նույն աեղում:

նակակից հայերի սովորության իրավունքի կամ ազգային իրավաբանական սովորությունների՝ Բագրևանդա հայերի մեջ» ծավալուն գրվածքում⁶⁰։

Հիշյալ աշխատությունը Ս. Հայկունին շարադրել է ուղեցույց ունենալով Գր. Խալաթյանցի «Հայ ազգադրության և ազգային իրավաբանական սովորությունների ծրագիրը»⁶¹։ Մեկ առ մեկ պատասխանելով այդ ծրագրի յուրաքանչյուր հարցին, Ս. Հայկունին ստեղծել է ժողովրդական կյանքի, սովորության և իրավունքի հետ կապված ամենարազմազան ոլորտների մասին մի ճշգրիտ հանրագիտարան։ Դժբախտաբար, մինչև օրս այդ մեծարժեք աշխատությունը մնացել է անտիպ և ըստ արժանվույն չուսումնասիրված։ Այդ շնորհակալ գործը ազգագրագետների ու իրավագետների մասնագիտական հայեցողությանը թողնելով, մենք կաշխատենք տալ նրա միայն ընդհանուր բնութագիրը։

Ս. Հայկունին հիմք ընդունելով Գր. Խալաթյանցի ծրագիրը՝ միաժամանակ իր անհատական մոտեցումն է ցուցաբերել մի շարք հարցերի նկատմամբ։ Այսպես, օրինակ, եթե Գր. Խալաթյանցի հարցադրման մեջ մուրացկանությունն ու թափառականությունը դիտվել է որպես հետևանք ծուլության, անաշխատունակության, կուրության կամ ծերության, ապա ժողովրդի կյանքով ապրող ազգագրագետն այդ բոլորի հիմքերի հիմքը համարում է հասարակական հարաբերությունները և այդ մասին գրում է. «Երկրի մեջ գործարան, գործ չկա, հարստահարության երեսն երկրագործն օրավուր կզրկվի յուր սնասուններին ու վար ու ցանքեն, մշակության համար ոչ գործ կա ոչ դրամ։ Նորա ցորյանը չվաճառվիր... հանկարծ տեսար մի զրպարտության ենթարկվեցավ պիտի հատուցանե 100, 500 կամ 1000 զ., որ ազատվի և կամ քուրդ բեկի մոտ մրիբա դարձավ և պարտքի տակ ընկավ բեկը նորա որդիքն իրեն կծառայեցնեն»⁶²։

Ս. Հայկունին անդրադառնում է նաև սուլթանական կառավարության սահմանած ծանր տուրքերին, որոնք «տարվե տարի դիզված են և գյուղացիներն անկարող

են հատուցանել։ Շատ անգամ բռնավոր պահանջատերերը գրավ կառնեն պարտավորի կինն ու երեխաները, որ գնա հավաքի ու բերի պարտքը հատուցանեն»⁶³։

Բացի այդ բոլորից «Քրգեր թագավոր Համիդի անվան տակ զինված լինելով այլևս ոչ թե գաղտնի կկողոպտեն զհայս, այլ՝ աներկյուղ հայտնի, վասնզի գիտե, որ դատ ու դատաստան չկա, կառավարության յաշտոնյաները չեն կարող պատժել, պիտի պատժե համիդի գլխավորը, այն ևս անտես կառնեն»⁶⁴։

Հեղինակը համոզված է, որ «Ամեն դժբախտություն կպատահի գյուղացու կյանքում՝ հանկարծակի դեպք, կողոպուտ, զրպարտություն, գողություն կարող է զինքը մուրացկան դարձնել»⁶⁵։ Եվ, որպես եզրակացություն իր ասածների, նա մեջ է բերում դարավոր կենսափոխակերպության հաստատված մի շարք խորիմաստ բանաձևեր, որոնցից ամենասեղմը ժողովրդի բերանում ամենապերճախոս ձևով է արտահայտվում. «Մալ ու դուլվաթ կդատիմ նեղ ավուր հապով»⁶⁶։

Ս. Հայկունու այս ուսումնասիրությունը, հակառակ իր սովորութային ու իրավաբանական բնույթին, ընթերցողի կողմից ընկալվում է որպես ժողովրդի կյանքն ու նրա վիճակը, «ներա նեղ օրը» վերարտադրող մի երկ, այլ կերպ ասած այնտեղ իրենց արտացոլումն են գտել ժամանակի հասարակական հարաբերություններն իրենց բաղկացուցիչ մասերով։

Հեղինակը, ըմբռնելով հասարակական հարաբերությունների բազմազան ու բարդ ինստիտուտները, իր աշխատության առաջին իսկ էջում ընդհանուր գծերով բնութագրում է երկրի քաղաքական կացութիւնը, որը և դառնում է նրա ուսումնասիրության առանցքը։ Անդրադառնալով սուլթանական Թուրքիայի արյունոտ քաղաքականությանը՝ Ս. Հայկունին առանձնապես կանգ է առնում կառավարության ձեռքին գործիք դարձած քուրդ բեկերի ու շեյխերի բարբարոսություններին, որոնք հետագայում վեր են ածվել զանգվածային կոտորածների։ Ահա

⁶⁰ Հայաստանի պատմության պետական թանգարան, (այսուհետև՝ ՊԹ), Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 1։

⁶¹ Լույս է տեսել Մոսկվայում, 1887 թվականին։

⁶² ՊԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 1, էջ 487։

⁶³ Նույն տեղում։

⁶⁴ Նույն տեղում։

⁶⁵ Նույն տեղում, էջ 498։

⁶⁶ Նույն տեղում։

թե ինչ է գրում այդ մասին. «Վերջին սարսափելի կոտորածները ժողովրդյան հավատքը բողոքովին վերացուցին թագավորի վրայն, այլևս մարդասպան ու թշնամի կճանաչեն զայն, ոչ միայն թագավորի վրա պակասած է ժողովրդյան հավատքը, այլ աստուծո վրա, եթե աստված լինե՞ր, կըսեն, պիտի չի լսե՞ր այնչափ անմեղ զոհերու աղիողորմ հեծկտուքը, որ ժայռերուն անգամ կաղռնե՞ր»⁸⁷:

Աշխատավոր զանգվածների և հատկապես քրիստոնյաների նկատմամբ երկրի պեռական-քաղաքական մարմինների թշնամական ու անմարդկային դիրքորոշումը բնութագրելուց հետո, Ս. Հայկունին բացահայտում է այդ ժամանակաշրջանի հասարակական հարաբերությունները պայմանավորող օրենսդիր զսպանակները, ինքը, չնայած մասնագիտությամբ իրավաբան չէր, բայց որպես ժողովրդի կարեկից անձնավորություն, զգալով, որ այդ խիստ կարևոր ասպարեզը մինչ այդ երբեք չի շոշափված, ստանձնում է այդ դժվարին պարտականությունը և և թափանցում է իրավագիտության բնագավառն, անշուշտ, այնքանով, ինչքանով որ այն առնչվում է ժողովրդական իրավունքին ու սովորություններին:

Ս. Հայկունին սկսում է նկարագրել գյուղական համայնքը, որն ունի «իր վարչությունը՝ մեծլիսը, այն իր գյուղի հատուկ գործերը կկարգադրե: Գյուղական ժողովը գումարվում է բաց երկնքի տակ, ծառի կամ եկեղեցվո հովանու տակ, դեղի մի շուրջ, յուրաքանչյուր տնից մի ազդեցիկ անձ իրավունք ունի մասնակցելու այդ ժողովներին, կանայք ղրկված են այդ իրավունքից, նրանք միայն, որպես բողոքավոր կարող են ներկայանալ, այն էլ, եթե որևէ պաշտպան չունեն: Գյուղական ժողով է գումարվում այն ժամանակ, երբ գյուղի օգտին վերաբերյալ մի խնդիր կա՝ կմասնակցին ժողովի, եթե կամուրջ մը պիտի շինվի, առու հանվի, սայլի ճանապարհ պիտի հարթվի, նախորդ, հորթարած և այլն վարձվի, ջրբաժան և ուսուցիչ վարձելու, իրենց գյուղին մի այլ գյուղի հետ ունեցած արոտի կամ ջրի վեճի առթիվ, ինչպես նաև գյուղին պատահելիք ապագա վտանգի առաջն առնելու համար»⁸⁸:

Պաշտոնական դատավարությունը վերլուծելուց առաջ, կենցաղագիր ազգագրագետը մանրամասն նկարագրում է ժողովրդական սովորությալին ըմբռնումները՝ չարի և բարու, ճշմարտի ու կեղծի վերաբերյալ: Այդ բոլորը բնութագրելու համար հեղինակը հաճախ դիմում է զանազան ժողովրդական զրույցների ու սնոտիապաշտական հավատալիքների: Ահա մի զրույց, որտեղ չարի գաղափարն անմիջականորեն աղերսվում է դիցաբանական վիշապների մտացածին էությունը, ըստ այդ զրույցի այն մեղքը, որ չի խոստովանվում «վիշապ կեղնի, մարդու ջանը կընկնի, կկրծնա: Հետևաբար և Ս. Հայկունին մեջ է բերում հանցանքը խոստովանեցնելու մի շարք ընդունված միջոցներ, որոնց լավագույն գրավականը երգումն է: Երգումը, ժողովրդի ասելով, երկսայրի սուր է, օղորդ էղնի, սուտ էղնի՝ կկտրե», ուստի մեղավորին ստիպում են երգվել սրբությունների վրա, այն կարող է լինել ծնողների արև, հանգուցյալի գերեզման և կամ թոնրից դուրս բերված «թաժա հաց»: Մայրահեղ դեպքում հանցավորը մի բուռ հող կամ մոխիր է վերցնում ասելով. «Աստված իմ յուզեն (բույնը) քանդի, եթե ես խաբար ունիմ: Պատմականորեն ավելի ուշ շրջանի, բունի հավատուրացության դեպքերի հետ է կապվում հետևյալը. «Երբ գետնի վրա երկու գիծ կգծեն—արի մեկից մեկին ընցիր»,—կասեն, հանցավորի արտասանած «էսպես հավատեսս փոխվիմ, եթե խապար ունիմ» խոսքն ինքնին մեծ նշանակություն ունի, որպես վկայություն իր անմեղության:

Ուշագրավ է այն, որ տգիտության մեջ խարխափող ժողովուրդը զանազան հիվանդությունները գիտում է իրար հատուցում իր մեղքերի և ըստ այդմ էլ հազար ու մի սնոտիապաշտական ու հավատալիքային միջոցներով աշխատում է հաղթել ի վերուստ սահմանված այդ պատուհասներին: Սակայն բացարձակ տգիտության ու կյանքի ծանր պայմաններում ապրող հայ ժողովրդին հատուկ է եղել բարոյական բարձր ու ազնիվ հատկություններ, որոնց համար որպես չափանիշ է ծառայել մարդասիրությունը: Մարդուն պայծառ հայացքով նայելու վսեմ հատկությունն սքանչելի կերպով բանաձևվում է ժողովրդա-

⁸⁷ Նույն տեղում, էջ 31:

⁸⁸ Նույն տեղում, էջ 251:

կան հնաեւջալ ասույթի մեջ. «Մենք օգնենք, աստված թող պատժէ»: Բայց արդյոք հասարակական կյանքի պայմանները հնարավորութիւն տալիս էին հայ աշխատավոր դուրս գալու, որպէսզի նա հանդես բերեր իր հոգու ազնվութիւնը: Սվ որպէս կյանքի իրողութիւն հեղինակը հարկ է համարում տալ Ալաշկերտի արդարադատութիւնը դեկավարող «Բարձրագիւր» մարմինների ստոր գործակերպը: «Ալաշկերտի ժողովրդայն մեծավոր իշխանութիւնն է գայմագամը, որ սերութիւն կողմն կարգված է», — գրում է նա և ավելացնում, որ տեղի դատական սիստեմի միակ շարժիչ ուժը կաշառքն է. «քանի որ կաշառքը ամենակարող դեր կկատարեն»⁶⁹:

«Եթե 1890-ական թվականների կոտորածներից առաջ, թրքական կառավարութիւնը իր օրենքի խստութիւնն այնքան չէր կիրառում հայ ժողովրդի նկատմամբ և դատավորն ի պատիվ հանցավորի ազգականին կամ մեծին կներեր, կամ կաշառք առնելով և կամ առնելու հույսով, ներելի հանցավորներու կարգը կդասեր: Իսկ այժմ անմեղ հայն հանցավոր է, նորա քրիստոնյա լինելը, նորա համար մահացու մեղք է. նա իր կլած զրկանքներու համար ոչ մի տեղ կարող չէ բողոքել, եթե բողոքը մահմեդականի դէմ է, զրպարտողի պատժույն կենթարկւի, եթե համիդի կողմն է, ձեռնադրու քրդերու դէմ է, որպէս թաղավորին հայհոյողի, վասնզի թաղավորի անուն կրող զինվորի դիմագրել, թաղավորին դիմագրել՝ մեկ հաշիվ է»⁷⁰:

Այնուհետև Ս. Հայկունին քայլ առ քայլ նկարագրում է դատի երկարապատում ընթացքը, թե ինչպէս երկու կողմերը դատարան են հրավիրվում առանց ծանուցագրի: Այդ նպատակով առաջված զապթիկն, հույս ունի պատշաճ հյուրընկալութիւն գտնել. «Թե ձին գարի և առվույտ պիտի ուտե, և թե ինք իր փորը կշտացնե, վերջը գրպանը ևս մի բան պիտի դնեն»⁷¹:

Նկարագրված է նաև, թե ինչպիսի դաժան ու անմարդկային ձևով, ռոսոխն ու վկաները միասին կբերե դատարան. սպառնալիքով իր առաջ կծգե, որպէս իշու կարավան, բռնի խարազանի հարավածներու ներքե հառաջ

կբռնե, այնպէս որ ամբաստանողը կզղջար արած գանգատի համար. նույնպէս վկաններն՝ իրենց վկայութեան համար»⁷²:

Նույնիսկ հիվանդին անկողնից կհանեն. որպէսզի մի կամ երկու արծաթ մեծիթ կաշառք առնելով թույլ տան միառժամանակ, իսկ եթե վկաններն մին կամ ամբաստանյալը տունը չեն և կամ նույնիսկ ամբաստանողը, ոստիկանն ամեն տեսակ սպառնալիք և շարշարանք կհեղու տնեցոց դիմին. խարազանի հարվածներ կտա կսպահանք. «Այլ ևս չեմ կարող գալ, ուր ես լինի գտեք, ինձ պիտի հանձնեք, եթե՝ ոչ, իմ օրականը մի քառորդ ոսկի է կնստիմ տունը կսպասեմ մինչև զա»⁷³: Այսպիսի վերաբերմունքն, անշուշտ, հիմք է տալիս տնեցիներին մեկը մյուսի ականջին փսփսալ. «օսկոր մը թալ բերանը, թող երթա». պանիր, յուղ կամ հավ, մի քանի դուրուշ տալով հանապարհ են դնում, ապա թե ոչ կգնան և ավելի մեղադրանքներ կբարդե նրա վրա: Կաշառք տալը ընդունված սովորութիւն է, այն անտեսողի մասին ասում են.

«Էրմենի վերմեղ տոքուդի,

Եր թոփուզի՝ վերըր օթուզի»⁷⁴:

Հաճախ էլ այսպիսի երևույթները տեղի են տալիս ավելի տխուր դեպքերի, կաշառքից զրկված ոստիկանն անմեղ մարդկանց հերյուրում է, թե նա մի քուրդ է սպանել, որի ազգականները վկա են: «Այդ ժամանակ արդեն պետք է մեծ կաշառք տալ, ազատվելու համար, — գրում է ազգագրագետը, — շատ ու շատ հայեր խուսափելով երեւակայական հերյուրանքներից, խույս տված են ռուսական հողը»⁷⁵:

Այսպիսի պարզ ու փաստացի դեպքերի նկարագրութեամբ հեղինակն ընթերցողին ինքնըստինքյան բերում հասցնում է համապատասխան եզրակացութեան:

Ս. Հայկունու ուշադրութեան չեն վրիպում նաև քաղաքացիական իրավունքի վերաբերյալ հարցերը: Նա իր աշխատութեան այդ բաժնում հատուկ քննութեան է առնում ալաշկերտցիների ընտանեկան հարաբերութիւնները, նրանց ազգակցական

⁶⁹ Նույն տեղում, էջ 45:

⁷⁰ Նույն տեղում, էջ 46:

⁷¹ Հայր շի տա տասը, կուտե թակը, կտա երեք տասնյակը (տե՛ս ՊԹ. Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 1, էջ 48):

⁷² Նույն տեղում, էջ 52:

⁶⁹ Նույն տեղում, էջ 3:

⁷⁰ Նույն տեղում, էջ 39:

⁷¹ Նույն տեղում, էջ 3:

ու խնամիական կապերը, միաժամանակ տալով յուրաքանչյուրի անվանումն ու իմաստը: Հայկական գերդաստանի արյունակցական և ոչ արյունակցական ազգակցային կապերը մեկնաբանելիս՝ հեղինակը հիմք է ընդունել ժողովրդի ավանդական ընկալումները: Ահա թե ինչու այդ գրվածքում, շարադրանքի հետ միասին, մեծ տեղ է հատկացված նաև ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրի նմուշներին՝ առածներին, ասացվածքներին ու ավանդական զրույցներին: Դիտելի է այն, որ հայ նահապետական գերդաստանի գոյությունը պայմանավորող հիմնական նախադրյալները եղել են.

ա) Գերդաստանի անդամների արենակցական միավորումը.

բ) Նրանց տնտեսական վիճակի բարվոքումը.

գ) Պատվի և բարոյականի ընկալումը:

Գերդաստանի մեջ արյունակցական հանգամանքը մեծ դեր է կատարել. «Եթե արենակիցներն իրար թշնամի ևս լինին, իրար կպաշտպանեն օտարի դեմ»⁷⁶: Այդ մասին են վկայում «արնես էդնի, դուշման էդնի, դանակն իր կոթ չտաշե» խորիմաստ արտահայտությունները:

Գերդաստանի նահապետը մեծ հարգանք է վայելել, նա, այլ կերպ ասած, տան թագավորն է եղել. նրա արածն արած է, ասածն անմիջապես պետք է կատարվի, ահա թե ինչու տան ջոշը մեռնելուց հետո «նոր մեծ կընտրեն, նախորդի ավանդած կտակը իրագործելու՝ արտերը պահելու, գոմեշները, գութանը պահպանելու, որպեսզի տան հյուրը չպակսի, օտարի առաջ ամոթով չմնան, թունդրա ծուխը չմարի...»⁷⁷: Այդտեղ պատեհ առիթով հեղինակը քննության է առնում նաև գերդաստանի յուրաքանչյուր անդամի պարտականությունն ու իրավունքները:

Անուհետև Ս. Հայկունին մի առանձին բաժին է հատկացնում հասարակության բարոյական հարցերի մեկնաբանմանը: «Քրեական իրավունք» գլխում հեղինակը ժողովրդական սովորույթի հիման վրա քննության է առնում այդ երևույթները: Նա անդրադառնալով հանցանքի տարատեսակներին

րին թվարկում է ներելի և աններելի հանցանքներ, այսպես, օրինակ, գյուղացու հալնոցեն հավ կամ վարունդ թոցները, անասուններն ուրիշի արոտավայրում արածեցները համագյուղացիների կողմից դիտվել է որպես միամիտ ու ներելի հանցանքներ և ընդհակառակը՝ «ժողովուրդը կզզվի այն հանցանքին, ուստից բարոյական չարիք հառաջ կգա, վատ օրինակ կդառնա հասարակության համար»⁷⁸: Հետևաբար, «դատու, ինատու կատարված» հանցանքների համար ժողովուրդը վրեժ է պահանջել, ասելով. «Թույլ տուր հավուր դատաստանի յուր պատիժը կրե»⁷⁹ կամ «էն ընձի ասեղ խթա, ես ընդոր մախաթ պտի խթիմ» խոսքերը բորբոքված կրքերի ազդեցության տակ գործնական բնույթ ստանալով, մարդուն հասցրել են մինչև արյան գնի պահանջը: Մեր ժողովրդի կենցաղում արինքադին է ծառայել կովը, ձին և այլ ընտանի կենդանիները, ինչպես նաև հակառակորդ գերդաստանից մի աղջիկ առանց դալանի հարս վերցնելը: Այս վերջինը, սակայն, եթե քիչ տարածում է ունեցել հայերի մեջ, ապա խիստ ընդհանրացած են եղել հետևյալ երևույթները. «Սպառնողը,—գրում է Ս. Հայկունին,—միջնորդների հետ կգա, սպանվածի տունը, կրերի թուր և պատանքի կտոր, օջախի վրա կնստի որպես սուրբ տեղ, կասի. «Ձեր օջախն իմ թալի, կուզեք ազատ էնի, կուզեք սպանեցեք»⁸⁰: Ըստ որի տուժած կողմը համաձայնում է մեղապարտին ներել՝ պայմանով, որ նա գնա սպանվածի գերեզմանի շուրջը «չորքոտանու պես թաթելով յոթ անգամ շրջի և մեռնողի մեղքը իր վիզն առնի»⁸¹: Անշուշտ, այս բոլորից հետո էլ՝ շատերը խուսափում են նրանցից. «Ընդրա թթխմոր արնոտ է» ասելով, նրա տանը հաց անգամ չեն ուտեր»⁸²:

Հեղինակի վկայությամբ «Ալաշկերտի, Մանազկերտի, Բուլանլիա քրդախառն գյուղերի ունևոր բնակիչները քրդերու նման քաջալերել են արյան վրիժառությունը՝ «Թույլ մի տաք սպանյալի արյունը հերկրե

⁷⁶ Նույն տեղում, էջ 435:

⁷⁸ Նույն տեղում:

⁸⁰ Նույն տեղում, էջ 441:

⁸¹ Նույն տեղում, էջ 444:

⁸² Նույն տեղում:

⁷⁶ Նույն տեղում, էջ 259:

⁷⁷ Նույն տեղում:

հերկինս բողոքեա՝ ասելով, մանավանդ, երբ սպանողն իրենց համակրելի չէ: Այնինչ աշխատավոր ժողովուրդն ընդհանրապես խաղաղության և հաշտության կողմն է, նա ամեն հնար կդնե արյունահանը կասեցնելու՝ կրկնելով ընդունված խրատականը. «նա արավ, դու մի աներ, ետ կաց, քու թթխմոր արյունով մի շաղախեր...»⁸³:

Այնուհետև, Ս. Հայկունին անցնում է կենցաղի այլ կողմերի նկարագրությանը. «Ուրբան հաճախ են պատահում անձնասպանության դեպքեր,—գրում է նա,—անձնասպանություններ կատարվում են՝ սիրահարության, անպատվության, վնասի և հանկարծ մահվան գուլժ լսելու պատճառով»⁸⁴: Հաճախ էլ կատարված ինքնասպանությունները հնչել են որպես բողոք տիրող հասարակական-բարոյական կաշկանդիչ սկզբունքներին: Այդ մասին է վկայում այն հարսի ինքնասպանությունը, որն իր ծնողների կամքով ընտրված ամուսնուն սիրելու անկարող լինելու պատճառով էլ իր հարսնության շորերը հագած ու զարդերը կապած, ցուրը գցած է⁸⁵: Նման արարքը, անշուշտ, հասարակության կողմից դիտվել է որպես աննեղելի մի սրբապղծություն, հետևաբար և նրան թաղել են առանց քահանայի, գերեզմանից հեռու, ասելով, թե «նորա հոգին սատանան առավ, չթողեց, որ աստված զուր տված հոգին առներ, սատանայի բաժին էր»⁸⁶:

Դեպքերի ու դեմքերի այս սրտառուչ նկարաշարքում ինքնին ակնբախ է դառնում ազգագրագետ հեղինակի վերաբերմունքը: Նա մարդասեր խղճահարության է նկարագրում իր ժամանակի հասարակական տիրող մտայնությունը զոհ դարձած այդ դժբախտների եղբրական վախճանը:

Ս. Հայկունին գեղարվեստորեն պատկերելով կյանքի մռայլ կողմերը, միաժամանակ հասարակագետի հմտությամբ թափանցել է տվյալ երևույթի հասարակական արմատների խորխորատները և հանգել անհրաժեշտ եզրակացությունների: Ահա, ողբերգական մի սիրավեպ, որի դասակարգային ակունք-

ները հեղինակը կարողացել է ճշմարտացի կերպով բացահայտել՝ տալով իր ժամանակաշրջանի իշխող գաղափարախոսության էությունը, ըստ որի մարդուն գնահատելու անմարդկային չափանիշ է դառնում նրա ունեցվածքն ու հարստությունը: Այսպիսին է այդ դեպքը. մի հարուստ խաստուրցու աղջիկ սիրում է իրենց ծառային, շուտով լույս աշխարհ է գալու այդ գաղտնի սիրո պտուղը: Ծառան, չնայած իր աղքատ վիճակին, ուզում է ամուսնանալ թեկուզ մեծ դալանի գնով, սակայն աղքատ ծնողները և հատկապես նրա եղբայրները համաձայն չեն, քանի որ տղան ստորին ծագում ունեւր: Մի օր նրանք իբր գոմում ժաժիկի հոր են փորում և աղքատ գլխին բահով այնքան հարվածներ են հասցնում, որ նրան սպանում ու գցում են հորը, իսկ գարնանը դիակը տանում ու նետում են գետը: Այդ դեպքին ականատես հովիվը հայտնում է կառավարությանը, բայց ոճրագործները կաշառք տալով, ազատվում են դատաստանից:

Ս. Հայկունին շարադրելով այս և նման իրական դեպքերը, միաժամանակ անուղղակիորեն իր բողոքի խոսքն է ուղղում ոչ միայն հարուստ մեծատուններին, այլև իր ժամանակաշրջանի իշխող «արդարադատությանը», որն ի վիճակի է տրորել մարդկային արժանիքները, ոչնչացնել մարդուն բարոյապես, ապա՝ ֆիզիկապես և իր գործած ոճիրը «մաքրել» դրամի կեղտոտ գործարքով:

Բարոյականության ու խղճի հետ կապված և միաժամանակ օրենքի ուժ ստացած անօրինությունները նկարագրելուց հետո, Ս. Հայկունին անցնում է ժամանակի իշխող հասարակական - դասակարգային հարաբերությունների վերլուծմանը, որոնցով և պայմանավորված էր ժողովրդի տնտեսական ու հոգեոր գոյավիճակը:

Թուրքիայում, ինչպես և նրա տիրապետության տակ գտնվող հայկական գավառներում դեռևս հարատևում էին ճորտատիրական կարգերը: Կարգեր, որոնք դեռևս արդարացնում էին վաշխառություն իր տարատեսակներով: Ս. Հայկունու մեջբերած հակիրճ, բայց դիպուկ օրինակները հստակ պատկերացում են տալիս այդ բոլորի մասին. «Ղարաքիլիսայի բնակիչները,—գրում է հեղինակը,—այսօր ցույց կտան երկու

⁸³ Նույն տեղում, էջ 445:

⁸⁴ Նույն տեղում, էջ 448:

⁸⁵ Նույն տեղում:

⁸⁶ Նույն տեղում, էջ 449:

վաճառական, որը տասնվեց տարի առաջ երեք արծաթով գործի սկսած են, ձվով և հավով առևտրի սկսած են և այսօր հազարներու տեր դարձած են⁸⁷։ Եվ որպես հետևանք առևտրավաշխառական հարաբերությունների բուռն վերելքի, Ս. Հայկունին իր բերած օրինակին հակադրում է մի այլ պատկեր. «Յուլյց կտան նաև այն անձը, որ երեք արծաթի պատճառով յուր կալվածը գրավ դնելով այսօր մերկ փողոցները կպտտի»⁸⁸։ Կոնկրետ պատկերների այս հակադրությունն ինքնին գաղափար է տալիս դասակարգային պայքարի մասին։ Դա մի ժամանակաշրջան էր, երբ մեկի դժբախտությունը մյուսի համար երջանկություն էր, փեկի ունեզրկումը, մյուսի՝ ուռճացում. ահա թե ինչպես է նկարագրում հեղինակն այդ գայլային հոշոտումը. «Ընտ օրինաց,— գրում է նա,— տոկոսը կընդունվի 9 տոկոս՝ տարին, սակայն ոչ ուշադրություն դարձնող կա, և ոչ պատիժ՝ ընդդեմ օրինաց վաշխառություն անողին, որով ժողովուրդը 24—36, մինչև 90 տոկոս կտա»⁸⁹։

Այդ ժամանակաշրջանում բացի դրամից փոխառությունների ու գրավի առարկա է դարձել նաև գյուղացու արտոն ու խրճիթը, ձիթհանն ու գոմը. ընտանի կենդանիներն ու գութանը, մինչև անգամ մարդն ու նրա աշխատունակությունը։ Մուրհակով նախատեսվածը ժամանակին չհատուցելու դեպքում գյուղացու ոչ միայն ունեցվածքը փոխանցվում էր վաշխառու կալվածատիրոջը, այլև ունեզրկված գյուղացին պարտավոր էր որպես աշխատուժե վերջինիս մարաբան դառնալ և նրա համար կատարել հարկադրական աշխատանք։

Նշվածի իրական փաստացի նկարագրականն է տալիս Ս. Հայկունին, պատմելով հետևյալը. «Ի հաստիս Մխոյի Պետոն ստացավ Ալի փաշային 15 ոսկի և 15 սոմար ցորյան, որ կիսրար ցորեն սերմանի, նույն տարին ցանքն անհաջող անցավ, ցորենի գինը ևս բարձրացավ 50 դրուշի։ Ալի փաշան յուր տված սերմի արժեքն հաշվեց 750 դշ. 15 ոսկին ևս 1500 դշ.։ Ընդամենը 2250 դշ-ի գումարին վերա ևս տոկոս եկավ 30 տոկոս, որ կանե 675 դշ. սա ևս վերան բարդելով 2925 դշ-ի փոխարեն գրավեց Ալի փաշան

Պետոյի եղները։ Սակայն Պետոն չէր կարող նույն տարին անոթի մնալ, ստիպված կրկին փոխ ցորեն ուզեց, խոստացավ կալի միջոցին յուրաքանչյուր սոմարին վճարել 60 դշ.։ Ալի փաշան տվեց 20 սոմար ցորյան և երեք արտերն ևս գրավ առավ։ Նույն տարին հունձքը առատ էր. Պետոն 100 սոմարեն ավելի ցորյան չէր ծախեր, մինչև անգամ հոժար էր 20 դշ-ի և ավելի պակաս գնով ծախել, սակայն չծախվեցավ, որով Ալին գրավեց նաև նորա արտերն ևս։ Այժմ Պետոն բոլորովին դարձավ մարաբա, այլևս յուր տանը համար չէր աշխատեր, այլ արտերն՝ Ալիին, անասունները՝ Ալիին։ Ալիին ևս պիտի տար սերմը։ Պետոն վարեր, անասունն էր ուսհեր, նորա առվույտը և խոտը հնձեր, այլ և այլ ծառայություններ մատուցաներ Ալիին, ինքը միմիայն մնացած ցորենի կեսը իրեն պիտի վերցներ...։ Եվ այսպես ամեն ինչ փաշայինն է. Պետոն աշխատում է, փաշան արդյունքից իր սերմը կհանե և մնացածը՝ կկիսե, կմնա աննշան մի բան, նաև կառավարությանը պահրա պիտի տալ՝ յոթից մեկը»⁹⁰։

Հասարակական այս անմարդկային հարաբերություններից միակ հնարավոր ելքը փախուստն էր դեպի ոռոսական սահմանը, դեպի Արևելյան Հայաստան։ Այդ քայլին էին դիմում շատ-շատերը։ Նրանցից է, իր ընտանիքի գոյության համար երկու տարի նույն վաշխառուից ցորեն պարտք վերցրած Խաչոն, որը ճկարողացավ տալ, փախավ Ռուսաստան և գաղտնի յուր երեխայք, եղբայրներն ու կանայք բերել տվեց այնտեղ»⁹¹։

Ազգագրագետն իր ուսումնասիրության մեջ անսպառ համբերությամբ գրի է առել այս բոլոր դեպքերն ու անցուդարձերը։ Սովթանական բռնակալության պայմաններում հայ ժողովրդի կրած անպատմելի տառապանքները, քաղաքական, տնտեսական ու բարոյական կյանքի բոլոր դառնությունները, որոնցով և պայմանավորված էր արևմտահայերի զանգվածային կոտորածն ու արտագաղթը որպես պատմական երևույթ։

Թե ինչպիսի՞ն էր գաղթած հայության վիճակը, այդ հարցի պատասխանը ևս մենք գտնում ենք Ս. Հայկունու մոտ։ Քանի որ ժողովրդի ցավերով մորմոքվող ազգա-

⁸⁷ Նույն տեղում, էջ 400։

⁸⁸ Նույն տեղում։

⁸⁹ Նույն տեղում։

⁹⁰ Նույն տեղում, էջ 407—408։

⁹¹ Նույն տեղում, էջ 409։

դրադեպի կյանքի այդ շրջանը ևս կապվում է իր ժողովրդի աստանդական ճակատագրին: Պարսկաստանում և այլուր երկար թափառումներից հետո Ս. Հայկունին էջմիածնի հատուկ կոնգրակով աշխատանքի էր անցել Լճակուից յոթ ժամ հեռու գտնվող ս. Թադևոս Առաքյալի վանքում: Նա «Արարատի» խմբադրուկյանը դրած իր թղթակցությունում խորին ակնածանքով է նկարագրում անցյալի ճարտարապետական այդ հուշակերտ կոթողը, որը բնութագրում է հետևյալ կերպ. «Վանա կողմից միշտ գաղթականներ կզան տեղս այնպիսի վիճակի մեջ, որ վանքը ստիպյալ պիտի օգնե, այնպիսի տեսարանի մեջ, որ տեսնողին սարսուռ կաղգե, մեկ քանի ընտանիքի պաշտպաններ մեռած, երեխայք մնացած են երեսի վերա, մեկ քանի հիվանդ ոչ այս, ոչ այն կողմ կարող են գնալ»⁹²:

Այդ դժբախտները կոտորածից խույս տալով՝ ճանապարհին թափանցում էին ավազակների կողմից, ձմռան սառնամանիքի ու սովի ճիրաններում գալարվելով մերկանդամ, բոկոտն հազիվ ապաստան էին գտնում վանքում: Ամեն օր արեւածագին վանքի դռան մոտ կարելի էր տեսնել 30—40 երեխայք և աղքատներ, արեւակի դեմ փռված՝ սնկուտալով, նույնչափ կանայք և հարսուներ»⁹³: Ս. Հայկունին նկարագրելով անօգնական այրիների շվարած վիճակը, նշում է, որ «այստեղ հայ գյուղեր չկան, որ մի տեղ պատսպարան գտնեն, մուրան ու ապրին: Վանքն ևս անկարող, բայց միևնույն ժամանակ ինչ որ կարող է անել, ձեռք չէ թողած, զի այս կղզիացած վայրն ըստ կարելիության փրկիչ դարձավ գաղթականաց»⁹⁴:

1890-ական թվականներին, երբ Ս. Հայկունին արդեն էջմիածնում էր և մասնակցում էր Սովետոց հանձնաժողովի աշխատանքներին՝ ապաստան, սննդամթերք ու հագուստ էր բաժանում գաղթականներին, հնարավորություն է ունենում մոտիկից շփվել նրանց հետ և ըստ հնարավորին վերարտադրել նրանց վարքն ու բարքը: Գաղթականներից հավաքված տեղագրական ու կենցաղային այդ հարուստ ու բազմապիսի

տվյալներն ազգագրագետի վարպետ գրչի տակ շունչ ու կենդանություն են ստացել: Այդ է պատճառը, որ ինչպես «Արարատի» տարբեր համարներում, նույնպես և առանձին գրքուկներով լույս տեսած Ս. Հայկունու այդ կարգի գրվածքներն ունեն ոչ միայն ազգագրական ու սովորութային, այլև գեղարվեստական արժեք:

Ս. Հայկունին Արևելյան Հայաստանում ևս խորամուխ է լինում ժողովրդի առօրյա հոգսերին ու սպասելիքներին: Հասկանալի է, թե ինչու զառամյալ ծերունին, չնայած իր կյանքի դժվարին ու ծանր պայմաններին, հետախուզական շրջագայություններ է կատարում դեպի Թալին ու Ղումզլու, դեպի Մաստարա և այլուր:

Ժողովրդի կյանքին հետամուտ ազգագրագետն այստեղ ևս տեսնում է կարիք ու թշվառություն, արցունք ու տառապանք: Ահա թե ինչու նա իր անտիպ գրվածքներից մեկում, Թալինի տեղագրությունը շարադրելուց հետո, անցնում է ժողովրդի տնտեսական վիճակի նկարագրությանը: «Ինչպես շատ տեղեր,—գրում է նա,—այստեղ ևս թափալությունը սուր բնավորություն ստացած է: Գյուղերու մեջ ով որ հարուստ է կամ շատ հարուստ ազգականներ ունի, նա ամեն միջոց չինայր անգթաբար ճնշել խեղճին»⁹⁵, և մասնավորելով իր ասածը նշում է. «Այստեղ ևս Բադալ անունով մեկը վաշխառությամբ հառաջացած է, թուրքերն ու հայերը հարստահարելով կարևոր դիրք մը ստացած է: Նա ունի չորս թե հինգ եղբայր, մեկին շինած է գլավա, մեկին՝ հանձնած է իր ապառիկները հավաքելը, մեկին ևս հանձնած է իր դրամները տոկոսով տալը: Գուր մի զարմանաք, ես ասացի եղբորը շինած է գլավա. այն ևս տգետ իր անունը ստորագրել չգիտցող եղբորը: Բառի ճշտությամբ հասկացեք՝ դրամը ամեն ինչ կանե»⁹⁶:

Ս. Հայկունին նկարագրում է հարկահավաքության անմարդկային ու դաժան եղանակները, որոնք կազմակերպել են Բադալն ու նրա եղբայրները: Սակայն ցավալին այն է, որ նրա «թախըմը» եզակի չէ. գյուղում գոյություն ունեն նաև Գորոյի թախըմ, ներսոյի թախըմ, Ելումնոյի և այլ թախըմներ,

⁹² «Արարատ», Վաղարշապատ, 1896, էջ 588:

⁹³ Նույն տեղում:

⁹⁴ Նույն տեղում:

⁹⁵ ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 70:

⁹⁶ Նույն տեղում:

որոնք «գյուղի մեջ բռնավոր են և կճնշեն հայ ու թուրք ժողովրդին»⁹⁷:

Հարստահարող դասակարգի դիմանկարն ամբողջացնելու համար Ս. Հայկունին նաև ներկայացնում է տեղի ծխական քահանային: «Սնահավատ ու նախապաշարյալ, կարդալ գրելի հեռու, նրա շորերու վրա ես կըսեմ հարյուր կտոր կա, դու կրկինը հասկացիր. հազած օրից չէ լվացված, նրա 7—8 տարեկան որդին միայն մկրտության ժամանակ շուր տեսած է, ոչիլը թիվ ու հաշիվ չունի այս տան մեջ: Տերտերս նաև վաշխառու է, թե հայ գյուղացիք և թե շրջակա գյուղերեն թուրք և քուրդ պարտավոր են տերտերոջ»⁹⁸:

Ս. Հայկունուն լրջորեն մտահոգել է ոչ միայն հայ, այլև այլազգի աշխատավոր գյուղացիների ճնշված ու ստրկացած վիճակը. ահա թե ինչու նա ելք ու միջոց է որոնել ժողովրդի վիճակը բարվոքելու համար: Սկզբնական շրջանում նրան թվում էր, եթե մի զարգացած ու անձնվեր ուսուցիչ հանձն առնի գյուղ գնալ և լուսավորություն տարածել, հնարավոր կլինի պայքարել հասարակական չարիքի դեմ, ապա հետագայում, հասարակական կյանքի նոր պայմաններում Ս. Հայկունին հանգում է քաղաքական պայքարի ձևին:

Ս. Հայկունին ինչպես տրապիզոնյան, նույնպես և Ալաշկերտի շարքի իր ազգագրական, իրավական ու սովորութային բնույթի դրվածքներով նպատակ է ունեցել ըստ ամենայնի ընդգրկել հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական ու հոգևոր կյանքը:

Նրա ուշադրությունից չի վրիպել կյանքի և ոչ մի բնագավառ՝ ժողովրդի կենցաղն ու սովորությունները, արհեստներն ու զբաղմունքը, ինքնատիպ տարազներն ու դարձերը, նրանց օգտագործած իրերն ու առար-

կաները, երգերն ու խաղերը, խոսվածքն ու բարբառը. ազգագրական ամեն մի մանրուք, որը Ս. Հայկունու գրչի տակ դարձել է որակ՝ ընթերցողի հրեակայության մեջ վերականգնաբանացնելով տվյալ տեղավայրն իր բնորոշ ուրվանկարով:

Ամենուրեք շրջագայելով, նա ոչ միայն սոսկ նկարագրողի դերում է եղել, այլև, լինելով իր ժամանակի առաջավոր մտածողներից, կարողացել է որսալ իր դարաշրջանի համար բնորոշն ու էականը:

Եթե Հայկունու համար ակնհայտ է, որ 19-րդ դարի 2-րդ կեսին Արևմտյան Հայաստանում աշխատավորությունը կեղեքվում էր գլխավորապես օտար հարստահարիչների կողմից և որ այնտեղ հարցերի հարցը մնում էր հայությունը ֆիզիկական բնաջնջումից ու հոգևոր այլասերումից փրկելը, ապա Արևելյան Հայաստանում մեր ազգագրագետին զարմացրել ու զայրացրել է հայի շահագործումը հայի կողմից: Նա իր ազգագրական բնույթի գրվածքներում նկարագրել է ոչ միայն ավատատերերի, զոռքաների, վաշխառուների կերպարներ, այլև անտեսելով իր նկատմամբ էջմիածնի ցուցաբերած «հովանավորությունը», պատկերել է նաև քահանա-վաշխառուների մի շարք տիպական դիմանկարներ: Այդ է պատճառը, որ Ս. Հայկունու ազգագրական նյութերը, նկարագրություններն ու վերլուծումներն ունեն հասարակական, գիտական և ճանաչողական խոշոր արժեք:

Ս. Հայկունու գրելաձևը պարզ է ու սրտառու: Հետևելով Գ. Սրվանձությանցի օրինակին, նա ժողովրդական կարգի նյութերը շարադրել է կիսադեղարվեստական եղանակով, այն է՝ իրական կյանքի դեպքերի ու դեմքերի ճշմարտապատում ու գեղարվեստական վերարտադրությամբ:

ԲԱՆԱՀԱՎԱՔ-ԲԱՆԱԳԵՏԸ

Հայ ժողովրդի կենցաղը, նրա նիստ ու կացն ու սովորությունները մանրակրկիտ կերպով ուսումնասիրելուց բացի, Ս. Հայկունուն հուզել ու մտահոգել է նաև նրա հոգևոր գանձերը հավաքելու և անվթար պահպանելու հարցը:

Այդ կարևոր խնդրի կենսագործմանն է նվիրաբերել նա իր գիտակցական կյանքը, առանց նյութական որևէ ակնկալության՝ հայրենասիրությունից ու ժողովրդասիրությունից մղված. «Մեր ազգը, որ յուր ավերակաց ներքև ունի անհաշիվ գրական բեկորներ,—գրում է նա,—մեր ժողովուրդը, որ օգտակար ավանդություններով լի գանձարան մի է, միայն թե մայրենի հողի այդ

⁹⁷ Նույն տեղում:

⁹⁸ Նույն տեղում:

խառնիխուռն կուտակված ավերակներն պրպտող և լույս աշխարհ հանելու առիթ տվողի կկարոտի, որ մոլթ ու խոնավ խորշերեն արեղակի առաջ հանն հայի կենցաղավարությունը ու քանքարը աշխարհի առաջ սլարգեա՞լ:

Ս. Հայկունին ըմբռնում էր իր ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական հարարերությունների կործանիչ ազդեցությունը առանձնապես հայ ժողովրդի վրա: Ֆիդիկական բնաջնջման, համատարած ավերի և ձուլումի այդ պայմաններում օրվա պահանջն էր՝ փրկել այն, ինչ հնարավոր է, այն, ինչ դեռևս իսպառ չէր անհետացել:

Ժամանակի այդ թելադրանքը մեր բանահավաքի մոտ հետևյալ կերպ է արտահայտվել. «Գարծյալ հառաչանոք կկրկնեմ՝ ո՞ւր են հայ բանասերներ, անգին հիշատակներն օրըստօրե անհետանալու վերա են ցարդ մեկը մտած և որոնած չէ, թե ինչ կա, միթե չգիտեք՝ մի տող հնության անցյալ պատմության մեջ ի՞նչ մեծ լույս կսփռե, մի՞թե չգիտեք՝ անբան անասուններն անգամ մեր հնությանց թշնամի դարձած են»¹: Այնուհետև, նա դառնացած ավելացնում է. «Ամոթ մեր հնագետներուն, ամոթ մեր բանասերներուն»²: Եվ ինքը շնայած մասնագիտությամբ ո՞չ հնագետ էր և ո՞չ էլ բանասեր, գործի է անցնում՝ ցույց տալով ժողովրդի հոգևոր մշակույթին նվիրվելու բացառիկ օրինակ. «Ուր որ եղել եմ,— գրում է նա իր մասին,—ամենանեղ վիճակիս մեջ անգամ ժամանակս գրելով եմ անցուցած»³:

Ժողովրդի ծոցից գուրս եկած, նրա հետ տանջված ու տառապած, նրա ողջ էությունը լավ ուսումնասիրած Ս. Հայկունին բանահավաքչական գործունեության ընթացքում մշակում է գրառման իր ուրույն սկզբունքները:

Ինչպես հայտնի է, Մոսկվայում 1887 թվականին Գր. Խալաթյանցի լույս ընծայած «Ծրագրի» մեջ հեղինակը հատուկ բաժին էր հատկացրել ժողովրդական բանահյուսության նյութերի հավաքման ու գրանց-

ման հարցերին⁴: Սակայն Հայկունին իր հարկադրական փախուստի ու թափառումների ընթացքում առիթ չէր ունեցել ժամանակին ծանոթանալու այդ ուսանելի գրքույկին: Գր. Խալաթյանցի ֆոնդում պահպանված նամակներից պարզվում է, որ Ս. Հայկունին միայն 1901 թ. Գր. Խալաթյանցից ստացել է նրա «Ծրագիրը» և մեծ հետաքրքրությամբ սկսել ուսումնասիրել⁵:

Այստեղից պարզ է դառնում, որ Ս. Հայկունու 1880-ական թվականներին սկզբնավորված բանահավաքչական գործունեությունը, իր գրառման սխտեմի տարերայնությունամբ հանդերձ, եղել է ինքնուրույն:

Նախ նշենք, որ Ս. Հայկունին բանահյուսական նյութեր է հավաքել ոչ միայն հայ, այլև քուրդ ժողովրդից: Նա աշխատել է նմուշներ մատուցել ժողովրդական բանահյուսության բոլոր ժանրերից և յուրաքանչյուր ստեղծագործությունը ներկայացնել իր բազմազան տարբերակներով՝ ընդգծելով նրանց լեզվաբարրառային նրբերանգներն ու տեղային-ազգագրական ինքնատիպությունը:

Ս. Հայկունու բանահյուսական նյութերն ընդգրկում են արևմտահայ և արևելահայ զանազան գավառները: Այդ հանդամանքը նկատի ունենալով «էմինյան ազգագրական ժողովածուի» գլխավոր խմբագիր Գր. Խալաթյանցը նշել է. «Թե՛ հայ վեպը և թե՛ հեքիաթը մինչև այժմ այնպիսի ընդարձակ ծավալով ներկայացված չեն մեզանում, ինչպես Հայկունու հավաքածների մեջ, իսկ նրա նյութերն իրենց ճոխությամբ ու բազմատեսակությամբ գերազանցում են բոլոր նման ժողովածուները, որոնք լույս են տեսել մինչև այսօր հայ գրականության մեջ»⁶:

Այդ նյութերը նա տարբեր գավառաբարբառներով է գրի առել⁷: Նրա գրառումների

⁴ Գր. Խալաթյանց, Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների, Մոսկվա, 1887, էջ 66—69, 77—84:

⁵ ԳԱԹ, Գր. Խալաթյանցի ֆոնդ, բաժին 5, վավ. 97:

⁶ «Էմինյան ազգագրական ժողովածու», հավաքեց Ս. Հայկունի, Զ. Մոսկվա—Վաղարշապատ, 1906, էջ 5:

⁷ Ս. Հայկունու մեզ հասած բանահյուսական նյութերն ընդգրկում են մոտավորապես հետևյալ տեղավայրերը՝ Տրապիզոնի ու նրա Զեֆանոս, Կոմիլո գյուղերը, Ալաշկերտի հաստուր, Խումլիպուճախ, Մանկասար, Ալիբեկի գյուղերը, Ակն, Արծկե և նրա Առնճկույս գյուղը, Արճեշի ու նրա Գանձակ գյուղը, Բաբերդ, Բալազդ, Բաղեշ, Բասեն, Բուլանջիս, Գյավաշ ու նրա Նա-

¹ Ս. Հայկունի, Մոքոս, Վաղարշապատ, 1896, (բարեբարին ուղղված ձեռն):

² Ս. Հայկունի, Բագրեանգ..., էջ 300:

³ ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 107:

մեջ, սակայն, չեն պահպանվել տվյալ բար-
բառի առանձնահատկությունները, չեն պահ-
պանվել պատրաստություն չունենալով,
Ս. Հայկունին բարբառագիտական նպա-
տակներ չի հետապնդել, բայց և այնպես նա
աշխատել է հարազատորեն վերարտադրել
տվյալ տեղավայրի նյութերի բարբառային
երանգները, իր նամակներից մեկում նա հա-
մաստորեն խոստովանում է, որ ամեն ջանք
գործ է դնում, որպեսզի բանասերների առաջ
ամօթով չմնա. «Թեև որչափ ևս տքնիմ
կզգամ, որ թերություններ պիտի լինին, սա-
կայն որչափ կարելի է պիտի աշխատիմ թե-
րություններու թիվը պակսեցնել»⁹:

Ինչպես երևում է, Ս. Հայկունու ջանքերը
լրիվ չեն պսակվել հաջողությամբ: Այդ
հանգամանքը դեռևս իր ժամանակին նկա-
տել է ակադ. Ստ. Մալխասյանցը: Անվանի
հայկաբանն իր գրախոսություններից մե-
կում, բարձր գնահատելով Ս. Հայկունու մա-
տուցած ծառայությունը, միաժամանակ նշել
է. «Գավառական բարբառը գրի առնելու
համար Ս. Հայկունու ընդունած ձևը բավա-
րար չէ: Մեր ունեցած այբուբենը բավարար
չէ գավառական հնչյուններն արտահայտելու,
մանավանդ ձայնավորների ու կոկորդային
բաղաձայնների համար: Ուստի հարկավոր
էր գոնե մի քանի պայմանական նշաններ
գործածել՝ հնչյուններն ավելի ճիշտ արտա-
հայտելու համար»¹⁰:

Բանահյուսական հուշարձանների այդպի-
սի կատարյալ գրանցումը միայն հնարավոր
դարձավ մեր օրերում¹¹: Այնինչ իր ժամա-
նակին, այն էլ ինքնակրթությամբ առաջ
եկած մանկավարժ-բանահավաքից այդ-

պիսի պահանջներ առաջադրելը բավական
խիստ էր և նրա ուժերից վեր: Մանավանդ,
եթե հաշվի առնենք, որ բարբառներն արդեն
որոշ չափով սկսել էին քայքայվել, և յուրա-
ջանչյուր տեղավայրի նյութը գրի առնելիս
Ս. Հայկունին մի շարք ասացողների է
դիմել, որոնցից ամեն մեկը յուրովի է վե-
րարտադրել իր բարբառը. «Գրական բարբա-
ռով լինելը դյուրին էր,—գրում է Ս. Հայկու-
նին իր նամակներից մեկում,—պարտավոր-
ված եմ յուրաքանչյուր բառի համար մարդ
գտնել, կրկին հարց ու փորձ անել»¹²: Բացի
այդ, բանահյուսական նյութը հաղորդողները
հաճախ այնպիսի գաղթականներ են եղել,
որոնք երկար ապրելով մի այլ գավառում
փոխել են իրենց ծննդավայրերին հարազատ
հնչյունները, որոնք ոչ միայն Ս. Հայկունին,
այլև հմուտ լեզվաբանն անգամ կոժվարա-
նար վերականգնել:

Այսպիսով, Ս. Հայկունու գրի առած բանա-
հյուսական նյութերի ընդգրկման բազմա-
տեղայնությունն, իր որոշ թերություններով
հանդերձ, նշանակալից երևույթ է եղել
մինչ այդ գոյություն ունեցող բանահավա-
քության ասպարեզում:

Հայ բանագիտությանը մատուցած
Ս. Հայկունու մյուս կարևոր երախտիքը
այն է, որ նա բանահյուսական նյութերը
գրի է առել առանց ընտրության և մի նմուշ
գրանցելուց հետո, եթե հանդիպել է նույն
նյութի այլ պատումներ ևս, նույնպիսի
խնամքով նա դրանք ևս դրի է առել՝
կցելով նախորդ կամ այլ տեղավայրի նույ-
նանման պատումին: Այդ մասին են վկայում
նրա գրած նամակներից մեկի հետևյալ տո-
ղերը. «Եթե լավ ճյուղեր (պատումի իմաս-
տով—Վ. Ս.) գտնեմ չեմ փախցներ, գրի
կառնեմ»: Այն ինչ, նրան պատահել է, այն,
ինչ նրան պատմել են, նա, անմիջապես
առանց ժամանակ կորցնելու, գրի է առել
տեղն ու տեղը: Այստեղից էլ նշանակալից է
ժողովրդական նյութի այն հարազատ ընկա-
լումը, այն անաղարտությունը, որն առանձ-
նապես բնորոշ է Ս. Հայկունու գրի առած
նյութերին:

Թվում է, անցյալի մեծ երախտավորների
վաստակը նսեմացրած չենք լինի, եթե նկա-
տենք, որ նրանք բավական ազատ են վար-
վել, եթե Գարեգին Սրվանձտյանցը ժողո-

րեկ գյուղը, Դերշան ու նրա Դերշանի Հոգիկ գյուղը,
Թիմարա Կյուսենց գյուղը, Խլաթի, Խնուսի Զևերմե
գյուղը, Կարսի և նրա Նախիջևան գյուղը, Կարին,
Մանազկերտ, Մուշ, Մոկաց և նրա Սպկանց գյուղը,
Նանդկանց Կարճկան գյուղը, Նորգուղի, Շատախի,
Ռշտունյաց Սոնկյուղու գյուղը, Վանի և նրա Ավանց
ու Գործոթ, Տիրամոր գյուղերը, Զարսանջաք, Տիվրիկ
և Քղի: Արևելյան Հայաստանում՝ Արարատյան դաշտա-
վայրն ու նրա շրջակա գյուղերը, Շիրակի, Թալին,
Դաշլիճա և Ղոմզլու գյուղերը, Սուրմալու, Աշտարակ
ու նրա Օշական գյուղը, Լոռին և վերջապես պարսկա-
հայոց՝ Թավրիզի ու Խոյը:

⁹ ԳԱԹ, Գր. Խալաթյանցի ֆոնդ, բաժին 5, վավ. 429:

¹⁰ «Մշակ», Թիֆլիս, 1902, № 76:

¹¹ Ակադեմիկոսներ Մ. Արեղյանի և Կ. Մելիք-Օհան-
ջանյանի կազմած «Սասնա ծռեր» բազմահատորյակի
գիտական հրատարակությամբ:

¹² ԳԱԹ, Գր. Խալաթյանցի ֆոնդ, բաժին 5, վավ. 446:

վըրգական նյութերը գրի առնելիս տեղ-տեղ վերապատմել է իր լսածը, որոշ տեղերում հարազատ չմնալով բարբառին, կամ ինչպես Մանուկ Աբեղյանն ինքն է վկայել, փոքրիկ շտկումներ է կատարել, աշխատելով հղկել Մոկաց ընթերցող՝ արևելահայերին հասկանալի դարձնելու հատուկ միտումով, իսկ Տիգրան Նավասարդյանը, ոչ միայն իր, այլև ուրիշների գրի առած հեքիաթների մեջ անգամ, որոշ հատվածներ ազատ շարադրել է, տպա Ս. Հայկունին բանահյուսական նյութը գրի է առել ամենայն հարազատությամբ. նա իր գրառումները գրեթե չի ուղղել, չի մշակել, իսկ հարկ եղած դեպքում իր կատարած միջամտության մասին տեղեկացրել է առաջաբանում կամ առանձին ծանոթագրությամբ:

Ս. Հայկունին ճիշտ է հասկացել բանահավաքի կոչումը: Քաջ գիտակցելով լավ ասացողներից անմիջականորեն գրի առնելու անհրաժեշտությունը՝ նա աններելի է համարել բանահավաքի միջամտությունը, որը խախտում է նյութի անաղարտությունը: Քաջավոր լուսիկ և Սետե Հովիկ սիրավեպի առաջաբանում նա գրում է. «Սույն ժողովրդական վեպն պատմած է մեզ ծանոթ շարանշաքի Սինաս բարբառ, որ բուն իսկ նորա բարբառով գրի առի, բայց նկատելով այդ բարբառով գրվածները ժողովրդյան խավերուն մեջ չեն թափանցեր, ստիպյալ վերածեցի գրական բարբառի, առանց յուր ասացվածքի պարզության դաշնելու. այլ՝ միայն տեղ-տեղ նկարագրությունները փոքր ինչ կոկած եմ նույն իսկ պատմողին ծանոթություններ ստանալով»¹²:

Ինչպես տեսնում ենք, Ս. Հայկունին բանահյուսական նյութը ընթերցող լայն հասարակայնությանը մատչելի դարձնելու նպատակով աշխատել է ժողովրդական հիշյալ ստեղծագործությունը փոխադրել դրական լեզվի, բայց այդ դեպքում անդամ հարազատ է մնացել և՛ ասացողին, և՛ նրա հաղորդած նյութի բովանդակությանը:

Բանահավաքը բացառիկ վարպետությամբ կարողացել է թափանցել ստեղծագործ ժողովրդի հոգու խորքերը և այնտեղից ինքնաբերական կերպով լույս աշխարհ հանել նրա անսահման գանձերը:

¹² Ս. Հայկունի, Քաջավոր լուսիկ և Սետե հովիկ, Վաղարշապատ, 1900, Առաջաբան:

Ս. Հայկունին ճիշտ է հասկացել բանահավաքության արվեստը. նախ՝ որ աֆենից կարևորն է, բանահյուսական նյութը անբնագրոս կերպով գրի առնելու համար անհրաժեշտ է ասացողի համար բնական պայմաններ ստեղծել և ընդհակառակը՝ ոչ սովորական պայմանները կարող են խանգարել բանասացի անկաշկանդ վիպելուն: Ահա թե ինչ է գրում Ս. Հայկունին այդ մասին. «Շատ անգամ Մինասը վարձած մոտս նստեցուցած եմ, որպեսզի ավելի շուտ դրի առնեմ. դորանով ես չեմ հաջողած, զի նա ավելի լավ կհիշեր աշխատելու ժամանակ, քան հանգիստ նստած. ինքը ևս գիտեր յուր բնությունը, ավելի լավ կհամարեր 20 կոպեկ օրավարձով աշխատիլ, քան մոտս հանգիստ նստիլ. նորանից ավելի օգտված եմ վանքի բաղանիքի առաջ, երբ տիղմ կշաղախեր, աղյուս կթափեր, շատ անգամ նորա դեմքը կգիտեի, հանկարծ ժպտալից դեմքով կերգեր կամ կպատմեր մի գեղեցիկ հատված, գրիչս նորա ասածներուն չհասնելով՝ կրկին ստիպյալ պատմել կուտայի նախադասություն առ նախադասություն. այն ժամանակ հիշած հատվածը գեղեցկությունից կմերկանար, կդառնար չոր կմախք»¹³:

Բարձր գնահատելով ժողովրդի հոգևոր մշակույթը՝ նա միաժամանակ խոր հարգանք է ցուցաբերել այդ գանձերն ստեղծող, պահպանող ու վերարտադրող բանասացների նկատմամբ:

Սկսած մեր միջնադարյան պատմիչներից, շատերն են արժեքավորել ժողովրդական գուսանների, ասացողների հորինած երգերն ու զրույցները, բայց նրանք նույնիսկ չեն հիշատակել այդ վաստակավորներին: Այդ մասին առաջին տեղեկանքը հանդիպում ենք Գ. Սրվանձտյանցի մոտ, երբ նա իր «Գրոց ու բրոց» ժողովածուի մեջ հիշատակում է Կրպոյի անունը, որպես մեր վեպի ասացողի:

Մեր վեպի հետագա գրառողները (այդ թվում առանձնապես Բ. Խալաթյանցը) աշխատել են այս կամ այն չափով անդրադառնալ բանասացներին, սակայն այդ հարցին բոլորովին այլ մոտեցում է ցուցաբերել Ս. Հայկունին:

Բանահյուսական ինչպիսի նյութ էլ, որ

¹³ Ս. Հայկունի, Մոքոս, Վաղարշապատ, 1896, էջ Բ:

գրի է առել նա, անկախ ծավալից ու ժանրի բնույթից, նախ՝ անպայմանորեն անդրադարձել է ասացողին. նրանից գրի առած նյութերի անձնագրային այդ ինքնատիպությունն ակնբախ է դառնում հատկապես վեպի պատումներում, որտեղ նա ի տարբերություն իր նախորդների տալիս է ընդարձակ տեղեկություններ ասացողների անձնավորության, նրանց կյանքի ու աշխատանքի, ինչպես նաև նրանց կատարման հանգամանքների մասին:

Հիշենք Ս. Հայկունու Մոկաց բարբառով գրի առած «Սանասար և Բաղդասար» պատումը, որին կցել է մի ընդարձակ ծանոթություն, ուր պարզորոշ գաղափար է տրվում վեպի արհեստավոր ասացողների մասին. «Յարդ ունեցած հետաքրքրութենա,—գրում է նա,—այն եզրակացության հասած եմ, որ Սասունա Դավիթ և Մհեր դուցազնական վեպը Մոկացի գգրարներ տարածած են հեռու գավառներ, նաև փոքր մասամբ կումանցի և ոզմեցի գգրարներ: Սոքա իրենց արհեստը ուր որ ի գործ կդնեն, անդ ևս կպատմեն Սանասար և Բաղդասար, Դավիթ և Մհեր, նաև այլևայլ հեքիաթներ: Գարուն, ամառ, աշուն սոքա կտարածվին Բշերի, Ռավանդա, Մահամտանք, Մուշ, Բուլանլիս, Խլաթ, Արծկե, Արճեշ, Ապաղա և այլն, իսկ ձմեռն ևս Աճամ (Երևանա նահանգ): Խումբ-խումբ կտարածվին ամեն կողմեր, յուրաքանչյուր խումբ 5—10—15 հոգի կլինի: Այն խումբը առաջին տարին, որ գյուղի մեջ գգրարություն արած է, հաջորդ տարիներն ևս նույն խումբը պիտի անե, ունէ մի օտար խումբ չէ կարող այդ գյուղը մտնել, եթե համարձակի մտնել թեև հանկարծ՝ ձայն չեն հաներ, Դուիվ ևս տեղի շունենար, սակայն, երբ հարմար վայր մի (իրենց հայրենիքի մեջ) այդ խմբի որևէ մեկին պատահեցան, կսպանեն»¹⁴:

Այնուհետև, Ս. Հայկունին նկարագրում է գգրարների կյանքի ու աշխատանքի պայմանները, որի ընթացքում նաղլ ասողները վերարտադրել են մեր վեպը. «Գգրարները խիստ շարժաշ կյանք ունին, գյուղի գյուղ, անե տուն ման կգան, ցրտին ու անձրևին երբեմն դուրսը, երբեմն ներսը, երբեմն նոթի

և առանց անկողնո, շատ անգամ շոր հողի վերա, գլխու ներքև իբրև բարձ մի քար դրած կմրափեն: Յուրաքանչյուր խումբ ունի մի հատ նաղլ ասող, որպեսզի թե իրենք այդ շարժաշ կյանքի մեջ գրադվին և թե որ գյուղ գնան զբաղեցնեն նույն գյուղացիքը:

Որ մեկ խմբի մեջ, որ լավ նաղլ ասող կա, այդ խմբի պատիվը շատ է, նույն խմբին լավ և առատ ուտելիք կտրվի: Մի խումբ, երբ առաջին անգամ մի գյուղ մտավ, գյուղի օղայի տերը կամ ուսը կհարցնե, եթե իրենց մեջ լավ նաղլ ասող լինի, կընդունեն»¹⁵:

Այնուհետև նա գառը կսկիծով է պատմում գգրարների կենսապայմանների մասին, որոնք նույնիսկ նրանց ստիպում են գողություն դիմել, «Գողությունն արհեստ դարձած է իրենց համար բոլոր գողությունը շատ ճարպկությամբ կկատարեն, այնպես որ ցարդ ոչինչ զգալի անել տված չեն»¹⁶:

Ամեն ինչին հետամուտ Ս. Հայկունին նույնիսկ մանրամասնորեն տալիս է նրանց կատարած գողության տարօրինակ ձևերի նկարագիրը և այդ ընթացքում նրանց օգտագործած ծածկարան խոսվածքները¹⁷, որոնք մեր մասնագետների կողմից արժանի են հատուկ ուսումնասիրության: Այդ բոլորից զատ նա տալիս է յուրաքանչյուր բանասացի կյանքի հակիրճ պատմությունը՝ նշելով բնորոշն ու հատկանշականը: Ահա թե ինչ է ասում նա Սախոյի մասին. «Մոկաց գավառի երբեմնի Մելիք Մուրատի ծոռ Սախուն վեպը սովորել է իր մեծ հորից՝ Մուրատի որդի Պողոսից, որ լավ երգիչ էր, ծաղիկներու և բույսերու վրա երգեր կհորիներ, Դավթի յոթ ճյուղն խիստ մեծ հաջողությամբ կասեր, սա 150 տարի ապրած է և վերջին տարիները աչքերը վնասված...: Սախուն լսած է սույն Սանասար Բաղդասարը իր պապեն (Պողոսեն), որ 14 տարի առաջ Արճեշ մեռած է: Սախուն Դավթի ցեղեն և ճյուղերեն կհամարե ռալաք Աչառ, «Շիրին շահ ու Բարակ շահ», որ մենք այլ վեպերու շարքը դասած ենք»¹⁸:

Այստեղ արդեն Ս. Հայկունին հանդես է բերում իր քննադատական ու բանագիտա-

¹⁴ «Էմինյան ազգագրական ժողովածու» (հավաքեց Ս. Հայկունի), հատոր Բ, Մոսկվա—Վաղարշապատ, 1901: Այսուհետև կնշվի՝ էԱԺ, Բ,

¹⁵ էԱԺ, Բ, էջ 15,

¹⁶ նույն տեղում:

¹⁷ էԱԺ, Զ,

¹⁸ էԱԺ, Բ, էջ 17,

էան նուրբ ըմբռնումները: Նա պարզ տարբերազատում է «Սասնա ծռերը» վիպական այլ զրույցներից:

Բացի վիպասացներից, Ս. Հայկունին հանգամանորեն նկարագրել է նաև հեքիաթասացների ու երգասացների կյանքն ու աշխատանքը:

Նա իր հաղորդած տեղեկությունների մեջ հատուկ ուշադրության է արժանացրել նյութի կատարողականի հետ կապված հարցերին: Այսպես, օրինակ՝ «Հելեքսիանոս» վիպական երդը մեջբերելիս՝ բանահավաքը տողատակին ավելացրել է. «Ծատ սրտառու է, օրորվելով, տխուր եղանակով երգած է Արմաղան Մարտիրոսյանը 65 տարեկան»¹⁹: Այնուհետև մի շարք հարսանեկան ծիսական երգերը գրի առնելիս Ս. Հայկունին նրանց կցում է ազգագրական բնույթի ծանոթագրություններ. «Հարսնացվի ծամերն քսան և չորսի կրաժանեն, ամեն մի ծամ հյուսելու միջոցին մի երգ պիտի ասեն հավաքված աղջիկները, երբ քսան և չորս ծամերը հյուսվեցան, կսկսին պարերգեր և պարեր: Առաջին երդը կասե աղջիկներու Աղայ Բաշին, երկրորդ ծամի հյուսը քրդերեն երգով կսկսեն և այսպես փոխն ի փոխ հայերեն և քրդերեն կերգեն»²⁰:

Ժողովրդական այդ կարգի ստեղծագործությունների կատարման տեղն ու ժամանակը բնորոշող հանգամանքների մասին խոսելուց հետո, Ս. Հայկունին անդրադարձել է նաև երգերի արտաքին ձևական կողմին:

Այսպես, օրինակ՝ պարերգերի «ծանր» ու «թեթև» տեսակներից բազմաթիվ նմուշներ բերելուց հետո, Ս. Հայկունին տողատակին ավելացնում է. «Սուլն պարի երգերն ևս երկար կշարունակվին»²¹: կամ «ամեն տողի սկիզբը «Ջան մարալ, ջան» պիտի կրկնվի»²², և կամ մի այլ տեղում քեռեկնոջ մասին հորինված մի կատակերգում բանահավաքը նշում է. «Ամեն տողի վերջ կրկնելու է՝ քեռեկին»²³:

Այսպիսով, Ս. Հայկունին, տալով նյութի ժողովրդական կատարման առանձնահատ-

կությունները, միաժամանակ աշխատել է ընդգծել նրանց պարերգային դիմիկան:

Բանահյուսական նյութերին կցված բազմաթիվ ու բազմապիսի ծանոթագրությունների մանրակրկիտ ուսումնասիրությունը մեզ հիմք է տալիս ասելու, որ անխոչ բանահավաքը մանրամասն ու համակողմանիորեն անդրադառնալով ասացողների կյանքի ու աշխատանքի պայմաններին, նրանց բնավորության ու հոգևոր աշխարհի առանձնահատկություններին, միաժամանակ պարզաբանել է, թե տվյալ ասացողն ո՞ւմից է սովորել, ո՞ր տեղավայրերում է կատարել և արտահայտչական ի՞նչ միջոցներով է վերարտադրել տվյալ ստեղծագործությունը: Այսպիսի ձևերով ու եղանակներով նա անուղղակիորեն քննել է նյութի ծագման և տարածման հետ կապված հարցերը:

Ինչպես տեսնում ենք, Ս. Հայկունին հատուկ ուշադրություն է կազմել իր ծանոթագրությունները, սակայն չի նշել գրառման ժամանակը: Մի հանգամանք, որը զգալի չափով դժվարացնում է տարբեր բանահավաքների մոտ հանդիպող նույնանման նյութի գրառման համեմատական ուսումնասիրությունը:

Բանասացների մասին վերը բերված տեղեկություններից զատ, Ս. Հայկունին իր հավաքած նյութերին, ըստ պահանջի, կցել է նաև բազմաթիվ պարզաբանող ծանոթագրություններ, որոնք վերաբերում են բանահյուսական տվյալ ստեղծագործության մեջ հիշված հատուկ անունների ու տեղանունների, ազգագրական ու սովորույթային պարագաների լուսաբանմանը, ինչպես նաև դժվար հասկանալի և օտար բառերի բացատրությանը:

Հատկանշական է նաև այն, որ Ս. Հայկունին տարբերայնորեն, բայց արդեն պարզորոշ պատկերացրել է բանահյուսական նյութը մասնագիտական ու գիտական հիմունքներով հրատարակելու անհրաժեշտությունը:

Նա իր բանահավաքչական փորձառության ընթացքում ձեռք բերած ու մշակած այդ սկզբունքները կարողացել է որոշ չափով կիրառել առանձին գրքույկներով լույս ընծայած «Մոքոս», «Հուլիսիկ և Սետե հովիկ», «Թագավոր Լուսիկ» և այլ բանահյուսական հուշարձանների տպագրության

¹⁹ ԷԱԺ, 2, էջ 3:

²⁰ Նույն տեղում, էջ 36:

²¹ ԷԱԺ, 2, էջ 80:

²² Նույն տեղում, էջ 81:

²³ Նույն տեղում, էջ 35:

ժամանակ, Այդ հրատարակությունների տողատակերին նա ոչ միայն տվել է լեզվաբարբառային բնութի բացատրություններ, այլև բանահյուսական կերպարներին, տեղագրական ու ազգագրական միջավայրին վերաբերող լրացուցիչ տեղեկություններ, ինչպես նաև անհասկանալի բառերի մանրամասն բացատրություններ:

Գրառման այդ կարևոր սկզբունքները, սակայն, նա հնարավորություն չի ունեցել կիրառել հավաքած բոլոր նյութերի նկատմամբ: Ինչպես հայտնի է, Լազարյան ճեմարանի պրոֆ. Գր. Խալաթյանցը նրան էր վստահել իր գրի առած բանահյուսական նյութերի հրատարակությունը: Այդ դժվարին ու պատասխանատու աշխատանքի ժամանակ Վեմինյան ազգագրական ժողովածուներին նյութերը կարգավորելու, դասադասելու, սրբագրելու և նույնիսկ շարելու հետ կապված մանրամասնություններից զատ, Ս. Հայկունին պարտավոր էր մտածել նաև հատորները կազմելու և գիտական ապարատով համալրելու մասին:

Ձեռագիր նյութերից ու նամակներից պարզվում է, որ Ս. Հայկունին հիշյալ հատորները հրատարակության պատրաստելիս՝ կցել է գիտական անհրաժեշտ ծանոթագրություններ ու բացատրական բառացանկեր, սակայն նա պարտավորված է եղել այդ մասին ունենալ պրոֆ. Գր. Խալաթյանցի՝ հրատարակության տնօրենի համաձայնությունը: Այդ առթիվ նա հատուկ հարցադրումով դիմում է նրան թե, «Թույլ կտրվի՞ արդյոք տեղ-տեղ բառերի բացատրություններ ավելացնել, երկու կամ երեք տողով ծանոթագրություններ տալ, բաղդատություններ դնել այլ գավառի բառերու և սովորություններու մեջ»²⁴:

Ինչպես տեսնում ենք, անհրաժեշտ կրթություն չստացած բանահավաքը բնատուր զգացողությամբ ըմբռնել է բանահյուսական նյութը գիտական պատշաճությամբ մատուցելու եղանակը, ձևը: Այնինչ Լազարյան ճեմարանի անվանի պրոֆեսոր Գր. Խալաթյանցը, որը թեև քաջ ծանոթ էր օտար աղբյուրներին և ռուս բանասիրական մտքի առաջավոր նվաճումներին, ոչ միայն չի ընդառաջել նրան, այլև մերժել է պահանջ

չելով՝ «ծանոթագրությունները կարճ ու սեղմ լինեն»²⁵:

Այդ թելադրանքը նկատի ունենալով՝ Ս. Հայկունին պատասխանել է. «Ըստ Ձեր հրահանգի արդեն զգույշ եմ մինչև անգամ կարգ մի կարևոր բառերու վերա ծանոթություն կամ բացատրություն տալու մեջ խնայողաբար կ'ավարվի»²⁶, բայց և այնպես անխուսափելի համարելով լրացուցիչ ու պարզաբանող ծանոթագրությունների անհրաժեշտությունը, հատորների մեջ, շատ տեղերում, ինքն իր կողմից ավելացրել է այս կամ այն փոքր-ինչ ընդարձակ լրացումներ:

Ս. Հայկունին նաև ծրագրել էր «Վեմինյան ազգագրական ժողովածուներին» հրատարակության ընթացքում տեքստերի մեջ, տողատակերին և կամ յուրաքանչյուր հատորին կցել դժվար հասկանալի ու օտար բառերի բացատրությունը: Այդ նպատակով նա նույնիսկ (գուցե և անտեղի) շեղատառերով է շարել տվել օտար ծագում ունեցող բառերը: Եվ նա այդ ամենը համաձայնեցրած է եղել Գր. Խալաթյանցի հետ: Սակայն վերջինս փոխում է իր մտադրությունը և Ս. Հայկունուն հրահանգում. «Բառարանը տալ հավաքած նյութերի վերջում: Ես առաջ մտադիր էի առաջին ձևով հրատարակել. այժմ հակամետ եմ երկրորդ ձևին, այսինքն՝ Ձեր բոլոր հավաքած գավառական բառերը իբրև բառատետր կցել առաջիկա Ձեր հինգերորդ հատորին՝ հավելվածի նման: Այս դեպքում օտար արաբերեն, թուրքերեն, պարսկերեն բառերն էլ կարող են հայ բառերի հետ տեղավորվել, միայն թե պետք է նշվին փակագծի մեջ (ա—արբ.), (թ—թուրք.), (պ—պարսկ.), ուստի անհրաժեշտ է օտար բառերն առանձին արտագրել իրենց նշանակությամբ: Շատ կարևոր է, որ բառարանում ավելորդաբանություններ չլինեն, բացատրությունները պետք է լինեն կարճ և որոշ: Պետք է նշվի, թե որ գավառի բառ է. Վան—Վն., Մուշ—Մշ., Տրապիզոն—Տր., պետք է առանձին ուղադրություն դարձնել բառերի ուղղագրության միօրինակությանը, օր.՝ կլօխ—կլոխ, գլօխ, ականջ—անկաճ և այլն»²⁷:

²⁴ Նույն տեղում, վավ. 97 հ:

²⁵ Նույն տեղում, վավ. 436:

²⁷ ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 136:

²⁴ ԳԱԹ, Գր. Խալաթյանցի ֆոնդ, բաժին 5, վավ. 427:

Այս նոր հանձնարարությունն ավելի է դժվարացնում Ս. Հայկունու գործը: Նա անասելի մեծ աշխատանք է կատարում՝ արդեն տպագրված հատորներից դուրս գրած բառերի կույտերը դասավորելու և բացառելու համար: Նրա ժամանակակիցները պատմում են, թե Ս. Հայկունին ժամերով պատկուժում էր ոտը հատակին, որպեսզի իր շորս կողմը սփռված քարտերի վրա գրած բառերն այրենական կարգով դասդասի, նշանակությունը ճշտի՝ տալով նրանց հակիրճ բացատրությունը: Այգայիսով նա կազմում է դժվար հասկանալի բարբառային և օտար բառերի բառարան:

Այդ աշխատանքը, անշուշտ, Ս. Հայկունու ուժերից վեր է եղել և նա մի հմուտ գիտնականի աջակցության կարիքն է զգացել, իսկ պրոֆ. Գր. Խալաթյանցը փոխանակ օգնելու նրան, խորհուրդ է տվել. «Առայժմ թողնել բառարանի հրատարակությունը...: Ես Ձեզ խորհուրդ չէի տալ բառարանակազմությունով պարապել, դա առանձին մասնագիտություն է, թողեք այդ ճյուղը մասնագետներին, մասնավորապես Աճառյանի պես հմուտ լեզվաբանին: Արդյոք ավելի արդյունավետ չէ՞ր լինի, եթե դուք շարունակեիք զբաղվել Ձեր նախկին ազգագրական հավաքումներով»²⁸:

Ինչ խոսք, որ Ս. Հայկունին հավակնություն չի ունեցել մասնագիտական առումով բառարանագիտությանը զբաղվելու: Նա նույնիսկ այդ «ծանր գործը» իր գործը չի համարել: Եվ ինչպես արդեն տեսանք, նա իր բանահավաքչական գործունեության կենսափորձից ելնելով զգացել է ժողովրդական նյութը գիտական սկզբունքներով հրատարակելու անհրաժեշտությունը, սակայն «էմինյան ազգագրական ժողովածո»-ի խնդրո առարկա հատորները բանահավաքչական ողի կամքից անկախ մնացել են առանց բացատրական բառարանի:

Հակառակ այդ բոլորին Ս. Հայկունին ինքնուրույնաբար հաղթահարել է այդ դժվարությունները և ժողովրդական ոգու անդամաճան զգացողությամբ կազմել շուրջ տասը հազար բառի մանրակրկիտ բա-

ցատրականը²⁹, Եթե հաշվի չառնենք բառարանագիտական որոշ կարգի թերությունները, ապա պետք է ասել, որ այն մինչև օրս չի կորցրել իր արժեքն ու կարևորությունը: Ս. Հայկունու այդ անտիպ բառարանի մեջ սպառիչ ու ամբողջական կերպով բացատրված են ժողովրդական այնպիսի բառեր, որոնք տեղ չեն գտել նույնիսկ Սահակ Վ. Ամատունու «Հայոց բառ ու բան»-ի մեջ³⁰: Այդ բառարանի հեղինակը, Հայկազյան բառգրքի օրինակով³¹, գավառային բառերը բացատրել է գերազանցապես մեջբերելով այս կամ այն գրողի գեղարվեստական երկերից: Այդպես է վարվել նաև խոշոր լեզվաբան Հրաչյա Աճառյանը³², որն զբաղված լինելով իր գիտական աշխատանքներով, անձամբ շատ քիչ բան է լսել անմիջապես ժողովրդից: Այնինչ բոլորովին այլ է Ս. Հայկունու պարագան. նա իր կազմած բարբառային բառարանի բացատրական նմուշները քաղել է իր իսկ գրի առած ժողովրդական նյութերից:

Ս. Հայկունին իր այդ ստվարածավալ բառարանի մեջ ընդգրկել է ժողովրդական կենցաղի, նիստ ու կացի բոլոր բնագավառները՝ տեղավայրն ու բնությունը, բույսերն ու կենդանիները, մարդկանց ազգագրական կապերն ու իրավական հարաբերությունները, օգտագործվող իրերն ու առարկաները, արհեստներն ու զբաղմունքները, անհրաժեշտ գործիքները, ազգագրական պիտույքները, տարազներն ու զարդերը, ընդհուպ մինչև պաշտամունքային ու հավատալիքային վերապրուկները. այդ բոլորն իրենց անվանումներով ու մանրամասն նկարագրությամբ՝ զուգորդված ժողովրդական բառ ու բանի, առած-ասացվածքների ու ավանդությունների գողտրիկ նմուշներով: Այս հանգամանքը ոչ միայն բարձրացնում է Ս. Հայկունու կազմած բառարանի բանագիտական արժեքը, այլև նրան հաղորդում է

²⁸ Այդ բառարանը պահպանվում է Գրականության և արվեստի թանգարանում, տե՛ս Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 1:

³⁰ Սահակ Վ. Ամատունի, Հայոց բառ ու բան, 1913, Վաղարշապատ:

³¹ «Նոր Բառգրք Հայկազեան լեզուի», հատոր I և II, 1836, 1837, Վենետիկ:

³² Հր. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, 1913, Թիֆլիս:

²⁸ Նույն տեղում, վավ. 139:

զուտ ժողովրդական արժանահավատություն, Այդ իսկ առումով, Ս. Հայկունու այս յուրօրինակ աշխատությունը ոչ այնքան բառաբան է, որքան ժողովրդական կյանքի բովանդակ մի հանրագիտարան:

Ս. Հայկունին իր երկարամյա բանահավաքչական փորձառությամբ մշակած, գուցե տարերային, բայց արդեն իրենց ճշմարտացիությամբ գիտական մակարդակի ձգտող գրառման սկզբունքներն աշխատել է կիրառել իր հավաքած նյութերը հրատարակության պատրաստելիս:

Հայտնի է, որ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին մեզ մոտ լույս ընծայվող ժողովածուների մեջ բանահյուսական նյութերը դասավորում էին ըստ ժանրերի, այնինչ Ս. Հայկունին ոչ միայն հաշվի է առել ժանրային այդ դասակարգումը, այլև ի տարբերություն իր նախորդների ու ժամանակակիցների, յուրաքանչյուր ժանրին կցել է ուսումնասիրության բնույթի հակիրճ առաջարան: Այդտեղ նա շարադրել է բանահյուսական տվյալ ժանրի ծագման, զարգացման ու տարածման հանգամանքների վերաբերյալ մի շարք ուշագրավ դիտողություններ:

Ս. Հայկունին, հարկավ, իր այդ սեղմ առաջաբանների մեջ ի վիճակի չէր բանագիտական համընդհանուր հարցեր քննարկել, սակայն այդ դիտողությունները արժեքավոր են այն տեսակետից, որ դրանք, իրենց նախնականությամբ հանդերձ, ընդգրկում են մեր բանահավաքի ըմբռնումները գիտության այդ բնագավառի մասին:

Ինչպես տեսնում ենք, Ս. Հայկունին ոչ միայն նկարագրել է ժողովրդի նիստ ու կացը, գրի է առել նրա հոգևոր մշակույթը, այլև այդ նյութերը լույս ընծայելիս նա մշակել է իր համար որոշակի սկզբունքներ: Նա ճիշտ է ըմբռնել ժողովրդական բանահյուսության ուսումնասիրության, այսինքն՝ բանագիտության անհրաժեշտությունը և ինքը նախնական փորձեր է կատարել այդ ուղղությամբ:

Արդ, երբ ըստ հնարավորին քննության ենք առնում Ս. Հայկունու գրառման սխառմի սկզբունքներն ու նրա հայացքը բանագիտության նկատմամբ, տեսնում ենք, թե բանավոր խոսքի ինչպիսի նմուշներ է նա գրի առել և դրանք ինչ չափով են հարստաց-

նում հայ ժողովրդական բանահյուսության զանազանը:

Ս. Հայկունու հավաքած ստվարածավալ նյութերի մի առ մի վերլուծությունը մեր նպատակից դուրս համարելով, կտանք նրանց ընդհանուր բանագիտական արժեքը:

Սկսենք վեպից, որովհետև առանձնապես նշանակալից է Ս. Հայկունու երախտիքն այդ բնագավառում: Եթե Գարեգին Սրվանձտյանցին է պատկանում հայ ժողովրդական վեպը հայտնաբերելու պատիվը (1873 թ.), որին հաջորդեցին Մանուկ Աբեղյանի (1886 թ.), Գարեգին Հովսեփյանի (1891 թ.), Խաչիկ Դատյանի (1895 թ.) և Բագրատ Խալաթյանցի (1898 թ.) պատումները, ապա Ս. Հայկունին, իր նոր գրառումներով ոչ միայն համալրեց վեպի մինչ այդ գոյություն ունեցող Մոկաց պատումները, այլև լույս աշխարհ հանեց Շատախի, Խլաթի ու Արարատյան տարբերակներն իրենց անաղարտ ու ամբողջական վիճակով: Ս. Հայկունու գրի առած պատումներն իր ժամանակին հրատարակվել են: Նրա «Սասունա Դավիթ» (Խլաթի բարբառով) պատումն առաջին անգամ լույս է տեսել «Արարատ» ամսագրում³³: Այն շնայած անստորագիր է, սակայն հայտնի է, որ Ս. Հայկունին է³⁴:

Բացի այդ, Ս. Հայկունու գրի առած «Սասնա և Բաղդասար», «Դավիթ և Մհեր» Մոկաց պատումները, ինչպես նաև նույն վերնագիրը կրող Շատախի և Արարատյան տարբերակները հրատարակվել են «Էմինյան ազգագրական ժողովածու»-ի երկրորդ և չորրորդ հատորներում³⁵, որոնք հետագայում իրենց արժանի տեղն են գտել նաև «Սասնա ծռեր» ժողովածուներում³⁶:

Եվ ի վերջո, Ս. Հայկունու գրի առած «Ջոջանց տոն» Մոկաց պատումը, որն Ստ. Կանայանցը քաղելով «Արարատ» ամսագրի 1909 թ. մայիս-սեպտեմբեր համարներից, զետեղել է «Ջոջանց տոն և

³³ Տե՛ս «Արարատ», վաղարշապատ, 1898, էջ 520—525:

³⁴ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 10:

³⁵ ԷԱԺ, Բ, էջ 1—17, 19—50, Գ, 1902, էջ 369—398, 407—462:

³⁶ «Սասնա ծռեր», խմբագրությամբ Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի, Ա և Բ (1-ին և 2-րդ մաս) հատորներ, Երևան:

կա՛մ «Սասնա ծռեր» վեպի երեք փոփոխակօ գրքում:

Ս. Հայկունու ղրի առած պատումները, անկախ վեպի բովանդակությունը հարստացնելու ուղղությամբ ունեցած արժեքից, մեղ հիմք են տալիս անդրադառնալու մի քանի բնորոշ առանձնահատկությունների, որոնցով աչքի են ընկնում մեզ հայտնի նրա վեց պատումները:

Ս. Հայկունու ղրի առս ծ արարատյան պատումի մեջ ուշագրավ նորույթ են կենցաղային, իրավական ու հավատալիքային բնույթի դրվագները, որոնք, որոշ իմաստով, թարմություն են հաղորդում տվյալ պատումին:

Այսպես, օրինակ՝ Սասունի ճանապարհին Դեղձունը մենամարտում է Սաղնասարի (իմա՝ Սանասար) հետ և պարտվելուց հետո խոստովանում.

Ես էլ թագավորի աղջիկ եմ.

Ես օրթում ի կիրե

Ինչ մարդ իմ քամակ տար դետին,

Ես ընդրան առնեի,

Դու ընձի՝ մարդ, ես էլ քեղի՝ կնիկ³⁷:

Եթե կանացի այս հանդուգն առաջարկը մայրիշխանական տոհմային հասարակության մի վերապրուկն է, ապա Մսրու Մելիքի արյունով «Թղթիկ» գրելը՝ իր դաշնակիցներին, մեղ հիշեցնում է ժողովրդի մեջ տարածված սովորույթը, ըստ ոյի օտարներն արյունը խառնելով՝ հարազատացել, եղբայրացել են միմյանց³⁸:

Այս պատումի մեջ իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել նաև մեր ժողովրդի բարոյական մաքրության մի շարք յուրահատուկ գծերը: Այսպես, օրինակ, եթե Դավիթը մերժում է Մսրու Մելիքի այրու հետ ամուսնանալու առաջարկը և ասում.

Ես մորե որ ծնվեր իմ գառնարատ

(գառն անարատ) եմ,

Ես յեմ իսլալ լեշ ձեր խարամ լեշիւր չըմ

խառնի³⁹:

Փոքր Մհերը ևս իրեն 40 օր հորի մեջ պահած

պառավին վեհանձնորեն պատասխանում է.

Ես անբախտություն չեմ անի,

Մեր ազգի մեջ էգ բան չէլի,

Քու աղջիկ ըլլի իմ հանգութ հաթուն մոր
նման⁴⁰:

Նույն Փոքր Մհերը Ձենով Օհանի կնոջ դայթակղությանն անդրդվելի մնալով, զուսպ պատասխան է տալիս նրանց.

Խորեխապ՛ր, ես կարամ քեզ էլ,

Քու կնկանն էլ սպանեմ,

Ես ջահլ եմ, դու ահլ եք.

Համա անբախտություն չեմ անի, ես ըստե
չի մնամ,

Քու կնիկ բերախտություն արավ ինձ վրա,
Իմ սիրտը դարուլ շանի, որ ըստե մնամ⁴¹:

Ահա թե ինչու բարոյական անաղարտության ու արդարության պաշտպան Մհերը չդիմանալով տիրող անօրենություններին, այլ ելք չունենալով, մտնում է Ագռավի քարը և միայն Համբարձման օրերին, ինչպես պատմում են.

Կըլլի, աշխարք թամաշա կանի,

Մի ախ կքաշի, էլի կքաշվի կմտնի ներս⁴²:

Պատահական չէ, որ Ս. Հայկունու ղրի առած այդ ծավալուն պատումին, որպես վերջանք, կցված է բարեխոս մի երգ: Իր բուն էությունը ժողովրդական այդ աղոթքի մեջ վիպասանը բազմաթիվ սրբավայրեր և ուխտատեղիներ զորավիգ կանչելով նախախնամությունից «Միլլեթի» (մարդկության) համար ողորմություն է հայցում՝ ավելացնելով.

Հնձի մարդ անես, մարդամեջ տանես.

Դո՛ւմանաքո՛ւմ շանես, ամեն⁴³:

Գաղափարական բովանդակության ու վերջաբան եզրակացության այս հոգեհարազատությունն ինքնին բացահայտում է բարոյապես կատարյալ ու լիարժեք մարդ լինելու այն պահանջը, որը թելադրում է ժողովուրդին իր կյանքի բոլոր բնագավառներում անխտիր:

³⁷ Նույն տեղում, Բ, 1951, էջ 313:

³⁸ Նույն տեղում, էջ 316:

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ Նույն տեղում, Ա, 1936, էջ 318 (ընդգծումը մերն է՝Վ. Ս.):

³⁷ «Սասնա ծռեր», Բ, 1951, Երևան, էջ 246:

³⁸ Տե՛ս Նույն տեղում, էջ 265:

³⁹ «Սասնա ծռեր», Ա, 1939, էջ 678:

Ս. Հայկունու գրառումների մեջ ուշագրավ են մի շարք ինքնատիպ նորույթներ, որոնք ոչ միայն բանասիրական, այլև ազգագրական որոշ արժեք են ներկայացնում հենց վեպի բաղադրիչ մասերն ուսումնասիրելու համար:

Ս. Հայկունու գրի առած պատումների մեջ բավականաչափ ուժեղ է հեքիաթային տարրը: Համոզվելու համար դիմենք փաստերին: Վերցնենք, օրինակ, Մկրտիչ Հարու-թյունյանի պատմածը Շատախի բարբառով: Այն լի է հրաշապատում դրվագներով ու դիցաբանական մտածելակերպի բազմաթիվ նմուշներով: Այսպես, եթե Գարեգին Սըր-վանձտյանցի պատումի մեջ Դավիթն ու խանգութն ուղղակի հանդիպում են խաս բախում, ապա Ս. Հայկունու գրի առած այդ տարբերակում էպիկական շնչով պատմվում է, թե ինչպես դարիս Դավիթը գալիս, փուլ է տալիս պարսպի պատը և Քուռկիկ Ջալալու հետ մտնում խաս բախեն, ապա ՁԵԻՆ կթըղնը վարդ ըռահաններու մեջ կերեծցնեա, իսկ ինքը՝ ճանմահական հավուզի վրեն կպառկի կքնի: Հեքիաթային հուրիմալաքներին հիշեցնող խանգութն ուղարկում է իր աղախնին և նրա միջոցով հայտնում.

Օձ ուր պոռտով, խավք ուր թևով,
Մեր խաս բախչի վրեն չէր իջե,
էն ի՞շ հագ ունի, ուր գըլխին գա,
Ջարկի բադան, քակի, մտնի մըջ բախչին,
Ձին թըղնի մեջ, էրեծա:
Ի՛նչ գանգար սնմարիֆաթ մարգ ի.
Թըղ ըլնը, հա՛,
Ափսուս ի, թե չէ ֆերգներ կըգան,
Ինու ջոջ բրդուջ ինու ականջ կըթղնին⁴⁴:

Հեքիաթային տարրն իրեն զգացնել է տալիս նաև այլ դրվագներում. ինչպես, օրինակ՝ Ս. Հայկունու գրի առած արարատյան ծավալուն տարբերակում, որի ասացող Մուրատ Հովսեփյանը, իր ուսուցիչ Բարսամ աշուղից նաև շատ հեքիաթներ ու ավանդու-թյուններ սովորած լինելով, հեքիաթախառն գեղեցկությամբ է մատուցել վեպի այդ պատումը: Ահա մի դրվագ, որտեղ պատմվում է, թե ինչպես ծնողների գերեզմաններից հեռանալով.

Մհերը ընկավ ճանբախ,
Ցավաշ-յավաշ գնաց,
Միամիտ էր, չէր գիտրմ ճանբախ ինչպես էր:
Գնաց մե բաղ ըռաստ եկավ,
Ասավ.—բեզրեր եմ, գնամ, եթամ,
էդ բաղի մեջ ջուր կըլլի, խմեմ:
Գնաց. նստեր էր հավուզի վրեն ջուր խմելու.
Բազից հեռու բանցր օթախ կար,
Փանջարից, աղչիկ կար, իրիշկեց,
Տեհավ՝ բաղի մեջ մե մարդ ա նստե:
Ղարավաշին ըրըղկեց, ասավ.
— Թո ըլլի էթա, մեղք ա:
Թե իմ ախպեր տեհավ, կսպանի⁴⁵:

Այս պատումի մեջ լավ է կերտված հե-քիաթային Քուլընկի դեկ կերպարը.
Իրիշկեց, տեհավ՝ մեկ մարդ ճանբախ գալում.
Մեկ շինարի ծառ դրե թևին:
Վերին ճղները վերի օխշար, վերի տավար
շարե,
Ներքին ճղները գետին քրքաշ էթում ա,
Թող-գուման տվե վրեն⁴⁶:

Ինչպես հայտնի է, Մ. Արեղյանի և Գ. Հով-սեփյանի գրի առած պատումների մեջ ևս Փոքր Մհերը պայքարում է պառավի և Կուլ դեկ հետ, սակայն այստեղ հանդիպած Քուլընկի դեք, առասպելական Տորթին հի-շեցնելով հանդերձ, աղերսվում է որսի աստծո հետ և իր նկարագրականով, այնու-ամենայնիվ, մնում է բացառիկ: Մանավանդ, եթե նկատի ունենանք ազգային մի շարք հատկություններ, ինչպիսիք են հյուրընկա-լությունն ու ըմբշամարտից հետո, իր ախո-յանի գերազանցությունը զգալով, նրա հետ ախպեր-ընկեր դառնալու հանգամանքը: Սովորութային ու բարոյական այնպիսի հատկանիշներ, որոնք ժողովուրդը վերա-գրել է երևակայական այդ կերպարին: Ահա գեղարվեստական արտահայտչական այսպիսի եղանակներով Քուլընկի դեք պատկերավորության նոր որակ է ստանում, որը և իր հերթին որոշ թարմություն է հաղոր-դում վեպի այս պատումին⁴⁷:

Բացի այդ, Ս. Հայկունու գրի առած

⁴⁵ «Սասնա ծռեր», Բ, էջ 307:

⁴⁶ Նույն տեղում, էջ 307—308:

⁴⁷ «Սասնա ծռեր», Ա, էջ 682—683, 699, Բ, էջ 243 և այլն:

⁴⁴ «Սասնա ծռեր», Ա, էջ 681:

պատումներն աչքի են ընկնում կենցաղագրական մանրուքներով⁴⁸, տարազների մանրազնին նկարագրությամբ, ինչպես նաև ժողովրդական հավատալիքների, երազատեսությունների, անեծքների ու օրհնանքների առկայությամբ⁴⁹։ Այս բոլորը միասին ստեղծում են ազդագրական մի յուրօրինակ մթնոլորտ, որտեղ բանահյուսական նյութը հնչում է ավելի բնական և իրական կյանքին առավել մոտ։

Ս. Հայկունին «Սասնա ծռերի» հիշյալ տարբերակներից բացի, դրի է առել նաև «Շիրին շահ և բահր» ժողովրդական վեպը։ Բանահավաքի կարծիքով այդ ստեղծագործությունը ես մեր վեպի մի ճյուղն է, այսինքն՝ նրա մի տարբերակը⁵⁰։ Եվ նա կուլապի բարրառով դրի առած իր այդ նույն դրույցի տողատակին տալիս է հետևյալ ծանոթագրությունը. «Շիրին շահի վեպը հին հայկական ավանդության քանի կետեր կշռալի, որով ընթերցողները պիտի հասկանան, թե վեպս հայկական ասացվածի ձև ունի... վեպիս ավելի ընդարձակ մի ճյուղը դրի առած եմ Մոկաց բարբառով, որ ունի նաև երգեր։ Նույն վեպի ասող Զատոն կասե, թե «շախ» կնշանակե «բողբոջ», վասնզի Դավթի բողբոջներն է «Շիրին շախ»⁵¹։

Հիշյալ Զատոյի պատմած տարբերակը Ս. Հայկունին լույս է ընծայել «Արարատ» ամսագրում⁵², այնուհետև նաև առանձին դրքով⁵³։

Հեթաթախառն բունահյուսական այդ հուշարձանում իսկապես շոշափման որոշ կետեր կան մեր վեպին, հատկապես դիցարանական-առաքելաբանական գծով։ Այսպես, օրինակ՝ Բարակ շահը Սյուտակ և Սև դեերին հաղթելուց, այսինքն՝ բնության անհասկանալի ուժերին տիրապետելուց հետո, ոչնչացնում է, շատ րսմով Մսրա Մեղիքի բնավորության բացասական կողմերն ու նրա բռնությունը հիշեցնող, Վրոբկ Վարդանին, յոթ տարի նրա այրու հետ կենակցե-

լուց հետո, «վառում է» այդ տան ճրագը։ Այնուհետև նա ձեռք է բերում Քուռկիկ Զալալին, Թուր Կեծակին, զին Սատաֆին և Թամբը։

Ժողովրդական այս ստեղծագործության մեջ, եթե Բարակ շահը այս կամ այն չափով հիշեցնում է Սանասարին ու Մեծ Մհերին, այսպես Անուշ շահի և նրա որդու՝ Տյուլի շահի գոտեմարտը հարակցվում է Դավթի ու Փոքր Մհերի կովին։

Վիպերգում հանգես է գալիս նաև Տյուլի շահի հարսնացուն։ Նա իր կախարդական հատկություններով հիշեցնում է վեպի Քառսուն ճյուղ ծամին։ Այստեղ ևս աղջկա ձեռք բերումը կարելի է դիտել որպես արեգակի նվաճում։ Անուշ շահը երեք օր, երեք գիշեր Քաջանց դեմ կռիվ է մղում, իսկ աղջիկը, այլ ելք չունենալով, հանձնվում է ասելով.

Իս բերդիկմ իմ ոսկեղեն,
Պատան բոլոր արծըթեղեն,
Դունիկ վերեն ավաստ բարեզեն,
Լյուանակ տու էրեգակն ամանաթ,
Դարձի քյու կովու վերեն⁵⁴։

Քաջանց այս վեպում ևս անմահական ջուրը հրաշագործ հատկություններ ունի, իսկ Քուռկիկ Զալալին հանդես է գալիս նույնպիսի գերբնական ուժով, ինչպես մեր «Սասնա ծռերում» և մեր հին վեպում։

Անվանի բանասեր Ստ. Կանայանցն իր «Ջոջանց կամ Սասնա ծռեր վեպի երեք փոփոխակ» աշխատության մեջ մշակում է մի հատուկ տեսություն, ըստ որի Բարակ շահն ու Շիրին շահը կապվում են մեր 4-րդ դարի պատմության՝ Տիրանի և Արշակի հետ⁵⁵։

Բացի այդ, Ստ. Կանայանցը զարգացնում է մի այլ միտք, թե մեր քաջանց վեպից որոշ ճյուղավորումներով վիպական հերոսները ձևավորվել դարձել են «Քոռ-օղլի», այլ կերպ ասած՝ Քյոռ օղլին իր ծագումով առնչվում է մեր հին վեպին՝ այն է «Պարսից պատերազմ» վեպին։

Մեջբերված զուգահեռները մեղ հիմք են տալիս ենթադրելու, նախ՝ որ բավականաչափ ակնառու նմանություններ կան մեր

⁴⁸ «Սասնա ծռեր», Ա, էջ 671, Բ, էջ 254, 271, 304։

⁴⁹ Նույն տեղում էջ 686, 691, Բ, էջ 266, 272, 273, 284։

⁵⁰ ԳԱԲ, Գր. հավաքյալի ֆոնդ, բաժին 5, վավ. 431։

⁵¹ ԷԱԺ, Բ, էջ 90։

⁵² «Արարատ», Վաղարշապատ, 1901, էջ 375—382։

⁵³ Ս. Հայկունի, Բարակ շահ և Անուշ շահ, Վաղարշապատ, 1901։

⁵⁴ «Արարատ», 1901, Վաղարշապատ, էջ 381։

⁵⁵ Ստ. Կանայանց, Ջոջանց տուն կամ Սասնա ծռեր վեպի երեք փոփոխակ, 1910, Վաղարշապատ, էջ ԺԳ—ԺԴ։

վեպի ու նրա «ճյուղերի» (այսինքն՝ պատում-ներին, ինչպես հասկանում էր Ս. Հայկունին) միջև և ապա երկրորդ՝ որ այդ վիպական հյուսվածքի տարբեր ճյուղավորումները խմորվել ու ձևավորվել են հասարակական-քաղաքական այնպիսի պայմաններում, որոնք ծնունդ են տվել ինչպես մեր հին, նույնպես և նոր վեպերին:

Հայտնի է, որ «Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ», «Սասնա ծռեր» և սրանց հարակցվող «Շիրին շահ, Անուշ շահ» վեպերի նախնական տարբերակները մեզ չեն հասել, բայց այդ «ճյուղերի» հետքերը առկա ենք գտնում մեր պատմիչների մոտ: Մի հանգամանք, որը բավարար հիմք է տալիս ենթադրելու, թե վիպական այդ ճյուղավորումները տարածված են եղել նույնիսկ այդ ժամանակաշրջանում, քանի որ մեր պատմիչներն օգտվել են ժողովրդական ծագում ունեցող այդ աղբյուրներից:

Ս. Հայկունին իր գիտական պատրաստու-թյամբ անկարող էր բանասիրական ուսում-նասիրություն կատարել, սակայն նա բա-նահավաքի նուրբ հոտառությամբ կոհակ է այդ ճյուղերի ստեղծագործական հարա-զատությունը մեր վեպին և հետամուտ է եղել դրանց մի շարք տարբերակների գրառ-մանը:

Մեծ է Ս. Հայկունու երախտիքը նաև «Հայ-քրդական վեպը» (իմա՝ հայ-իրանա-կան) հայտնաբերելու գործում: Հմուտ բա-նահավաքն զգալով այդ մոտիվների հարա-զատությունը մեր «Սասնա ծռերին», գրի առել և հրատարակել է այդ արժեքավոր նյութերը⁵⁷:

Այդ առումով ուշագրավ են վիպական պատմվածքները Ռոստամի, նրա հոր Զալի, Բեճան և Սամ հերոսների մասին: Ինչ-պես նաև այնտեղ հիշատակված Կաջբա-վուզ թագավորը, Կիվը (Գիվ), Մահ-Մարի-շան (Մենիժե), Սիսփուշը, նույնպես և Ռոս-տամի նժույգը Ռախշը (Աշխար, Աշխալ), սպիտակ, կարմիր ու սև դեերը, որոնք եթե մի կողմից հիշեցնում են Ֆիրդուսու «Շահ-նամեն», ապա մյուս կողմից կապվում են հայկական հին ու նոր վեպերին:

Ռոստամն իր մեջ խտացնելով ժողովրդի

արիությունը և բռնությունը չհանդուրժող նրա հերոսական ոգին, Բեճանի հետ միա-սին պայքարի է դուրս գալիս Կաֆկուֆասար դեերի, ապա նաև Սալման Սնդու դեմ: Այս վերջինիս հարկահավաքներն անասելի տան-ջանքների ենթարկելով գյուղացիներին, նրանցից հավաքում էին յոթ տարվա խարճը:

Վոյվոյոց իսկաց գեղական.

էն ինոր կտփի,

էն ինոր կշարչըրի,

էն ինոր փողպատ բռնած,

էն ինոր թև կքաշի գյուս,

էն ինոր կջանջիսի⁵⁷:

Ռոստամը դադարեցնում է ավերածու-թյունը և, մեր վեպի նման, անձամբ կռվում է Սալման Սնդու հետ, հաղթում և կնության վերցնում նրա աղջկան: Այդ ամուսնություն-ից ծնվում է Մհերը⁵⁸:

Այստեղ ուշագրավ է այն, որ Ռոստամի որդին ոչ թե Զոհրաբ է կոչվում՝ ըստ «Շահ-նամեի» և կամ Զուրար՝ ըստ կովկասյան վիպական զրույցների, այլ՝ Մհեր: Մի անուն, որն ինչպես բանահավաքն է վկայում, հա-վասարապես գործածական է Վասպուրակա-նի հայ և քուրդ ժողովուրդների մեջ և որի հետ են կապում նաև մի շարք ավանդու-թյուններ⁵⁹:

Մինչև Ս. Հայկունու այս նյութերի լույս ընծայումը, հայ բանագիտության մեջ հայտնվել է այն կարծիքը, թե «Պարսից զրույցները, նախքան հայ ժողովրդի մեջ հաստատվելը, ըստ երևույթին անցել են և մի այլ՝ քրդական խմբագրումից, որի ազդեցությունը նկատելի է նույնիսկ սեփա-կան անուններում»⁶⁰:

Այնինչ իրողությունն այն է, որ պարսկա-կան վեպի մոտիվները մեր ժողովրդի մեջ գոյություն են ունեցել ավելի վաղ, քան հայ և քուրդ ժողովուրդների հոգևոր մերձեցումը: Այդ մասին վկայություններ ենք հանդիպում դեռևս մեր հին մատենագիրներին՝ Ազաթան-գեղոսի, Փավստոս Բուդանդի, Մովսես Խո-րենացու, Հովհան Մամիկոնյանի, որոշ շա-

⁵⁷ էԱԺ, Ե, էջ 7:

⁵⁸ Նույն տեղում, էջ 10:

⁵⁹ Տե՛ս Նույն տեղում:

⁶⁰ Բ. Խալաթյանց, Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ, 1901, Պարիս, էջ 9, 13:

⁵⁶ Տե՛ս էԱԺ, Ե,

փուլ Շապուհ Բագրատունու, ապա և Գրիգոր Մագիստրոսի մոտ Բացի այդ, հայտնի է նաև, որ Կոստանդին Երզնկացին «Շահնամի» ձայնով ստեղծել է մի երկ, որի դադարական բովանդակությունը թեև կրոնական է, բայց ձևը՝ տաղաչափությունը, Շահնամինն է⁶¹։

Այսպիսով, պարզվում է, որ նախքան բրդերը, հայերը վիպա-բանահյուսական կապ ու հաղորդակցություն են ունեցել Իրանի հետ, և «Շահնամի» մոտիվները պատմորվելիս են եղել հայերի մեջ։ Այդ առումով խիստ բնութագրական է պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանի տեսակետը, որտեղ հստակ ասվում է. «Իրանի առասպելական և վիպական մոտիվների մի խոշոր մասն էլ Ֆիրդուսուց, անդամ «Կարնամակից» շատ առաջ բանավոր ճանապարհով մուտք են գործել Հայաստան, ընդունելություն գտել հայերի, սկզբում, գլխավորապես, ազնվական դասի, ապա և վեպ ու առասպելով, դրույց ու հեքիաթով երկար գարեք սնվող գյուղացիության կողմից, սիրվել, հարազատացել և միացել հայկական վեպերին՝ վերածվելով նոր որակի։ Վեպն այսպիսի մի կենդանի ստեղծագործական պրոցես ապրելով՝ կատարելապես ազգայնացել է»⁶²։

Ինչ խոսք, որ Հայաստանում իրանական վեպի արմատակալմանը որոշ չափով նպաստել է նաև քրդական բանահյուսությունը, որովհետև, ինչպես հայտնի է, քրդերը պարսիկներից որդեգրել են «Շահնամի» բազում վիպական դրվագներ և ամբողջական պոեմներ։

Հետագայում 11—12-րդ դարերից սկսած, երբ պատմական դեպքերի բերումով, քրդերը հարևան են դառնում հայերին, համատեղ կեցությունն ինքնաբերաբար տեղի է տալիս նաև հոգևոր մերձեցման, հետևաբար և ժողովրդական բանահյուսության փոխադարձ յուրացման։ Այս ձևով էլ գոյանում է երկրորդ աղբյուրակը, որի միջոցով իրանական («Շահնամի») մոտիվները կապվում են մեր բանահյուսությանը և մեր

«Սասնա ծռերը» փոխադարձաբար տարածվում են քուրդ ժողովրդի մեջ՝ ստեղծելով վիպական վերահիշյալ զուգահեռները։

Այս հարցի գործնական լուսաբանումը մենք գտնում ենք հայ-ադրբեջանական, հայ-քրդական և հայ-վրացական խառն հարևանության պայմաններում հորինված ժողովրդական ստեղծագործություններում։ Հայտնի է, որ գոյություն ունեն և՛ հայկական, և՛ ադրբեջանական, և՛ քրդական, անդամ վրացական այնպիսի խաղիկներ, որոնց երկու տողը հայերեն է, իսկ հետևյալ երկտողը՝ ադրբեջաներեն, քրդերեն կամ վրացերեն։ Այս հանգամանքը պարզ ցույց է տալիս, որ սույն խաղիկներն ստեղծվել են այնպիսի մի միջավայրում, որտեղ հայն ու ադրբեջանցին, հայն ու քուրդը և հայն ու վրացին միմյանց հարազատ են եղել ոչ միայն հասարակական, այլև հոգևոր կյանքում։ Հետևաբար և հայ երգասացը այդ միջավայրի համար հաճախ քրդերեն ու ադրբեջաներեն է հորինել։ Այս երևույթն իր լավագույն արտահայտությունն է գտնում Սալաթ-Նովայի ու մեր աշուղների մոտ, որոնք ստեղծագործել են ոչ միայն հայերի, վրացիների կամ ադրբեջանցիների համար, այլև այն ընդհանուր միջավայրի, որտեղ բոլորն էլ իրար հարազատ են զգացել։ Բանահյուսական հուշարձանների տարածման նույնաման օրինաչափությանն են պատկանում նաև Ս. Հայկունու գրի առած «Ապուղեթ»⁶³ և «Խալանտար»⁶⁴ վիպական գրույցները։

Հետևյալ կերպով ջալալիների ապստամբությանը (17-րդ դ.) արձագանքող այս գրույցների մեջ իրենց վիպական դրսևորումն են գտել այդ կործանարար արշավանքների ամենավայրագ ներկայացուցիչները՝ Ապուղեթ-Աբուսեֆը («Ապուղեթ» վեպում) և Թանզրի-Թանըմազանաստվածը («Խալանտար» վեպում), որոնք ոչ թե բացասական, այլ դրական հատկություններով են օժտվել։ Մի հանգամանք, որ անհարիր է իրողությանը։ Քանի որ, ինչպես հայտնի է, ջալալիների արշավանքներն աղետաբեր են եղել հատկապես հայ ժողովրդի համար։ Այդ մասին բազմաթիվ վկայություններ ենք

⁶¹ Տե՛ս Մ. Արեղյուհ, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Բ, 1946, Երևան, էջ 328։

⁶² Կ. Մելիք-Օհանջանյան, Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահնամիում» ու հայ մատենագրության մեջ, «Ֆիրդուսի», 1934, Երևան, էջ 79։

⁶³ Տե՛ս ԷԱԺ, Բ, էջ 63—72։

⁶⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 73—88։

հանդիպում մեր պատմիչների մոտ և ժամանակակից հիշատակարաններում⁶⁵:

Պատմական այդ դեմքերը, որոնք այդքան շատ տառապանք էին պատճառել հայ ժողովրդին, ինչ խոսք, որ չէին կարող կարճ ժամանակամիջոցում մեր բանահյուսության մեջ դրական հերոսներ դառնալ: Մնում է ենթադրել, որ այդ վիպական զրույցները, թուրքական շրջապատում հորինվելով, ժամանակի ընթացքում որդեգրվել են քրդերի կողմից, որոնց շեխերն ու բեկերը ևս զերծ չեն մնացել նույնանման շահատակություններից: Այս եղանակով, այդ պատումները տարածվել են նաև հայ, թուրք և քուրդ ընդհանուր միջավայրում, որտեղ վերարտադրվել են հիշյալ խմբագրությամբ:

Այդ մասին է վկայում նաև մեր բանահավաքի տված ծանոթագրությունը. «Խալանտաբ ժողովրդական վեպը ասած է Մինաս բաբար: Այս վեպս լսած եմ նաև ի Տրապիզոն հայ աշղներեն թուրքաբարառ պատմելու և երգելու միջոցին, իսկ Մինաս բաբար հայերեն պատմեց և երգերն թուրքերեն երգեց»⁶⁶: Նույնը ասվում է նաև «Ապուզեթ»-ի ասացող Բուլանխա Համզաշխ գյուղացի, նազլ ասող Մնկոյի մասին, որը «դիտե շատ հեթաթներ, ժողովրդական երգեր, մանավանդ քրդական վեպեր ասելու մեջ հուշակավոր է»⁶⁷:

Ս. Հայկունին գրի է առել նաև զուտ քրդական ծագում ունեցող ստեղծագործություններ, որոնց մասին նա գրում է. «Քրդական վեպերն, որք մեծավ մասամբ իրական անցքեր են, շատեր ճշտությամբ կատարված են և անհաշիվ են, որպես մեր հեթաթները: Ահյաբենտո, Դերվիշ Ավտին, Մամեն, Քուլըք ու Կյառոն և այլն, ցույց կտան, ասողներ, թե կատարված բաներ են: Եվ ահա ժողովածուում մեկը մյուսին են հաջորդում իրական պատմական դեպքերի շուրջ հյուսված «Չոմար բեկ»⁶⁸, «Հայդարցի Ալի

աղայի և եզդի Քոք աղայի պատերազմը»⁶⁹, ազգագրական ու կենցաղային ամուր հենք ունեցող «Միրզա ազան թելի Աշան»⁷⁰, «Թոշք Ապրզեթի ժը Ապրզեթան»⁷¹, «Աբաբալաք»⁷² վիպերգերն ու զրույցները և կամ ժողովրդասեր Սամն»⁷³ ու Հեռզեկը»⁷⁴ (համանուն հեթաթներից), որոնք, կյանքում տիրող շարունակվող վերացնելով, փարատում են մարդկանց վիշտն ու կարիքը, ուրախություն ու երջանկություն պարգևում աշխարհին: Ի վերջո՝ հիշատակելի են սիրո ազնիվ ու վսեմ զգացումով ներշնչված Լեյլին ու Մեջլումը»⁷⁵, Ջամալին ու Բինաշվան»⁷⁶, Սիաբենտոն և Խաչեզեկը»⁷⁷, որոնք շղիմանալով կյանքի դժան պայմաններին, խորտակվում են, բայց լավի ու գեղեցկի ժողովրդական պատկերացումն այդ վիպերգերի մեջ, այնուամենայնիվ, մնում է որպես անհասանելի մի բարձունք:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ատելությամբ վերաբերվելով թուրքական կառավարության ձեռքին գործիք դարձած քուրդ բեկերի ու շեխերի անմարդկային գազանություններին, Ս. Հայկունին որպես առաջավոր մտածող, միաժամանակ բարձր է գնահատել աշխատավոր քուրդ ժողովրդի ստեղծագործ կարողությունը:

Ս. Հայկունին ժողովրդագետի զգացողությամբ գիտակցել է հայ և քուրդ ժողովուրդների հոգևոր մերձեցման ու փոխադարձ ներառման յուրահատուկ այդ օրինաչափությունը: Նա իր բանահավաքի համեստ գործունեությամբ աշխատել է կորստից փրկել ժողովրդական այդ գանձերը:

Ս. Հայկունուն է պատկանում նաև «Մոքոս» ժողովրդական վիպերգը հայտնաբերելու և Ջարսանջաքի բարբառով գրի առնելու պատիվը»⁷⁸: Այդ ծավալուն ստեղծագործությունը պատմել է Մինաս Բարաբը:

⁶⁵ Տե՛ս Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, 1891, Վաղարշապատ, էջ 87:

բ) Ագաբեա Սասնեցի, Ողբ (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1936, Վիեննա, էջ 331):

գ) 2. Անուայան, 17-րդ դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, 1961, Երևան, էջ 21—23:

⁶⁶ ԷԱԺ, Բ, էջ 73:

⁶⁷ Նույն տեղում, էջ 63:

⁶⁸ ԷԱԺ, Ե, էջ 126—128:

⁶⁹ Նույն տեղում, էջ 123—126:

⁷⁰ Նույն տեղում, էջ 129—131:

⁷¹ Նույն տեղում, էջ 187—200:

⁷² Նույն տեղում, էջ 111—115:

⁷³ Նույն տեղում, էջ 53—60:

⁷⁴ Նույն տեղում, էջ 60—70:

⁷⁵ Նույն տեղում, էջ 71—75:

⁷⁶ Նույն տեղում, էջ 76—95:

⁷⁷ Նույն տեղում, էջ 168—187:

⁷⁸ Ս. Հայկունի, Մոքոս, 1896, Վաղարշապատ:

Դերսիմից Վաղարշապատ գաղթած բանի-
մաց ժեռունին մանրամասն տեղեկություն-
ներ է հաղորդել նաև իր ծննդավայրի մա-
սին, որի բազմակողմանի նկարագրականը
Ս. Հայկունին լույս է ընծայել առանձին
հոդվածաշարով⁷⁹:

«Մոքոս»-ի մեջ պատմվում է Բաղ թաղա-
վորի մասին: Նա ուզում է իր անվամբ բա-
ղաք հիմնել և մի պառավի խորհրդով մար-
դիկ է ուղարկում Մոքոսին բերելու: Մոքոսը
դալիս և կառուցում է Բաղդատը: Վիպական
այս դեպքերը հիշեցնում են մեր վեպի Բաղ-
դատարին, որը ևս հիմնադրում է այդ նույն
անունը կրող քաղաքը:

Այնուհետև, Մոքոսը կառուցում է Սուրբ
Տիկնոջ և Մանուկ Տղայի օթևան-սրբավայրը,
որն իր ամենակարող և ատենահաս զորու-
թյամբ հիշեցնում է մեր վեպի «Մարութա
Բանձր Աստվածածինը»: Մոքոսը հեռու
վայրերից բերում է նաև պաղ շուր, որն իր
դերբնական հատկություններով առնչվում
է վիպական կաթնաղբյուրին: Ինչպես
տեսնում ենք, «Մոքոս»-ի և «Մասնա
ծուր»-ի զուգահեռները բազմաթիվ են:

Մոքոսը շինարար է և իր գործելակերպով
արդարացնում է իր անունը⁸⁰: Մոքոսի կեր-
պուրը բնութագրվում է նաև մարդասիրու-
թյամբ ու արդարամտությամբ, որոնք բա-
ղաճայտվում են նրա քարոզի մեջ:

Աղքատին մի թարավ կացին, իշխանին՝
մի թարավ,

էան աստված ինձիս աղատեց,
Իշխաններ մի ականջնիդ գոցեցեք, մեկը՝
բացեք,
Հազար տարվա մի ավուր ապրողն էլ
կմեռնի⁸¹,

Եվ ապա շարունակում է.

էաս չլպաղնին հագուցեք, անոթին
կերուցեք,
Հիվանդին տես դացեք, ծարավին ջուր տվեք,
Մանուկ Տղին կանչեցեք, հիտին գցեք,
իրուր սիրեցեք⁸²:

⁷⁹ Ս. Հայկունի, Դերսիմ, «Արարատ», 1896, Վա-
ղարշապատ, էջ 84—86, 133, 134, 183—185, 238—240,
280—282:

⁸⁰ Մոքոս նշանակում է մուրճ (տե՛ս Սա. Մալխա-
յան, Հայերեն բացատրական բառարան, Գ, 1944,
երևան):

⁸¹ Ս. Հայկունի, Մոքոս, էջ 43:

⁸² Նույն տեղում:

Մոքոսն իր այդ խոսքերը կիրառում
է կյանքում. նրան օգնում են Սուրբ Տիկնին
ու Մանուկ Տղան իրենց հրաշագործու-
թյամբ: Ի տես այդ բոլորին հեթանոսները
հավատափոխ են լինում:

Վեպում շինարար ու մարդասեր Մոքոսի
կերպարին հակադրված են «զոռա ու բռնա-
վոր» կռապաշտ թագավորները՝ Փանփուլն
ու Զինաքյարը, որոնք ղավթել են ուրիշ
ժողովուրդների հողն ու ջուրը: Մոքոսը պայ-
քարի է դուրս գալիս նրանց դեմ: Անհա-
վասար այդ կովում նրան զորավիգ են
կանգնում Սուրբ Տիկնին ու Մանուկ Տղան:
Մոքոսի հետ կապված այս և նման հրաշա-
պատում դրվագներն առաջին հայացքից
կրոնական ստեղծագործության տպավո-
րություն են թողնում, բայց միայն արտա-
քուստ:

Վեպի սյուժետային գծի զարգացման
և երանելի Մավկիոսի վկայության⁸³ միջև
մեր կատարած համեմատությունը թույլ
է տալիս ենթադրելու, որ քրիստոնեության
մուտքի հետ կապված ինչ որ Մովկիոս
(Մոքոս-Մոխոս-Մոնախոս=ճգնավոր) նա-
հատակ իր վարքագրությամբ հիմք է դար-
ձել կրոնաշունչ այս վեպին: Այդ հանգա-
մանը նկատի ունենալով «Մոքոս» վեպի
առաջին գնահատող Նիկողայոս Քարամյանն
այն կարծիքն է հայտնել, թե «Մոքոսը ճշմա-
րիտ աստվածապաշտ է և ջնջող կռապաշ-
տություն: Այս երկու հատկություններն
արդեն հարմարվում են Ս. Գրիգոր Լուսա-
վորչին, հայ ժողովուրդը նրան ճանաչում է
ի հնուց անտի իբրե աստվածապաշտ և
ճարտարապետ Ս. Լուսավորիչի տեսիլն, որ
մի հին հիշատակարան է»⁸⁴:

Սակայն պետք է ասել, որ դեպքերի ու
դեմքերի նմանության արտաքին կեղևի տակ
թաքնված են ժողովրդական ստեղծագործու-
թյանը բնորոշ խիստ ուշագրավ երևույթներ:
Նախ՝ նշենք, որ այդ վեպը կապվում է
3-րդ դարի քրիստոնեության մուտքի իրա-
դարձություններին, սակայն հեթանոսության
դեմ մղված այդ պայքարում նահատակներին
մեկի մասին հորինված այդ վարք-հիշատա-

⁸³ Տե՛ս Մկրտիչ Ավգերյան, Լիակատար վարք և
վկայություն սրբոց, հատոր Գ, 1812, Վենետիկ, էջ 164—
179:

⁸⁴ Ն. Քարամյան, Ժողովրդական գրականության
նշխարներ, «Արձագանք», 1895, Թիֆլիս, № 91:

կարանն իր նախնական ձևով չի պահպանվել, այլ ժամանակի ընթացքում, պատմական դեպքերի ազդեցության տակ, զարգացել ու վերափոխվել է իր մեջ ներծծելով նորանոր իրողություններ:

Վեպում սոսկ արտաքին կրոնական երանգավորում ունեցող «հրաշագործ» Մոքոսը, նախ և առաջ, աշխարհիկ կյանքի ու վայելքի բոլոր նյութական բարիքներն ստեղծող ժողովրդական այն վիթխարի ուժն է⁸⁵, որն անցյալում, դարեր շարունակ աշխատել ու տառապել է՝ ծառայելով շահագործող դասակարգին: Պատահական չէ, որ Մոքոսը Բաղթազավորի համար այդքան ծառայություններ մատուցելուց հետո, որպես աշխատավորության ներկայացուցիչ, երկար ժամանակ չի նկատվում նրա կողմից:

Ամփոփելով «Մոքոս»-ի վերաբերյալ մեր ասածը, կարելի է նշել, որ հայ իրականության մեջ գոյություն է ունեցել մի ավանդություն, որի արմատները սնվում են վաղ հնությունից:

Այն աստիճանաբար զարգացել է և ներառել պատմական զանազան իրադարձություններ:

«Մոքոս» վեպը մի շարք զուգահեռներով կապվում է վարքաբանական հիշատակարանների, ինչպես նաև մեր ժողովրդական «Սասնա ծռեր» վեպին:

Ս. Հայկունու գրի առած բանահյուսական նյութերի մեջ առանձին բաժին են կազմում վիպական երգերը⁸⁶, որոնք պատմական այս կամ այն դեպքի շուրջ հորինված ստեղծագործություններ են և ժողովրդական ընդհանուր մտածելակերպի արգասիք լինելով, շատ բանով հարակցվում են միմյանց:

Այդ վիպական երգերից մի քանիսը զրույցի ձևով հանդիպում ենք մեր հին ու միջնադարյան գրականության մեջ, որոնք իրենց հետագա զարգացումն ապրելով՝ ժողովրդի բերանում պահպանվել են երգախառն եղանակով: Այսպես, օրինակ, եթե «Մոկաց Միրզա» վիպերգի համար հիմք է դրվել միջնադարյան պատմական որոշ իրադարձություններ, ապա «Կարոս խաչ» ժողովրդական վիպերգը հրաշագործ հատ-

կություններ ունեցող Կարոս խաչը խորհրդանշում է օտարերկրյա նվաճողների դեմ հայ ժողովրդի ցուցաբերած հերոսական, մարտունակ ոգին:

Միջնադարյան գաղափարախոսության քողով է պատած նաև Ս. Հայկունու գրի առած «Հելեքսիանոս» վիպական երգը:

Սա ամբողջ քրիստոնեական աշխարհում տարածված հայտնի հնագույն վարքն է՝ արքայական ծագում ունեցող Ալեքսիանոս կամավոր աղքատ մարդու մասին:

Սույն վարքաբանությունը քրիստոնյա ժողովուրդներն ունեն ընդարձակ ու համառոտ տարբերակներով: Նույն ձևով հանդիպում ենք նաև հայկական հայամավորքներում⁸⁷: Մի շարք ժողովրդների, այդ թվում նաև հայերի մոտ պահպանվել է հիշյալ վարքի հնուց եկող ժողովրդական չափածո զրույցը՝ վիպական երգի ձևով:

«Ալեքսիանոս» կամ «Հելեքսիանոս» վիպերգի Ս. Հայկունու գրի առած զույգ տարբերակներում պատմվում է Նփրեմ թագավորի ճգնակյաց որդու կյանքը:

Հանդերձյալ կյանքի հավատքով ներշնչված Ալեքսիանոսը հրաժարվում է հոր թագավորությունից և հարսնացուի հետ սպասվող երջանկությունից, զնում է Սովի կղզին՝ անցորդներին հպարտությամբ ասելու.

Անոթցեր իմ, խոզն իմ կերեր,

Մարավցեր իմ, շաղն իմ լիզեր⁸⁸:

Որպեսզի «խալալ սրտով» հոգին ավանդե:

Հելեքսիանոսի մահից հետո, նրա վերադարձին երկար սպասած հարսնացուն հուսահատությունից ինքն էլ է մեռնում: Այստեղ հետաքրքիր է մահվան իմաստավորումը մեկի և մյուսի: Եթե Հելեքսիանոսը, խույս տալով ամեն մի աշխարհիկ վայելքից, չի ենթարկվում «Քոռ դյուշմանին» (այսինքն՝ սատանային) և մեռցնում է իր մեջ մարդկայինը՝ աստիճանաբար մեռցնելով նաև իրեն, ապա նրա հարսնացուն «աշխարհի քեֆը»

⁸⁵ Մոքոս նշանակում է նաև մեծ, խոշոր (տե՛ս Լ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ, 1946, Երևան, էջ 473):

⁸⁶ Տե՛ս էԱԺ, 2, էջ 3—41:

⁸⁷ Մ. Ավգերյան, Իրավաբանական և վկայություններ սրբոց, հատ. Բ, 1813, Վենետիկ, էջ 388, տե՛ս նաև Վարք հարանց և քաղաքավարությունը նոցին ըստ կրկին թարգմանության նախնաց, հատոր, Ա, 1855, Վենետիկ, էջ 138:

⁸⁸ Տե՛ս էԱԺ, 2, էջ 7:

վայելելու պատրաստ Մարգարիտն իր սիրած մարդու մահից հետո անիմաստ է համարում ապրելը և մեռնում է նրա հետ:

Ուշագրավ է այն, որ կրոնա-վարքագրական ծագում ունեցող այս ստեղծագործությունը ժողովրդի բերանում բուրրովին այլ հնչեղություն է ստացել: Այստեղ կյանքի ու նրա վայելքի պահանջն իր նախնական գրսեորմամբ ոչ միայն հարցականի տակ է առնում ճգնակեցությունը, այլև քողարկված արհամարհանք է նկատվում կամավոր կերպով կյանքի բարեքներից հրաժարված Հելեքսիանոսի հասցեին: Քանի որ նա ռականջ չենա ուր ծնողին⁸⁹, իսկ նրա ծնողները, գեղեցիկ Մարգարիտի հետ միասին, խտացնում են աշխարհիկ կյանքն իր հրապույրներով: Ահա թե ինչու կրոնաշունչ բնույթ ունեցող այս վիպերգի ենթատեքստի հիմքում, այնուամենայնիվ, ընկած է ռաշխարքի քեֆը՝ վայելելու գաղափարը: Երկրային կյանքի լավագույն արժեքավորումն ենք գտնում Ս. Հայկունու գրի առած «Կուգուան Ասլան» (Ասլան աղա) վիպերգում, որտեղ հոգու և մարմնի պայքարն իր վերջնական լուծումն է ստանում: Այս ստեղծագործության կենտրոնական դեմքը Ասլանն է:

Նա կխմեր նռան գինին, քեֆ, խոշորեն
կաններ,
Զի գիտե՞ր մեռնել կա մըշ աստնվորիս⁹⁰:

Այստեղ արդեն կյանքի սերը դառնում է մարդկանց հարաբերությունները բնութագրող չափանիշ: Եթե ծնողները չեն անսում որդու թախանձանքներին, ապա սիրած կինը իր կյանքն է զոհում, սերը կյանքով է հատուցում և այգախոսով հաղթում մահվան:

Բացի հիշյալ վիպերգերից, Ս. Հայկունին գրի է առել նաև պատմական բնույթի մի շարք ստեղծագործություններ, որոնք հեքիաթախառն կառուցվածք ունենալով հանդերձ, պատմական որոշակի դեպքերի ու դեմքերի գեղարվեստական արձագանք են:

«Էմինյան ազգագրական ժողովածու»-ի տարբեր հատորները հրատարակության պատրաստելիս Հայկունին, նկատի առնելով այդ զրույցների պատմական յուրօրինակությունը, առանձնացրել է «Հեքիաթներ»

բաժնից: Այդ կարգի ստեղծագործություններից են «Օխան Օծնելին», «Արուզեթ, ռուանի Բեկ» և վերջապես «Խալանտար», «Շիրին շահ և Բահր» զրույցները: Քանի որ դրանցից մի քանիսի մասին արդեն առիթ է եղել խոսելու, այժմ անդրադառնանք մյուսների, որոնցից առանձնապես ուշագրավ է «Օխան Օծնելին»:

8-րդ դարի հայտնի կաթողիկոս Հովհան Գ. Իմաստասեր Օծնեցու հետ կապված որոշ իրողություններ հիմք են դարձել այս զրույցին: Բավական է հիշատակել, որ նա գումարելով Դվինի 7-րդ (720 թ.) և Մանաղկերտի (726 թ.) ժողովները, արաբների օգնությամբ Հայաստանից դուրս է վտարում հույն կրոնավորներին, որոնք դեմ էին հայ եկեղեցուն: Այնուհետև, նա գնում է Օմար Բ. ամիրապետի մոտ, խնդրում է հայոց եկեղեցին ազատել հարկերից և քրիստոնյաներին չհալածել իրենց հավատքի համար: Հստ ժողովրդական ավանդության, Օծնեցին սիրել է փարթամ հագնվելն ու փառահեղ միրուքի վրա ոսկեփողի ցանելը, որն ամիրապետին նույնիսկ զարմացրել է, բայց Օծնեցին նրան ցույց է տվել իր մարմնի վրայից հագած կոշտ քուրձը և ասել. «Խմիկի աչքի համար արտաքին պերճություն, աստծո համար՝ ներքին ճգնություն»⁹¹:

Պատմական այս փաստերի շուրջ հյուսվում է հիշյալ զրույցը: Այնտեղ գեղարվեստական շնչով պատմվում է, թե ինչպես «Ուռումի թագավոր շատ խարսաղցտով, բոլոր հողեր զավթեց, մեր խայու ազգ էն հմալ նեղություն քաշեց էնդոց ձեռ, օր իսկի լիղեր ու տախտակ կծակեն, կընցուցեն խայու վիզ, կելին տախտակի վրեն ու կեր ու խում կենեն»⁹²:

Այնուհետև ժողովուրդը ստեղծում է Օհան Օծնեցու կերպարը. «Մանգկերտու էրկիր առաջնորդ էր, գիշեր ու ցերեկ ուր ազգի հարով ասուն աղոթք կեներ—յա աստված, իմ խայու ազգ Կոստանոս թագավորի ձեռքեն ազատ էնա»: Ընդառաջ գնալով ժողովրդի բողոքներին, «Օխան Օծնեցին ժողվեց բոլոր իշխաններ, խորխուրդ էրավ, տկանց լեշի վերեն խազավ մազեղեն գարգրուն շապիկ,

⁹¹ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ, 1946, Երևան, էջ 553:

⁹² Ս. Հայկունի, Օխան Օծնելի, «Արարատ», 1898, Վաղարշապատ, էջ 412:

⁸⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 5:

⁹⁰ Տե՛ս էԱԺ, 2, էջ 14:

վերև էլա իսագավ սեսուրբ գեստեր... Օխան Օձնելին առավ ուր փոքրավոր, գնաց ի Շամ... Մամադ (արաբների ամիրան—Վ. Ս.) իշկեց մագեղեն շապիկ ու էրկթե գարգաբներ մտեր ա (Օձնելու—Վ. Ս.) մսի մեջ⁹³։ Եվ նա Մամագին ասում է.

«Իմալ օ իմ ջան ըրեռներու մեջ ա, իմ ազգ չորս էս հըմալ նեղութենի մեջ ա. վասն ի աստըծու սիրուն, դու մեկ շարամ էնի»⁹⁴։

Զրույցը վերջանում է նրանով, որ Մամադը հրով ու սրով հասնում է Ստամբուլ, ոչնչացնում է Կոստանոսին առևտմելուց էլա վեց թագավորի խոզ առավ... ամեն էլա մացին թուրքի ձեռաց տակը⁹⁵։

Այստեղից բխում են պատմական ու վիպական բնույթի մի շարք հետևություններ, նախ ուշագրավ է Օհան Օձնելու անվան ժողովրդական ստուգաբանումը «Օխան զազգ թասլիմ էրաց. թուրն օձեց, տվեց Մամագին, էդ ապով Օխան Օձնելի կասեն»⁹⁶։ Այս զրույցում հանդիպում ենք նաև վիպական բնույթի մի այլ միջադեպ, ըստ որի Մամադի հարձակումը Կոստանոս թագավորի վրա հավաստի դարձնելու համար «ասու խրամանքով ձկներ թավի մեղեն թըփ-թըփ թռան խավուզի մեջ»⁹⁷։ Նույնանման հրաշագործություն մենք հանդիպում ենք Նարեկացու մասին հյուսված վիպերգում, ինչպես նաև Բուզանդի նկարագրած ճգնավորների սրբագործություններում։

Վիպական բնույթի նմանություններից բացի «Օխան Օձնելի» այս զրույցն ունի նաև որոշակի պատմական ատաղձ։ Այնտեղ գեղարվեստորեն վերարտադրված են արաբական արշավանքների վայրենի բարբարոսությունը⁹⁸։

Պատմական այս և հետագա դեպքերի հետ է աղերսվում «Հուսեփ Բեկ» զրույցը⁹⁹։ Հուսեփ Բեկը «հայոց ջոջվորութենի վաղթին ինքն էլ մի ջոջվոր էր, ընտրա ձեռն էր մեկ Հարժկեն, մեկ Բերկրի, մեկ էլ Հարճեջ»¹⁰⁰։ Նա մեծամեծ խալան (հարսնագին) տալով

ամուսնանում է արաբ թագավորի աղջկա՝ Զիլակ խանումի հետ։ Այնուհետև պայքարի է դուրս գալիս արաբների վրա հարձակված թշնամիների՝ թուրքմեն Շահ Հագեկերտի, ապա՝ Կոլոտ Բեկի դեմ։ Այդ անհավասար կռվում Հուսեփ Բեկը պարտվում է, կորցնում ոչ միայն իր ընտանիքն ու ունեցվածքը, այլև իր գավառները։ Եվ նա գառն ու դատարկ սկսում է ջրաղացպանությունը՝ զբաղվել։

Երբեմնի պետականությունից ու անկախությունից զրկված հայ ժողովրդի տխուր վիճակը գեղարվեստական հետևյալ վերարտադրությունն է ստացել ժողովրդի բերանում։ Լավագույն ապագայի նկատմամբ հայ ժողովրդի ունեցած հավատքն է աղտահայտված «Հանոն Կանոնա մալ» զրույցավանդության մեջ։ Հեթաթանման սկիզբը պատմում է մուլլի երեցի մասին։ Մուլլայի խելքի շնորհիվ հայտնաբերվում է Հանոն Կանոնա մալը, բայց երեցի անկուշտ աչքը դրանով էլ չի բավարարվում և միայն մի բուռ հողը վերջ է գնում նրա անհագությունը։

Բարոյախոս այս միջադեպն ուրիշ դեպքում կարող էր ավարտ դառնալ, բայց տվյալ զրույցում ունենում է իր հետագա զարգացումը, որտեղ պատմվում է այդ հարստության ավանդական տերերի՝ Հանոն Կանոն եղբայրների մասին, թե իբր «աստվածութեն էնդոնց մալ օսկի դադուց. գրուկ ա՝ էդոնց մալ պտի մնա տեղ, չուրի աշխրհի վերջին նոնաու կալի մեջ պտի բաժվի»¹⁰¹։

Ուշագրավ է այն, որ մեր ժողովուրդը, ինչպես «Սասնա ծռերում», այստեղ ևս լավագույն գալիքի մասին իր ունեցած պատկերացումը կապում է Մհերի ավանդական կերպարի հետ. «Հանոն—Կանոնա մալ Ախլաթ, Ալթուն Թեփեսու տակն ա։ Ախլաթ յոթ թագավոր նստեր ա, յոթ դիր էլա ավերեր ա. էն մեկ Մհերի ավերուկն ա, մկա լե Բաֆր-Կալասի կասեն»¹⁰²։

Ժողովրդական այս կարգի ստեղծագործությունների համար բնորոշ է այն, որ նրանք պատմական իրադարձությունները վերարտադրել են գեղարվեստական հեթաթախառն եղանակով։

⁹³ Ս. Հալիլովի, Օխան Օձնելի, «Արարատ», 1898, Վաղարշապատ, էջ 412—413։

⁹⁴ Նույն տեղում, էջ 414։

⁹⁵ Նույն տեղում։

⁹⁶ Նույն տեղում։

⁹⁷ Նույն տեղում։

⁹⁸ Նույն տեղում։

⁹⁹ Տե՛ս էԱԺ, Բ, էջ 5—62։

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 52։

¹⁰¹ Ս. Հալիլովի, Հանոն Կանոնա մալ, «Արարատ», 1898, Վաղարշապատ, էջ 468։

¹⁰² Նույն տեղում։

Ս. Հայկունու դրի առած նյութերի մեջ սովոր բաժին են կազմում հրաշապատում և իրապատում հեքիաթները¹⁰³։ Այդ ստեղծագործությունների գաղափարական վերլուծությունը մեր նպատակից դուրս համարելով, կաշխատենք համառոտակի տալ նրանց բանադիտական ընդհանուր արժեքը։

Դեռևս իր ժամանակին «էմինյան ազգադրական ժողովածուի» խմբագիր Գր. Խալաթյանցն անդրադառնալով Ս. Հայկունու հավաքած հեքիաթներին, գրել է. «Մինչ այժմ հեքիաթը այնպիսի ընդարձակ ծավալով ներկայացված չէ մեզանում, ինչպես Հայկունու հավաքվածների մեջ»¹⁰⁴։

Այսօր ևս Ս. Հայկունու գրի առած հեքիաթները պատվավոր տեղ են գրավում «Հայ ժողովրդական հեքիաթների» ակադեմիական հրատարակության տարբեր հատորներում։

Հրաշապատում և իրապատում այդ հեքիաթները մի շարք ժողովրդների մոտ տարածված հայտնի մոտիվներ պարունակելով հանդերձ, աչքի են ընկնում նաև հետաքրքիր նորությունով։ Դրանց մեջ հաճախ ենք հանդիպում պատմական զանազան դեպքերի ու դեմքերի վերհուշներ, լինի դա բռնակալ սուլթան Մուրադի կամ այլոց հետ կապված դատանություն, թե հայ ժողովրդի համար ճակատագրական պատուհաս դարձած պանդխտության փաստի արձագանք։

Այդ հեքիաթների մեջ հանդիպում ենք նաև ժողովրդական կենցաղի ու սովորությունները պատկերող դրվագներ. օրինակ՝ եթե անտառից մի երեսից գտած թաղավորը, որդեգրության հետ առնչվող ժողովրդական սովորության իրավունքի ընդունված պահանջները կատարելով, «խոզու տղա» է դարձնում նրան¹⁰⁵ և կամ մի այլ հեքիաթում ականատես ենք դառնում «բեշիկքյարթմայի» և հարսանեկան արարողության մի շարք սովորություններին¹⁰⁶, ապա «Տան դովլաթ» հեքիաթում նկարագրվում է տնային շար ու բարի ոգիների՝ Շվոտի և Դովլաթի հետ կապված ժողովրդական հավատալիքը¹⁰⁷։

Ժողովրդի մեջ տարածված և դարեր շարունակ իրենց գոյությունը հարատևած ազգագրական ու սովորության այս նրբերանգներն, անշուշտ, առկա են եղել մեր ժողովրդական հեքիաթներում, բայց հարցը այդ նյութերը հայտնաբերել և լույս աշխարհ հանելն էր։

Այդ բոլորից զատ՝ Ս. Հայկունու հեքիաթներն ուսումնասիրողին գաղափար են տալիս հեքիաթի ժանրի գոյացության պատմական ընթացքի, հեքիաթային կերպարների աստիճանական զարգացման ու վերափոխման, ինչպես նաև իմաստավորման մի շարք համաժանրների մասին։

Այսպես, օրինակ, եթե բնության ուժերի դեմ անզոր նախամարդու երևակայությունն ընդունակ էր ստեղծելու զանազան դեեր ու վիշապներ, որոնք մե՛րթ այս, մե՛րթ այն զոհամատույցի գնով մարդկանց շնորհում էին բնությունը վերակենդանացնող երկնային հեղեղ կամ արևի ճաճանչ, ապա ավելի ուշ շրջանի իմաստավորում պետք է որոնել երևակայական այն վիշապի կերպարում, որը, գլուխը բարձրացնելով քաղաքի վրա, միայն հաց է ուտում՝ սովի մատնելով բոլորին¹⁰⁸։

Վերահիշյալ մտքի առավել ցայտուն արտահայտությունն ենք գտնում Բալդերդայիշի կերպարում¹⁰⁹։ Պորտաբույծ ու շահագործող խավերի մարմնավորումը հանդիսացող այս գեղարվեստական ընդհանրացումը իր մեջ խտացնում է բնության և հասարակության շար ու կաշկանդիչ ուժերը. «Մեջկապից ցած դայիշ, վերևը իսանաթ» այս տարօրինակ էակը ժամանակի տեսակետից հաջորդելով ջրագող վիշապներին, տերն է դառնում ոչ միայն բնությունը արգասավորող ուժերին, այլև՝ մարդկային արդար վաստակին՝ իր ամբողջ հրեշային ծանրության տակ տրորելով մարդկային արժանապատվությունը։ Բազմաթիվ արկածների հանդիպած, տանջված ու տառապած փոքր թագավորազնի ոտքերից մինչև թևերը փաթաթվելով, Բալդերդայիշը ելնում նստում է նրա վզին, երկար ժամանակ աշխատեցնում, նրա ուտելիքը ինքն ուտում, և երբ տղան հուսահատ

¹⁰³ Տե՛ս էԱԺ, Բ և Դ հատորներ։

¹⁰⁴ էԱԺ, Զ, էջ V։

¹⁰⁵ էԱԺ, Բ, էջ 334։

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 183։

¹⁰⁷ Նույն տեղում, Գ, էջ 327։

¹⁰⁸ էԱԺ, Բ, էջ 382։

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 124։

աա՛խ» է քաշում, նա տիրողի անտարբերությանը պատասխանում է. «Բու խոքին իմ ձեռին ա, դու պտի պրծնե՞ս իմ ձեռից»¹¹⁰։

Կարելի է ենթադրել, որ հրեշտակերպ այս մարդ-մականություն կերպարը մարդկանց երևակայության մեջ ծնունդ է առել դասակարգային անհավասարության պայմաններում՝ գեղարվեստորեն ընդհանրացնելով շահագործող դասակարգն իր մարդակուլ էությունը։

Ս. Հայկունին մեծ աշխատանք է կատարել նաև ժողովրդական առակները հավաքելու ուղղությամբ։ Նրա հրատարակած «Ժողովրդական առակներ, կենդանական վեպեր» գրքով ընդգրկում է ժողովրդից եկած ու նրա լեզվաոճական նրբությունները հարազատորեն պահպանած այն առակները, որոնք նա գրի է առել տարբեր գավառներում։ Առականման ստեղծագործությունների մի ամբողջ ստվար բաժին, որն ընդգրկում է նրա կողմից կատարված գրական փոխադրություններ, մնացել է անտիպ¹¹¹։

Ինչ վերաբերում է «Ժողովրդական առակներ» գրքով զետեղված նյութերին, ապա ինչպես Ս. Հայկունին է խոստովանում, վերջին պահուն դուրս է թողել այն առակները, որոնք նման են եղել պրոֆ. Մառի հրատարակած նյութերին¹¹²։ Բայց, այնուամենայնիվ, այդ գրքով կի մեջ տեղ են գտել բազմաթիվ կենդանական ու այլ բնույթի առակներ, որոնք բարձր գնահատականի են արժանացել Եր. Լալայանի կողմից։ «Ճասնյակ տարիների ընթացքում,—գրել է նա,— ո՛չ մեզ հաջողվեց և ո՛չ էլ ուրիշները հրատարակեցին։ Այժմ պր. Հայկունին որոշյալ շահով լրացնում է այս պակասը, սակայն

սա մի կաթիլ է հայկական հարուստ բանահյուսության մեջ, բայց և այնպես մենք սիրով ողջունում ենք այս գեղեցիկ գործը և կատարյալ հաջողություն ցանկանում»¹¹³։

Ս. Հայկունու համար բնորոշ է այն, որ տարբեր տեղավայրերից նրա գրի առած ժողովրդական այդ առակները ունեն ոչ միայն բարբառագիտական, այլև բանագիտական խոշոր արժեք։ Քանի որ այդ միջոցով նա հում նյութ է մատակարարել բանաստեղծ գրողներին¹¹⁴։

Ս. Հայկունու գրի առած նյութերի մեջ իրենց քանակական բազմազանությամբ առանձնապես աչքի են ընկնում բանահյուսական մանր ժանրերի ստեղծագործությունները։

Բնությունը վերակենդանացնող ուժերի նկատմամբ ժողովրդի երկյուղածության ու պաշտամունքի արտահայտությունն ենք գտնում մի շարք բանադրանքներում։ Այսպես, օրինակ՝ ժողովրդական օրհնանքներում արևը, հողն ու ջուրը դարձել են մարդկային բնավորության լավագույն հատկությունները գնահատող շահանքներ։

Արևդ պայծառ ըլլի։

Կանչընաս, հողով ուրախնաս։

Քարին էրթաս, կանաչ դառնաս։

Մեր բանահավաքին հաջողվել է նաև գրի առնել այնպիսի ինքնատիպ օրհնանքներ, որոնք անմիջականորեն կապվում են պատմական այս կամ այն իրադարձության հետ։ Պանդխտության հետ է աղերսվում մշեցի հոր օրհնանքը ասված «Ստամբուլ էրթցող որդուն»¹¹⁵։

Իր գաղափարական հագեցվածությամբ ուշագրավ է նաև «Գյուղացու կտակը», որտեղ հակիրճ ու սեղմ խոսքերով արտահայտված են բարոյական այնպիսի սկզբունքներ, որոնք սերնդ-սերունդ ավանդվել են.

¹¹³ Եր. Լալայան, Մատենախոսություն, «Աղագրական հանդես», 1907, Թիֆլիս, գիրք 14, էջ 206։

¹¹⁴ Հովհ. Թումանյանը մեծ վարպետությամբ է մշակել Ս. Հայկունու գրի առած ժողովրդական առակները, նրա օրինակին են հետևել նաև Խնկո-Ապերը, Գ. Հայկունին և այլ գրողներ։

¹¹⁵ Տե՛ս էԱԺ, 2, էջ 328։

¹¹⁰ Նույն տեղում, էջ 128։

¹¹¹ Այդ կարգի ստեղծագործությունները Ս. Հայկունին դասակարգել է հետևյալ բաժիններին՝ միամիտներ, ծուր, հնարագետներ, իմաստուններ, մեծախոսներ, պարծենկոտներ և բարոյական այլ վեպիկներ, որոնք մշակելիս նա հետապնդել է դաստիարակչական նպատակներ։

Այդ նյութերի մեծ մասն անհետ կորել է, իսկ մնացածը պահպանվում է Գրականության և արվեստի թանգարանում (տե՛ս Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 538, էջ 51—56, 93—98)։

¹¹² Խոսքը վերաբերում է Ն. Մառի «Сборник притч Вардана», часть 1, 2, 3, СПб., 1899, համեմատական ուսումնասիրության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող այդ առարկաները չեն պահպանվել Ս. Հայկունու արխիվում։

Մեկ ցանկը, հազար վերցնեք:
 Ձեր սեղան փռուկ էղնի:
 Յոթ որդով սեղան նստիք:
 Դուռնան վրո ձեզի շուրախանա:
 Խըլխի մալին դմա՛ շէնեք:
 Իրարու պատիվ պահեք:
 Դուռնան օր դա ձեր տուն, դարտակ մի
 դարձուցեք¹¹⁸ և այլն:

Այստեղ գեղարվեստորեն արտացոլվել են ժողովրդի բարոյական ու սովորութային սկզբունքները: Համակ կենսասիրությանը և մարդասիրությանը են տոգորված այս օրհանգիները: Սակայն դրա հետ մեկտեղ ժողովրդի հոգուն խորթ են հնչել հակահասարակական, ոչ մարդկային արարքի՝ Երբ, որոնք բանադրվել են անեծքների ձևով:

Ս. Հայկունին գրի է առել նաև բազմաթիվ երգումներ, որոնց մասին նա գրել է. «Ամեն մի երկրացի ընդհանրապես իրեն մոտ գտնված ուխտավայրի կամ իր գյուղի և կամ այլ մոտակա գյուղի մեջ գտնված Կրչագիր ավետարանի կամ որևէ հրաշագործ իրի մը վրա կերգվի, որով շատ անգամ երգումներն կտարբերվին, մինչև անգամ գյուղ մը մի այլ գյուղի հետ բաղդատելով»¹¹⁷: Այսպիսով, ամեն մի գավառ իր սիրած երգումներն ունի. օրինակ՝ մի տեղ տարածված է «Սուրբ Կարապետ», ուրիշ տեղ՝ Սուրբ Մատնավանք», «Սուրբ Աղբրիկ», «Խլիճ ավետարան» և այլն:

Ս. Հայկունու գրի առած վիպական ժանրի ժողովրդական ստեղծագործությունների մեջ սովոր բաժին են կազմում նաև ինչպես հայերեն, նույնպես և քրդերեն հանելուկները¹¹⁸, մեծանց խոսքերն ու առած-ասացվածքները¹¹⁹, ասելուկներն¹²⁰ ու շուտասելուկները¹²¹ և վերջապես ծածկանունները¹²²:

Հանելուկները լինելով պատկերավոր հարցադրումներ, գաղափար են տալիս շրջապատի բնության զանազան երևույթների, բուսական ու կենդանական աշխարհի, ինչպես նաև տեղի բնակչության հասարա-

կական կենցաղի մի շարք երևույթների մասին:

Բանահավաքը շուրջ տասնհինգ բարբառներով գրի է առել բազմաթիվ հանելուկներ՝ իրենց զանազան տարբերակներով:

Ժողովրդական բանահյուսության ամենից սեղմ ու պատկերավոր տեսակները՝ առածներն ու ասացվածքները, փնջային ձևով ընթերցողներին մատուցելիս, Ս. Հայկունին կցել է իր հետևյալ բնութագրականը. «Առածները կոկված ու զտված կարճ զրույցներ են. հայ ժողովուրդը ավելի նվիրական դարձնելու համար ամենանց (նախահարց) խոսք» — ով կկնքե, մեջբերելով խոսակցության մի հարմար առած: Հայ ժողովրդյան մեծ մասը առածներով կվերջացնեն. երբեմն ևս այնպիսի փաստացի սուր առած մի կասե, որ հանգեպինը վեճի թելը կկորսնցնե, նույնիսկ, եթե լինեք զարգացյալ ևս: Բավական հոգ տարի առածները այստեղ բացատրությամբ ներկայացնել, սակայն տեսալուրաբանչուր առած բազմակողմանի մըտքեր կպարունակե. ամեն մարդ տարբեր կերպով կըմբռնե, որով առածի բուն ոգին պիտի նսեմանար»¹²³: Այսպիսով, պարզ է դառնում, թե ինչու մեր բանահավաքը ժողովրդական այդ կարգի ստեղծագործություններն ըստ գավառաբարբառների գասակարգելուց հետո, ոչ թե թեմատիկ, այլ՝ այբբենական հաջորդականությամբ է մատուցել:

Ասելուկներն ու շուտասելուկները, Ս. Հայկունու հիշատակությամբ, ժողովրդի մեջ կոչվում են նաև «արարադ» (այսինքն՝ արագ ասել), նրանք կազմված են դժվար աղտասանվող բառերից, որպեսզի ասացողը լրիպի:

Ժողովրդական բանահյուսության ինքնատիպ ժանրերից մեկն է ծածկաբանությունը: Դրանք պայմանական այնպիսի խոսքեր են, որոնք ժողովրդի մեջ «տփոդքերեն» են կոչվում: Այդ մասին քանի որ արդեն առիթ ենք ունեցել խոսելու, միայն նշենք, որ Ս. Հայկունին այն բացառիկ բանահավաքներից է, որին առանձնապես հետաքրքրել է զգրարների, այսինքն՝ «Սասնա ծռեր» վեպի և ընդհանրապես «Նաղա» ասողների ստեղծած «լեզուներ»: Նա ոչ միայն ուսումնասիրել է

¹¹⁸ ԷԱԺ, Զ, էջ 325.

¹¹⁷ Նույն տեղում, էջ 337:

¹¹⁸ ԷԱԺ, Զ, էջ 344—359:

¹¹⁹ Նույն տեղում, էջ 167—296.

¹²⁰ Նույն տեղում, էջ 371—384.

¹²¹ Նույն տեղում, էջ 365—370:

¹²² Նույն տեղում, էջ 360—364:

¹²³ ԷԱԺ, Զ, էջ 167.

այդ գաղտնալեզուն, տալով նրա առանձին բառերի ու նախադասութիւնների բացատրութիւնները, այլև ծավալուն մեջբերումներ է կատարել այդ ինքնատիպ խոսվածքից¹²⁴:

Ժողովրդական բանահյուսութեան վիպական ժանրի ստեղծագործութիւններից բացի, մեծ է Ս. Հայկունու երախտիքը նաև քնարական տեսակի նյութերը գրի առնելու բնագավառում:

Անխոնջ բանահավաքն իր աստանդական դեգերումների ընթացքում մոտիկից շփվել է ժողովրդի հետ, լսել ու գրի է առել նրա հոգեկան աշխարհի և ուրախ, և տխուր ելեջները: Նրա գրի առած նյութերի մեջ առանձին բաժին են կազմում սիրո և վայելքի երգերը, որոնք իրենց մեղմ հուզականութեամբ ու կրքոտ խառնվածքով փառաբանում են սիրո զգացումը, որպես բնութեան կողմից շնորհված մի պարգև: Այստեղից էլ կյանքի հմայքը վայելելու այն բուռն տենչը, որը ժողովրդի բերանում հետևյալ ձևակերպումն է ստանում.

Արի՛, յար, արի՛, խռով մի մնար,
Աստնվորի մալ ձիկ ու քե շմնար¹²⁵:

Խորին խորհուրդ ունեցող այս երկտողում կա և փիլիսոփայական հետևություն. կյանքն այնքան կարճատև է, որ մարդ արածը չի հասցնում այն վայելել:

Պաղչեմ տնկե պիթուն քեաֆուր վարդ,
էլա քաղելու չելավ ձի կսմաթ¹²⁶:

Անհուն թախիծով է հնչում երկու տառապյալ հոգիների անքակտելի միաանութեան հետևյալ պատկերը.

Խավքիկ վեր ծովուն, անուն էր արոր,
Վզիկն էր էրկեն, թևիկը սևավոր,
Սրտիկը վիրավոր. գլուխը կարմրվոր,
Կապեմ բեշարես ելնեմ վեր ծովուն,
էն դեոր կերթա, ես էլ խըտ ինոր,
էն իմ դարտ գինա, կեո, ես էլ ինոր¹²⁷:

Պատահում է նաև, որ սիրող սրտերը չեն կարողանում հասնել իրենց մուրազին, սա-

կայն մարդկայնորեն լավն ու գեղեցիկը հարատևում է բարոյական մաքրութեամբ: Այդ մասին է վկայում սիրահար Զուլոյի երգը.

Ես Զուլուն եմ մաստարեցի,
Քյառսուն տարի քե սիրեցի,
Օրիկմ քյո ծոց չքեցի,
Իմ շեն անուն չավիրեցի¹²⁸:

Ս. Հայկունու բանահավաքական գործունեությանը բնորոշ է այն, որ նա իր գրի առած բանահյուսական նյութի հետ միասին, տվել է նաև յուրաքանչյուր երգատեսակի ստեղծման ու կատարման հակիրճ նկարագրականը: Այդ հանգամանքն ավելի բնական ու անմիջական է դարձնում ժողովրդական նյութի մատուցումը:

Այսպես, օրինակ՝ հարսանեկան երգերի շարքում նա մեջբերելով հարսնառի երգը, նշում է. «Այս երգը երգում են պսակից մի օր առաջ, հարսնացվին յուր ընկերուհիներով տանում են վարպետ կնոջ տունը՝ գլուխը լվանալու Ուստակինը հարսի գլուխը լվանալուց հետո, մազերը մանր-մանր հյուսում է, ընկերուհիները ամեն մի հյուսին մի տուն տխուր եղանակով երգում են և հարսի հետ լաց լինում»¹²⁹:

Թախծոտ այս տրամադրությանը որպես հակադրություն հնչում են հետևյալ կատակերգերը. «Հարսը եկեղեցուց տուն բերելիս, տուն դռան առաջ կանգնած կերգեն».

Թագվորի մեր դյուս էրի,
հե՛յ դյուս էրի,
Քե գլեռիս դմփող եմ պերի,
Թագվորի մեր դյուս էրի,
հե՛յ դյուս էրի,
Քե տախտ ավող եմ պերի,
Թագվորի մեր դյուս էրի,
հե՛յ դյուս էրի,
Քե խարս գրող եմ պերի¹³⁰:

Այնուհետև զանազան տարբերակներով մեջ է բերվում «հարսի և փեսի գովքը»: Եթե հարսն իր արտաքին գեղեցկությամբ համեմատվում է բնութեան բարիքների՝ ցորենի հասկի, վարդ-մանուշակի հետ, որոնք խորհրդանշում են բերքատվությունն ու արգասավորությունը, ապա թագ-

¹²⁴ Նույն տեղում, էջ 360—364:

¹²⁵ Նույն տեղում, էջ 45:

¹²⁶ Նույն տեղում:

¹²⁷ Նույն տեղում:

¹²⁸ Նույն տեղում, էջ 55:

¹²⁹ Նույն տեղում, էջ 38:

¹³⁰ Նույն տեղում, էջ 39:

վոր-փեսի տոնական ուժը հավիտենական դարձնելու նպատակով, զորավիգ են կանչվում հեռու և մոտ ուխտավայրերը.

Թագվոր բարով, հազար բարով,
Դու վարդ ես կանաչ տերևով,
Սուրբ էջմիածին, զարեգ օրհնե,
Մեկ աստըծու զորութենով:
Թագվոր բարով, հազար բարով,
Դու վարդ ես կանաչ տերևով,
Սուրբ Կարապետ զարեգ օրհնե.
Մեկ աստըծու զորութենով... և այլ¹³¹:

Հավատալիքային բնույթի նրբերանգններից բացի, հանդիպում ենք նաև ազգագրական-սովորութային ուրվագծերու Ահա հարսանիքի համար պահանջվող հարսնագնի ամբողջ արարողության գեղարվեստական վերարտադրությունը.

— Խնամի ջան, խնամի',
— Մաղ մի օսկի ա'ռ բարբշի, ա'ռ բարբշի,
ա'ռ բարբշի.
— Չե'մ բարբշի, չե'մ բարբշի, չե'մ բարբշի.
— Թավլա մի գոմեջ ա'ռ բարբշի, ա'ռ
բարբշի.
— Չե'մ բարբշի, չե'մ բարբշի, չե'մ բարբշի.
— Դոմ մի ոչխար ա'ռ բարբշի, ա'ռ բարբշի,
ա'ռ բարբշի.
— Չե'մ բարբշի, չե'մ բարբշի, չե'մ
բարբշի¹³²,

Հարսանական երգերում իր արտացոլումն է գտել նաև անցյալում հայ կնոջ ստրկական վիճակը. նա զրկված է եղել նույնիսկ իր անձնական թախտը տնօրինելու տարրական իրավունքից.

— Քյա', սե, սեավոր աղջիկ,
Քե կուտամ Վանա խոճին:
— Քյա', սե, սեավոր մարե,
Հորի' եմ տուն դու կավիրես,
Եմ կտրիճ եմ ձեռնեն կխլես¹³³,

Եթե ժողովրդական երգում աղջիկը համարձակ կերպով խաղաղար Վանա խոճա ղուրբան կանի՝ իր Սախոյին, բայց չի ենթարկվի ծնողքի փառամոլությանը, ապա կյանքում հարսնացած կինը զոհ է դառնում

տիրող կարգերի և ընդունված «ազաթի» դաժան բռնադատությանը. Այդ իմաստով էլ ողբերգական է հնչում.

Խարս արե վեր քյու թախտեն,
Գյանգատ մ'աներ քյու թախտեն¹³⁴,

Ահա թե ինչու անցյալում աղջկա ամուսնությունը հավասար է եղել խարիպ, խուրպաթ կորչելու-ն, դրա համար էլ հարսին տնից դուրս բերելիս՝ երգվել է.

Շեմի'կ, սի դնդա, դնգալու ես եմ.
Խարիպ խուրպաթ կորելու ես եմ.
Աղջի մի լա, լալելու ես եմ,
Խարիպ խուրպաթ կորելու ես եմ¹³⁵,

Այս գաղափարի հետ է առնչվում հարսնացած կնոջն «էլօղլի» (օտարի զավակ) համարելը. Քանի որ նա մի հարազատ անկյուն անգամ չի ունեցել իր ամուսնու տան մեջ.

Զարչին ա ծախում քյաթան,
Աղջկան չկա վաթան¹³⁶,

Հայ կնոջ վիճակն անցյալում անհամեմատ ավելի ծանր է եղել, երբ օտար հրոսակախմբերը հարձակվել, թալանել ու ավերել են հայկական շենքերը, հայ աղջիկներին ու կանանց փախցրել, առևանգել ու օտարացրել են: Ժողովրդական երգերում նաև պատմական այդ իրադարձությունների արձագանքներն ենք գտնում.

— Քավոր Ավտալ, հարս տարան,
Զգինամ դո'րվի տարան,
Զիթխցի դոնով տարան,
Զիթխաց առավ ճուլըռոն,
Քավոր առավ գոմոուն¹³⁷,

Հայ ժողովրդի նկատմամբ ցուցաբերված քաղաքական բռնության գեղարվեստական նկարագիրն է առկա հետևյալ ստեղծագործության մեջ.

Ընթերցվածս Հորա,
Էրկու մարդ էկան Կորա,
Զեռ ուրանց մեկ-մեկ զորա,
Վիր ղըարկին կէնին թոպու,

¹³¹ Նույն տեղում, էջ 33:

¹³² Տե'ս էԱԺ, Զ, էջ 46:

¹³³ Նույն տեղում, էջ 53:

¹³⁴ Նույն տեղում, էջ 36:

¹³⁵ Նույն տեղում:

¹³⁶ Նույն տեղում, էջ 38:

¹³⁷ Նույն տեղում, էջ 371:

Մեկն էր բորիկ, մեկ՝ գլխաբաց,
Նան'հ-Նան'հ, կտոր մի հաց,
Մեկ պլստաց, մեկ՝ գնաց,
Ընթերցվածս Հելից,
էրկու մարդ էկան Գեալից,
Մեծեցին զոես, հանեցին գեղից,
Ընթերցվածս առակած,
էրկու մարդ էկան Մոկաց,
Մեկի բերանն էր բաց,
Մեկին կորեկ էր քսպած¹³⁸,

«Զմրուկ պառավն ուր մեկ ու ճար տղան»
ստեղծագործության մեջ հարց ու պա-
տասխանի եղանակով պատմվում է ավարի
ու ավերի ենթարկված հայ ժողովրդի տխուր
վիճակի մասին.

— Այ որդի, գարուն է,
Աստված խըտ բարուն է.
Ըս տարին արուն է,
Իմալ էնինք, իմալ¹³⁹,

Մոր և որդու երկախոսության բացա-
հայտվում է դեպքերի հետագա ընթացքը.

Մամո քրդեր հմալ ին,
Պտի մարսի՞ն կերածնին,
Հոր ե՞ր մեր հոգին հանին,
Մեր ունեցած տանին¹⁴⁰,

Այս ստեղծագործությունը տրամաբանա-
կան ներքին զարգացում ապրելով, կասկածի
տակ է առնում «աղոթքն ու սուրբ նշխարքը»,
որոնք ոչնչով չեն բարվոքում նրանց վիճակը.

— Լաո՛ աղոթք էղնի,
Յորեն բան կցանվի.
էրկիր լծեք շընկնի,
Մեր սուրբ ժամ կաղոթինք,
Չեղավ բահով կցանինք,
Հելպեթ դամաթ մի կբաղինք,
Մեր ճժեր կպահինք¹⁴¹,

Ամեն ինչից հույսը կտրած հայ գեղջուկն ի
վերջո ապավինում է իր շարքաշ ու քրտնա-
ջան աշխատանքին, որի շնորհիվ, ինչպես
միշտ, կյանքի այդպիսի ժանր պայման-

ներում անգամ, պահպանելու էր իր գոյու-
թյունը:

Ազատատենչ հայ ժողովուրդը լռությամբ
չի համակերպվել իր տխուր վիճակին, նա
զենքը ձեռքին պայքարել է. փույթ չէ, որ
շատ զոհեր էլ է տվել.

Քամին էկավ էրան-էրուն,
Մշո քաջեր սեավորան,
Տարան կիտան թոփի բերան,
Անո՛ւշ, անո՛ւշ, անո՛ւշ ջան¹⁴²,

Երգի այս նախաբանն արդեն տրամադրում
է ընկալելու հետագա բովանդակությունը,
որտեղ մեկ առ մեկ հանդես են գալիս ան-
հատ անձնավորություններ, եթե

Իսակի ոտներն ու ձեռները քալամջեցին
Դեպի Պոլիս հըղրկեցին¹⁴³,

կամ՝

Միխանաջի Արշակը շարեն կտրած,
Սարերը փախավ՝ դաշաղ դարձավ¹⁴⁴,

Այս երրորդը «Տաժա նոր հարսը տանը
թողած» գնում է «Իստամբուլ պանդուխտ»
փող վաստակելու: Այս կարգի ստեղծագոր-
ծությունների մեջ պետք է տեսնել իրական
կյանքի հասարակական-տնտեսական հարա-
բերությունների արձագանքները:

Այս նյութերի բանագիտական արժեքը
երկրային է, քանի որ անհատ հորինողի
կնիքը նշանակալի չափով զգացվում է: Մի
հանգամանք, որը մեզ հնարավորություն է
տալիս անհրաժեշտ հետևություններ կա-
տարելու.

Նախ՝ Հայկունի-բանահավաքի համար
բնորոշ է, որ առանց ընտրության է գրի
առել հանդիպած ժողովրդական նյութերը:
Նա նպատակ է ունեցել ընդհանրապես
դրանք փրկել վերահաս կորստից և հում
նյութ մատակարարել հետագա բանասեր-
ներին, որոնք և վճռելու են դրանց զուտ
ժողովրդական բնույթը:

Բացի այդ, ժամանակի հասարակական
առաջավոր մտքերով տարված բանահավա-
քին, առանձնապես ոգևորել են վերոհիշյալ
ստեղծագործությունների մեջ արտա-

¹³⁸ Նույն տեղում:

¹³⁹ Ս. Հայկունի, Զմրուկ պառավն ուր մեկուճար
տղան, «Արարատ», Վաղարշապատ, 1896, էջ 320:

¹⁴⁰ Նույն տեղում:

¹⁴¹ Նույն տեղում:

¹⁴² Նույն տեղում:

¹⁴³ Նույն տեղում:

¹⁴⁴ Նույն տեղում:

հայտնված դադարները, որոնք համահնչուն են եղել իր ժամանակի ոգուն:

Ժողովրդական կատակերգերը հորինված լինելով առօրյա կենցաղի հողմվոյթով, միաժամանակ ունեն նաև հասարակական սուր կողմնորոշում: Զավեշտական այդ երգերում ծաղր ու ծանակի են ենթարկված ոչ միայն մարդկանց հոգի արարքները, որոնց մասին արդեն խոսվեց, այլև աղբյուրին շահագործողների՝ գյուղի ռեսսերի ու վարդապետների, անհոգի վերաբերմունքը: Այդ առումով էլ խիստ բնութագրական է.

— Բետ դիզան, բետ-բետ դիզան, տեսն'ք էն ո՞րն ա.

— Բետ գիզան, բետ-բետ գիզան, էն դեղի տեսն ա.

— Խարխուններ խրխուղին՝ տեսնք էն ո՞րն ա.

— Խարխուններ խրխուղին վարդապետներն ա.

— Շուն էկավ պարկն ի բերան, տեսնք էն ո՞րն ա.

— Շուն էկավ պարկն ի բերան, դեղի դղիրն ա՛ն՝¹⁴⁵

Այսպիսով՝ ժողովրդի անհուն ատելությունը շահագործողների նկատմամբ հնչել է մե՛րթ որպես ծաղր, մե՛րթ որպես բողոք և մե՛րթ որպես աղեկտուր հառաչանք.

Հեվար, ա հեվար, արեն ա դարձեր,

Մեր խայոց ազգին մեկ աստված մացեր՝¹⁴⁶

Սակայն այստեղ առկա է նաև անշեղ հավատք լավադույն գալիքի նկատմամբ: Այդ է վկայում հիշյալ երկտողի մեջ, ժամանակավորապես «խայոց ազգից» երես թեքած արևի մոռյալ պատկերը, որն իր մեջ է ներսռում նաև վաղվա հնարավոր արևածագի կենսահաստատ գաղափարը:

Մեծ է Ս. Հայկունու երախտիքը հայ և քուրդ ժողովուրդների բանավոր ստեղծագործությունը հավաքելու գործում: Հայաստանի

(արևմտյան և արևելյան հատվածների) տարբեր գավառներում կատարած իր երկարամյա շրջագայությունների ընթացքում, նա գրի է առել ժողովրդական բանահյուսության գրեթե բոլոր ժանրերից նմուշներ:

ա) Վեպ՝ «Սասնա ծռերի» մի շարք պատումներ (Մոկաց, Արարատյան, Շատախի. Խլաթի), նաև «Շիրին շահ և Բարակ շահ», «Մոքոս» վեպերը:

բ) Վիպերգեր՝ աշխարհիկ ու հրգեոր բնույթի («Հալեքսիանոս», «Կարոս խաչ», «Կակուան աղա», ինչպես նաև մի շարք քրդական ստեղծագործություններ):

գ) Պատմական զրույցներ, որոնք սկզբնապես եղել են վիպական հուշարձաններ, բայց հետագայում հեքիաթ են դարձել թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ («Ապուղեթ», «Խալանտար»):

դ) Հեքիաթներ՝ հրաշապատում և իրապատում:

ե) Ավանդական զրույցներ («Օխան Օծնելի», «Հուսեփ բեկ»):

զ) Առակներ, կենդանական վեպ:

է) Վիպական փոքրածավալ տեսակներ՝ (առած ասացվածք, երդում, օրհանք, անեծք, աղոթք, ծածկախոսություն) և այլն:

Ս. Հայկունին, որպես իր ժամանակի առաջավոր մտածող, հասարակական-քաղաքական տեսանկյունից է դիտել հայ ժողովրդի հոգևոր հարստությունը: Նա բանահյուսական նյութը գրի է առել ամենայն բարեխղճությամբ՝ առանձին խնամքով պահպանելով բանասաղների ժողովրդական խոսքի անաղարտությունը: Ժողովրդի մարդը ներքին զգացողությամբ ըմբռնել է ժողովրդական բանահյուսության կարևորությունը, ինչպես նաև այդ կարգի նյութերը գրի առնելու և հրատարակելու գիտական հիմունքները: Ս. Հայկունին իր երկարամյա փորձառության ընթացքում մշակել է գրառման ուրույն սկզբունքներ, որոնք իրենց արժեքավորությամբ ուսանելի են նաև մեր օրերում:

¹⁴⁵ ԷԱԺ, Զ, էջ 34—35:

¹⁴⁶ Նույն տեղում, էջ 57:

Ս. ՀԱՏԿՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ա) Տպագրված էջեր

- Բղթակցություն—Արարատ, Կ. Պոլիս, 1876, հոկտեմբերի 24-ին (անստորագիր):
- Նամակ ի Վաղարշապատ—«Մասիս», Կ. Պոլիս, 1879, № 2479, 2481, 2482, 2484:
- Բագրևանդ (աշխարհագրական)—«Երկրագունդ», Կ. Պոլիս, 1885, № 5, էջ 210—214:
- Ապուղեթա գյուղն ու բերդը—«Երկրագունդ», Կ. Պոլիս, 1885, № 8, էջ 371—373:
- Տրապիզոնի Ջեֆանոս հայ գյուղի սովորությունները, «Արարատ», Վաղարշապատ, 1892, էջ 423—443:
- Բաղրևանդ—«Արարատ», Վաղարշապատ, 1894, էջ 207—212, 240—246, 278—282:
- Ալաշկերտի հայ ժողովրդական առածներ, «Արարատ», Վաղարշապատ, 1894, էջ 200, 263—264:
- Առածներ Վանա բարբառով, «Արարատ», 1895, Վաղարշապատ, էջ 16, 123, 161—162:
- Հուլիսիկ և Սամել Հովիկ, «Արարատ», Վաղարշապատ, 1895, № 9, էջ 354, 361:
- Եվոտ և Դովվաթ, «Արարատ», Վաղարշապատ, 1895, էջ 210—213:
- Հայ Գասպարը, «Արարատ», Վաղարշապատ, 1895, էջ 397—400: Նույնը արտատպված, «Արևիկ», Կ. Պոլիս, 1895, էջ 3560, 3561, 3562, 3563:
- Առածներ Տրապիզոնի հայ գյուղացվոց բարբառով, «Արարատ», Վաղարշապատ, 1895, էջ 54, 293:
- Հանելուկներ Տրապիզոնի, «Արարատ», Վաղարշապատ, 1895, էջ 83—84:
- Կորած ու մոռացված հայեր (Տրապիզոնի հայ-մահմեդական գյուղերն ու նրանց ավանդությունները), «Արարատ», Վաղարշապատ, 1895, էջ 238—243, 293—297:
- Դերսիմ, «Արարատ», Վաղարշապատ, 1896, էջ 84—86, 133—134, 183—185, 238—240, 280—282:
- Պարսկահայք, «Արարատ», Վաղարշապատ, 1896, էջ 587:
- Ջմրութ պառավն ու մեկ ու ճար տղան, «Արարատ», Վաղարշապատ, 1896, էջ 320:
- Ժողովրդական գրականության բեկորներ, «Արարատ», Վաղարշապատ, 1896, էջ 556—560:
- Սասունցի Դավիթ (Խլաթի բարբառով), «Արարատ», Վաղարշապատ, 1898, էջ 520—525:
- Օխան Օծնելի, «Արարատ», Վաղարշապատ, 1898, էջ 410—414:
- Հանոն Կանոնա մայ, մուլեն ու երեցը, «Արարատ», Վաղարշապատ, 1898, էջ 466—468:
- Սասունցի Դավիթ, «Արարատ», Վաղարշապատ, 1898, էջ 520—525:
- Բաղավոր Լուսիկ և Սետև Հովիկ, Վաղարշապատ, 1900:
- Բարակ շահ և Անուշ շահ, «Արարատ», Վաղարշապատ, 1901, էջ 375—382:
- Տրապիզոնի հայ գյուղացու կյանքը, «Արարատ», Վաղարշապատ, 1905, էջ 737—746, 934—943, 1034—1041, 1906, էջ 180—189:
- Բագրևանդ (Ջրաբաշխ գավառ), Վաղարշապատ, 1894:
- Հուլիսիկ և Սամել Հովիկ, Վաղարշապատ, 1895:
- Մոքո (ժողովրդական վեպ Զարսանճաքի բարբառով, պատմեց Մինաս Բաբար), Վաղարշապատ, 1896:
- Բաղավոր Լուսիկ և Սետև Հովիկ, Վաղարշապատ, 1900:
- Բարակ շահ և Անուշ շահ, Վաղարշապատ, 1901:
- Հուլիսիկի ազգատոհմ և տարօրինակ ավաղակ Արթինիմ Տրապիզոնի հայ գյուղերու մեջ 1795—1840 թթ., Վաղարշապատ, 1905:
- Ժողովրդական վեպ և հեքիաթ, «Էմինյան ազգագրական ժողովածու», հատոր Բ, Մոսկվա—Վաղարշապատ, 1901:
- Ժողովրդական վեպ և հեքիաթ, «Էմինյան ազգագրական ժողովածու», հատոր Դ, Մոսկվա—Վաղարշապատ, 1902:
- Հայ-քրդական վեպ (քրդական եղանակները ձայնագրեց Կոմիտաս վարդապետ), «Էմինյան ազգագրական ժողովածու», հատոր Ե, Մոսկվա—Վաղարշապատ, 1904:
- Ժողովրդական երգ, առած, ասած, հանելուկ, երգում, օրհներգ, անեծք և այլն, «Էմինյան ազգագրական ժողովածու», հատոր Զ, Մոսկվա—Վաղարշապատ, 1906:
- Ժողովրդական առակներ, Վաղարշապատ, 1907:

բ) Անտիպ էջեր

- Նյութեր ժամանակակից հայերի սովորության իրավունքի, Հայաստանի պատմության պետական թանգարան, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. 1:
- Բառարան, Գրականության և արվեստի թանգարան, Ս. Հայկունու ֆոնդ (այսուհետև կնշվի՝ ԳԱԹ, ՍՀ), վավ. 1:

Հարսանիք (սովորություն Ալաշկերտի հայ ժողովրդյան հարսանյաց), ԳԱԲ, ՍԶ, վավ. 2:

Հայ գյուղացու հարսանիքը, ԳԱԲ, ՍԶ, վավ. 6:

Գյուղացին անտառի մեջ (սովորություն), ԳԱԲ, ՍԶ, վավ. 58:

Հայ գյուղացու անասնապահությունը (սովորություն), ԳԱԲ, ՍԶ, վավ. 59:

Գյուղացու հավը (սովորություն), ԳԱԲ, ՍԶ, վավ. 60:

Տրապիզոնի սովորությունների մասին, ԳԱԲ, ՍԶ, վավ. 75:

Բաղրեանդի գյուղացին շատ խոնարհ (սովորություններ), ԳԱԲ, ՍԶ, վավ. 74:

Գյուղացու դատիկը (սովորություններ), ԳԱԲ, ՍԶ, վավ. 63:

Ալաշկերտի մեծ դերդաստանի մը շարունակությունը, ԳԱԲ, ՍԶ, վավ. 72:

Ալաշկերտի գաղթականությունը, ԳԱԲ, ՍԶ, վավ. 78:

Բաղրեանդի ղյուղերի մասին տեղեկություններ (նըշումներ, քարտեզներ, ցուցակներ), ԳԱԲ, ՍԶ, վավ. 80:

Խաստուր գյուղի մասին տեղեկություններ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 76:

Համշենի մասին տեղեկություններ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 77:

Դերշանի շրջանի մասին տեղեկություններ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 71:

Թալինի վիճակը (Կյուղու, Բուղաթլու, Մաստարա և Ղոմլու գյուղերի մասին տեղեկություններ), ԳԱԲ, ՍԶ, վավ. 70:

Ադիլաման գյուղի մասին տեղեկություններ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 69:

Գարալու գյուղի մասին տեղեկություններ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 68:

Արծկեի վիճակը (տեղեկություններ), ԳԱԲ, ՍԶ, վավ. 81:

Գյուղերի անուններ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 224:

Ենկիշարին գյուղի մասին տեղեկություններ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 82:

Ալաշկերտի գյուղերի անունների մասին տվյալներ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 79:

Սնոտիապաշտություններ և հավատալիքներ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 3, 79, 214:

Վաղարշապատի ժողովրդի հետամնացության մասին, ԳԱԲ, ՍԶ, վավ. 83:

Ալաշկերտի միացյալ ընկերության ուժերով դպրոց հիմնելու մասին, ԳԱԲ, ՍԶ, վավ. 196:

Մտկուի ս. Թադևոս Առաքելոց վանքի Սիրաբա դրոի

առաջաբանը. և Թարգմանությունը, ԳԱԲ, ՍԶ, վավ. 200:

Ս. Թադևոս վանքի ձեռագիր ավետարաններ և չրքերի նկարագրություններ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 201:

Հիշատակարան գրոցս ի ստացողէ ստորին ի Դավթէ նվաստ տիրացուն մայրաքաղաքն Եվդոկիո որ է Թոխաթ կոչեցելվո, ԳԱԲ, ՍԶ, վավ. 202:

Ս. Թադևոս վանքը, ԳԱԲ, ՍԶ, վավ. 203—204:

Քաղվածքները ս. Վահանա Գողթնացույ վերնագիրն և «Կաֆայ սր Վահանայ գողթնացույն, գահ ինչ ասեմ ես քեզ Կաֆայ», ԳԱԲ, ՍԶ, վավ. 205:

Քաղվածքներ պատմիչներից, ԳԱԲ, ՍԶ, վավ. 207:

Իր և այլոց նամակներ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 112—174:

Ջանազան պատառիկներ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 208—237:

Հայատառ քրդերեն և թուրքերեն զանազան դարձվածքներ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 215:

Նշումներ քրդերի, թուրքերի մասին, ԳԱԲ, ՍԶ, վավ. 222:

Ժողովրդական հեթաթներ, առակներ, զրույցներ, երգեր, խաղիկներ, առած-ասացվածքներ, հանելուկներ Մշո բանահյուսությունից, ԳԱԲ, ՍԶ, վավ. 5:

Ժողովրդական հանելուկներ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 84:

Ժողովրդական անեծքներ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 208:

Ջրույցներ, առակներ ու ավանդություններ (հայերեն ու քրդերեն), ԳԱԲ, ՍԶ, վավ. 10—39, 40—57, 206:

Անտակ սուտեր, ԳԱԲ, ՍԶ, վավ. 9:

Ժողովրդական առակներ (միամիտներ), ԳԱԲ, ՍԶ, վավ. 8:

Ժողովրդական առակներ (իմաստուններ), ԳԱԲ, ՍԶ, վավ. 4:

Աշուղական երգեր, ԳԱԲ, ՍԶ, վավ. 85—100:

Ինքնակենսագրական տվյալներ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 107—111:

ԱՐՈՒՍՅԱԿ ՀԱՅԿՈՒՆԻ (անտիպ էյուրեք)

Կտրված ծաղիկը, ԳԱԲ, ՍԶ, վավ. 184:

Կուլար գյուղի հավատալիքներ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 64:

Բաբերդի հավատալիքներ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 65:

Քղվա հավատալիքներ ու սովորություններ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 66, 67:

Ղոմլու գյուղի հավատալիքներ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 61:

Կանացի սնոտիապաշտություններ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 62:

Ժողովրդական ծիսակատարություններ, ԳԱԲ, ՍԶ, վավ. 101—106:

В. Г. СВАЗЯНИ

САРКИС АЙКУНИ

(Жизнь и деятельность)

РЕЗЮМЕ

В истории армянской фольклористики почетное и заслуженное место принадлежит замечательному этнографу, неустанному собирателю фольклора Саркису Айкуну. Начало его деятельности совпало с периодом национально-освободительного движения 60-х годов XIX века и сформировалось под сильным влиянием демократических идей своего времени.

Выходец из народа, прошедший через все его страдания и мучения, С. Айкун стихийно, внутренним чутьем постиг необходимость систематического сбора и записи быстро исчезающего фольклора, актуальность исследования веками сложившегося быта народа и его духовного творчества. Следуя примеру великого армянского просветителя Хачатура Абовяна и крупного собирателя и знатока армянского фольклора Гарегина Сrvандзтянца, С. Айкун в течение всей своей жизни в отдаленных захолустных деревнях параллельно с педагогической деятельностью систематически собирал и записывал в большом количестве разнообразные материалы по географии Армении, этнографии и фольклору родного народа.

Начав свою общественную деятельность в период оживления национально-освободительного движения 60—70-х годов XIX в., С. Айкун устанавливает тесные связи с выдающимися деятелями,

которые сыграли видную роль в событиях, имевших место в исторической жизни армянского народа начиная с Зейтунского восстания (1862) по дни правления кровавого султана Абдул-Гампада.

Саркис Айкун (Саркис Казарян) родился в 1838 г. в селе Зефанос Трапезундского вилайета в бедной крестьянской семье. С раннего детства, оставшись сиротой, он вынужден был батрачить у богатых односельчан, а затем, перебравшись в Трапезунд и закончив там бессистемную учебу при библиотеке Хореняна, он разворачивает педагогическую деятельность в деревне Шапа, затем в Трапезунде, Ване и Ардване.

На протяжении всей своей педагогической деятельности С. Айкун являлся свидетелем угнетенного положения армянского крестьянства. Он опубликовал ряд анонимных статей, в которых описал насилия турецких и курдских пашей, баев и шейхов. За опубликованные корреспонденции С. Айкун подвергся преследованиям турецких властей и был осужден к длительному тюремному заключению.

Вскоре в жизни С. Айкуна наступил новый период, который совпал с событиями русско-турецкой войны (1877—1878) и связанными с ней национально-освободительными идеями. По поручению созданного в 1879 г. в Константинополе

«Общества любителей школы». С. Айкуни направился в качестве старшего преподавателя в Алашкерт. Здесь он принимал участие в работе комиссии по оказанию помощи голодающим. С. Айкуни писал корреспонденции в периодическую печать, как очевидец подробно описывая бедственное положение народа.

Из-за непрекращающихся преследований турецких властей С. Айкуни, предварительно спрятав свои многочисленные рукописи, вынужден был перейти русскую границу и поселиться в Восточной Армении. В 1893 г. после долгих скитаний он обосновался в Вагаршапате и в качестве репетитора работал в подготовительном отделении духовной семинарии Геворгиян, затем был переведен корректором в редакцию журнала «Арагат».

На семидесятом году жизни, в 1908 г., скончался этот неустанный самозабвенный труженик, обессмертивший себя многотомными сборниками собранных им материалов устного народного творчества, равно как и ценными трудами по этнографии ряда районов Западной Армении.

Где бы ни был С. Айкуни, во время своих бесконечных странствий он изучал быт народа, с присущей ему исключительной интуицией воспринимал то особенное и специфическое, что было характерно для данной местности, и пером художника описывал увиденное и услышанное, начиная с Трапезунда до последней поездки его по районам Восточной Армении.

На основе собранных материалов он воспроизвел географическую среду армян и других народов, их экономическую, политическую и духовную жизнь. В своих исследованиях «Обычаи и диалект армянских деревень Зефанос и Кромила», «Жизнь армянского крестьянства, Трапезунда» (1892) он подробно описал быт народа. Наиболее полно и многосторонне представил Трапезунд и окрестные деревни в книге «Фамильный род Усепа и странный разбойник Абрийом в армянских деревнях Трапезунда в 1795—

1840 гг.» (Вагаршапат, 1905). В этом труде в художественной форме воспроизведено бедственное экономическое и духовное положение армян, насильно обращенных в ислам. Считая неприемлемым существующее до сих пор мнение об Абрийоме как о «человеке-звере», в работе показано, что Абрийом — народный герой, который ведет ожесточенную борьбу за освобождение своих соотечественников.

С. Айкуни, объезжая армянские деревни и поселения Алашкертского района, детально изучал жизнь народа, его думы и надежды, собрал ценный материал устного творчества населения и опубликовал солидное исследование «Багреванд — водораздельный район» (Вагаршапат, 1894). Описаниями гнета, насилий и грабежа со стороны турецких властей, янычаров и бексов он дает ясное представление о тяжелой политической, экономической и духовной жизни армян Багреванда. Как очевидец, С. Айкуни считал необходимым подробно описать и зафиксировать исчезающий быт и обычаи народа, его ремесла и занятия, словом, все то, что создано народом веками.

С. Айкуни детально изучил занятия армянского крестьянина, повседневные семейные и хозяйственные заботы, различные отрасли животноводства, а в монографии «Гутан» («Плуг») детально описал все работы, связанные с обработкой земли.

Все этнографические исследования С. Айкуни сделаны с учетом условий конкретной местности и определенного времени. Основные вопросы общественно-политической и правовой жизни он позднее подробно изложил в своей большой работе «Материалы о праве и обычаях (обычное право) армян Багреванда».

С. Айкуни принадлежит также объемистый и очень ценный труд — толковый диалектологический словарь, содержащий около 10 тысяч слов и выражений, составленный им в течение многих лет. Словарь охватил все стороны жизни и

быта народа: природу, растительный и животный мир, правовые и этнографические отношения, предметы и вещи домашнего обихода, занятия и ремесла, инструменты—орудия производства, одежды, украшения и т. д.

Велики заслуги С. Айкуни в области записи образцов армянского народного творчества. В течение своей многолетней деятельности он записывал не только армянский фольклор, но и фольклор курдского народа. К изучению курдских песен он обратил внимание гениального композитора Комптаса. В четырех томах (II, IV, V и VI) «Эминского этнографического сборника» опубликованы материалы (записанные на местных наречиях сказки, песни, загадки, пословицы и поговорки, сказания и заклинания), собранные С. Айкуни.

Ему же принадлежат записи вариантов армянского народного эпоса «Сасна Црер» на мокском, шатахском, хлатском и араратском диалектах. Он первым издал самобытное армянское народное эпическое сказание «Мокос» (1896), познавательная ценность которого заключается в том, что оно связывается с событиями III—начала IV вв., периода распространения и установления христианства в Армении. «Мокос» имеет ряд параллелей как с житийной литературой, так и с эпосом «Сасна Црер». В противовес существующему в фольклористике мнению, что Мокос—это сам Григор Лусаворич (Просветитель), в работе он расценивается как образ, воплощающий огромную со-

здательную силу народа, выступившую против зла.

Отдельный раздел составляет анализ записанных С. Айкуни эпических песен «Аслап-ага», «Карос-хач», «Мокап Мирза», «Александрос» и т. д., которые рассматриваются как произведения светского содержания, без какого-либо пафоса средневековой церковной догматики. В исторических преданиях «Ован Оцнц» (1898), «Усеп-бек», а также «Анон Канона мал» («Сокровищница Анон-Канона», 1898), собранных и опубликованных С. Айкуни, выражена вера народа в свободную жизнь.

Заслуги С. Айкуни перед армянской фольклористикой неоспоримы. В течение своей собирательской деятельности он старался охватить все жанры устного народного творчества: фольклорные материалы, собранные им, представляют более сорока диалектов армянского языка.

Заслуженный фольклорист правильно понял роль сказителя и всегда принимал во внимание его индивидуальный характер, привычки и особенности повествования.

За время своей многолетней собирательской практики, С. Айкуни всегда сохранял подлинность и достоверность образцов народного творчества.

Деятельность С. Айкуни как этнографа и фольклориста-собираателя—неотъемлемое звено истории армянского народоведения.